




849

III. 5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1900

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1900 № 1

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԿ ՏԱՐԻ

երես

1 ՊՌՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ . . . . .	3	Յունո՛ն (վէպ):
2 ԳԵՄԻՐՃԵԱՆ, Գ. . . . .	35	Գարնան երգեր (բանաստ.):
3 ԿՈՊՊԷ՛րց Մ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ . . . . .	35	Ամպերից վեր (պարամած.բ):
4 ՄԻԻՍԷ՛րց Յ. ՏԷՐ-ԳԷՈՐԳԵԱՆ . . . . .	40	Դեկտեմբերի մի գիշեր (պոեմա):
5 ԵՍԱՅԵԱՆ, Մ. . . . .	48	Երազ (պարոկեր):
6 ԹԱԻԱՐԲԷ՛րԵԱՆ, Վ. . . . .	53	Աչերից մէջ (բանաստ.):
7 ՆՈՅՆԸ . . . . .	54	Ոչ (բանաստ.):
8 ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ, Ա. . . . .	55	Հոգեպաշտութիւնը և նորա մնացորդները:
9 ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԷ՛ՕՋԵԱՆ, ԳԷՈՐԳ . . . . .	63	Գեյմանական օղնութեան ընկերութիւնները Տաճկահայերի համար II.:
10 ՄԱՐ. ՅԱՐ. . . . .	82	Արորպետի՛—«Բօս-Նշիկ», «Շխնոց», «Ժառանգներ», «Բերտալի Առաքելը», «Թուրքմաջլիներ»:
11 ԱՐԱՍԻՍԵԱՆՑ, Ա. . . . .	91	Ժամանակակից Տեսութիւն.—Միջնակարգ դպրոցի խնդիրը Պարսկաստանում:
12 ՄԻՐՈՎ, ԳՐ. Ա. . . . .	95	Պր. Վէլիչկո՛ն և հաշտեցութիւնը:
13 ԽՄԲ. . . . .	103	Արաւրդակի գաւառի աղէտը:
14 ԽՄԲ. . . . .	106	Պարսերազմը Հարաւ-Աֆրիկայում:
18 ԽՄԲ. . . . .	117	Զանազան լուրեր:


Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография Т. М. Ротинянова, Гол пр., 4. № 41.

1900



# Մ Ո Ւ Ր Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1900

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1900 № 1

Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ւ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Դ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Տ. Մ. ԲՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография Т. М. Ротвианна Гол. пр., г. № 41.

1900

საქართველოს  
საზოგადოებრივი განათლების  
სამსახური

საქართველოს საზოგადოებრივი განათლების  
სამსახური

444 0072

Дозволено цензурою. Тифлиси, 18-го Января 1900-г.

საქართველოს  
საზოგადოებრივი განათლების  
სამსახური

საქართველოს  
საზოგადოებრივი განათლების  
სამსახური

# Յ Ո Ւ Ն Օ Ն

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑԻ

Ա.

—Թէ ինձ կը լսես, ճանապարհորդութիւնդ մի քանի օրով չետ կը թողնես, պաշտօնատէս կարգադրուած է այս շաբաթ շաբաթներ ու չափարներ ուղարկել Յունօյին բռնելու. անիծածը Զանգեազուրի ու Դարալագեազի սարուորների հոգին հանել է, ձի, տաւար, ոչխար օր ցերեկով չառաջ է անում, Արաղն անցկացնում, քշում Պարսկաստան ու ինքը գալիս ապահով կամ իւր ստանը նստում և կամ մեր գաւառի հայ դիւշերում օրական սասը մարդի մօտ հիւրասիրում:

Այս խորհուրդը սուրբ ինձ նոր Բայազիդի գաւառական վարչութեան ստորին ծառայողներից մէկը, երբ իմացաւ, թէ նոյն օրը մտադիր եմ պաշտօնական գործով Գեղամայ լճակի հարաւային ափի մօտերքում գտնուած երեսունից աւել հայ զիւշերը շրջելով, անցնել Դարալագեազի գաւառը և այնտեղից Զանգեազուր:

Մեր խօսակցութիւնը կատարուում էր քաղաքի հրապարակում՝ անց ու զարձոյների բազմութեան մէջ:

— Ընդհակառակն, իմ կարծեօք, ամենից անվտանգ ժամանակն է զնալու, մինչդեռ Յունօյին չեն բռնել, միջամտեց մի ուրիշը, Յունօյին, Ասորուած մի՛ արասցէ, եթէ բռնեցին, զլուխը մի սոխ կը շառնայ, Ալաբարլի կողմերից նկած աւազակախմբերը մեզ օր չեն սալ:

— Թողէք, Ասորուած սիրէք, բարկացաւ պաշտօնեան, գեպնի

տակն անցնի ձեր Յունօն, լոյս ընկած օրից՝ մեղանից ոչ մինը հարկոպէկի երես չի պեսել, իսկ թուրք աւագակներից ամեն ժամանակ ծառայողների բաժինը լիուրի կար, ամեն մէկս առաւօտաւոր լըլըլում էինք:

— Իսկ ինքը Յունօն էլ լըլըլում է, միջամտեց մի երրորդ ծանօթ:

— Հէնց այդ է, որ ինքն էլ քաղցած փորով ճաշին է քնում, ծանրածն իր խմբին է ուտացնում, ասում են՝ բոլոր ընկերներին հաւասար բաժանում է աւարը ու ինքը շարքարկ գրուանով զնում իւր պունը. իր կամքն է, թէկուզ անօթի սասկի, բայց մեզ ինչո՞ւ է զրկում: Աստուծով՝ այս երկու օրս թակարդը կընկնի ու մեր փորին թուրքերից իր կարգին կեր կը յիպչի, շեշտից ծառայող:

Բայց իսկապէս ինչն է Յունօյի աւագակութեան շարժառիթը, հարց պուրի ես աստիճանաւորին:

— Ասում են, իբր թէ հայերին թուրքերի պուած նեղութիւնից ազատելու ուխտը, բայց այդ մի պարտուակ է, հայ գիւղերում իշխանութեան աչքից ծածկուելու համար. իսկականն այս է, որ երբ իւր նշանածի համար ընկերին սպանեց ու փախստական ընկաւ, խումբ կազմեց, աւագակութիւն սկսեց, և միայն հայ գիւղերն են նրան պատուարողը, ապա թէ ոչ, վաղուց ձերբակալուած կը լինէր:

— Հոգուդ մեղք արած կը լինիս, մի՞թէ, եթէ ասես՝ ոչ միայն հայ գիւղերումն Յունօն ամենքի գլխի վրայ տեղ ունի, այլ և նոյն իսկ աշխատասէր թուրք գիւղերում, շարձեալ նկատեց գրագիր աղաչին մեր խօսակիցը և աւելացրեց. ի հարկէ, խօսքս այն թուրք շինականների մասին է, որոնք լուռը չեն իրանց ազգակիցների այն մեծամասնութեանը, որոնց բան ու գործն է իրանց հողերն անմշակ երեսի վրայ բարձի թողի ձգել, կամ չնչին գնով վարելու իրաւունքը մերձակայ գիւղերի հայերին ծախել ու մի հրացան ուսները ձգած՝ շաշտ ու չոլեր կտրել: Ես խօսում եմ վիզը արեառ, հողադործ, շառը քրտինքով իր ցամաք հացը ճարող թուրքերի մասին:

Ահա այսպիսի մարդիկն են, որոնք Յունօյի արեւոյն երդւում են, որովհետեւ շարքերը կը լինեն, որոնք Յունօյի պաշտպանու-

Թիւնը վաչկիւած չըլինին, Յունօջից լաւութիւնս րեսած չլինին, Յունօջի և ընկերների ձեռքով նրանց րաւարն ու ոչխարն աւազակների աւարառութիւնից րիկուած չլինին: Սէ աչլն և աչլն, ուր մինն ասեմ Յունօջի ազնութիւնից ու մարդասիրութիւնից:

— Գլուխը մեծ քարովն է րալիս էշ գիււղացին, նորից բարկացաւ ծառայօղը, որ իրան չգտգտանած գործի մէջ կոտորած գշալի նման մէջ է ընկնում. արենկեր շնն, կը լսէք էլի, թէ ոնց մի քանի օրից ծուղակը կընկնի:

— Արեմն մինչդեռ աչգ խեղճերի ու անգօրների պաշտպանի ոտքը քարին չի առել, ինձ անհրաժեշտ է շրտալի ձանսպարհօրդու թիւնս օր չառաջ վերջացնել, մանաւանդ՝ որ ինչպէս լսել եմ՝ Ղարաբաղի կողմից աւազակախմբեր են լցուել Գեղարքունու և Վաչոց ձորի լեռները. անս, երանի թէ աչգ ազնիւ դաշտաբաւան հերոսին կարողանայի ևս հանդիպել և ձեռքը սեղմել: Յամենայն շէպս՝ օրն աչսօր՝ ևս աներեութարար չանձնուելով Յունօջի պաշտպանութեանը՝ գնում եմ ասանց ուշանալու ձի նստելու: Մննք բարին, սրտոնների, մնաս բարև և դու, Լճգր Գերասիմիչ, դարձայ և թոթուցի ոտիկանական ծառայօղի ձեռքը, գիտեմ՝ որ քեզանից չի կախած, թէ չէ կը խնդրէի, կամ բոլորովին հանգիստ թողնէիր Յունօջին և կամ մի քանի օրով ուշ րացիր նրան ձերբակալելու հրամանը:

— Ներնութիւններդ քեզ համար պահիր, հասկացաւ և նեղացաւ ինձանից Ղազար Գերասիմիչը, բաց և աջնպէս ձանսպարհին ոչ մի րեղ չյաչտնես պաշտօնական դաշտիքը, ասաց և թեւս պինդ ձիգ րալով՝ աւելացրեց. չանկարծ աւազակը կը լսի ու կծիկը կը շնի, կը վախչի:

— Սթէ մի քիչ էլ բարձր խօսէիր, աւելի ծածուկ կը մնար դաշտիքդ, հեգնեց մեր նախկին խօսակիցը, կանգնել ևս հրտաբակի մէջ, պարծենալով ու գոտալով աշխարհին շաւ անում (հըռչակում) և ուգում ևս, որ Յունօջի ականջը չընկնի Յունօջին ևս չիմար կասէի, եթէ ամեն րեղ իր լրտեսները չուեննար:

— Մնչ կարիք ունի Յունօն լրտեսների մասին հոգս քաշելու, խօսեց մի երրորդը, րեսնում էք մեր շուրջը վխտող բազմութիւնը, այս հնտալիների ու ցնցօտիների մէջ կծկուած դեղձուկները, որոնք

մեծ հերաքրքրութեամբ լսում են մեր խօսակցութիւնը և, ըստ երեւութին՝ կարծես, սրտիս ու անհասկացողներ են, սրանք բոլորը Յունօյի պաշտպանութիւնը վայելած են և մազը մազից որոշում են մեր բերաններիցը շուրս եկած իւրաքանչիւր խօսքը: Հէնց սրանք քաւական են օրն այսօր ձեր պաշտօնական դաշտնիքը [Թոշունի Թեւով Յունօյին հասցնելու:

— Օճօ... այդ դիւշացիքը, այդ էշ կերած, էշ մեծացած անասուն շինականները, ապամները կրնորեց Լազր Գերասիմիչը, շրանք շար Դէպքերում իրանց չիմարական բացատրութիւններով խառնում խառնչորում են գլուխ եկած գործեր, ինչպէս որ անցեալները արին Յունօյի մասին մի արձանագրութիւն կազմած ժամանակ. «աստը գիւղ միախառնուած՝ բոբիկ ոտքերով [Թափուեցին քննիչի գրասենեակը և երգում հաւաստ անելով՝ պնդեցին, որ Յունօն անմեղ էր այն գործի մէջ. քննիչն էլ, իբրև թէ արդարութիւն պաշտպանելով՝ գործը [Թողեց ասանց հեփեանքի: Հաւաստեցում եմ ձեզ և չեմ քաշում կարծիքս յայսինքն. եթէ իմ ձեռքին իրաւունք լինէր և ես մի սրորին պաշտօնեաց չլինէի, բոլոր գիւղերում ես էլ զէկուցիս (գինուօրական ճնշում) կը հաստատէի, կը տանջէի, կը սեղմէի, մինչև որ Յունօյին կենդանի կամ մեռած արդարադարութեանը չըմապնէին:

— Այնուհետև ջուրն ու դեփը կը դար ու ոշորմելի գիւղացիներին կը տանէր, շեշտեց մեր երրորդ խօսակիցը՝ Դառնալով ինձ, քո ասած Սիսիանի կողմից եկած աւազակախմբերը գիւղացիների հողիները բերանները կը տային, մի լուծ եղը չէին [Թողնիլ, որ գեփինը շանգուորեն, մի քանի հատիկ շալ տան՝ իրանց անմեղ դաւակներին սովից ազատելու համար. այն ինչ Յունօն լոյս ընկած օրից, նրանց մի հար ծղօփը ոչ ով չի փրորել, մի գառը, մի ուլ, մի հաւ չի կորել: Զէ, Լազր Գերասիմիչ, չէ, Աստուած ձեր սրտովը շանի, Աստուած Յունօյի շուքն ամեն մի խեղճ, մի հալալ աշամորտու գլխից անսպաս անի:

— Եթէ իրաւ. գնալու միտք ունիս, Դարձաւ նորից ինձ պարոնը, էլ մի՛ ուշանալ, ամենաջարմար ժամանակն է, Տէր ընդ քեզ. թէ չէ հօ գիտես, որ մեր Լազր Գերասիմիչի [Թայֆայի մարդկանցից իէր չի գալ:

Նորից ձեռք փուր ծանօթներիս և շրտպեցի ձիաւորուել:

Բ.

Իմ ճանապարհորդութիւնս, ինչպէս ասացինք, ընկնում էր Քելամաչ ծովակի հարաւային ափի հայ գիւղերովը. սկսած Երանոս գիւղից՝ ես պիտի գործ ունենայի միմեանց գլխի մի կարգի ծովի ափին ընկած բոլոր գիւղերում. վերջին գիւղը Բասարգէշարը պիտի լինէր, որտեղից պիտի վերադառնայի մինչև վերին Ղարանլուխ ասուած լեռնաշաղտի վրայի գիւղը և այնտեղից անցնէի Վաչոց Ձորը, կամ Դարալագեազ:

Դարալագեազում ես պաշտօն չունէի կապարելու. այդ տեղից էր ամենից ասպահով ճանապարհը Սիւնիք, կամ Չանգեազուր անցկենալու, ուր իմ ուղևորութեան վերջնական տեղն էր: Տաթևի հռչակաւոր վանքն այցելելուց յետոյ՝ ես կրկին Դարալագեազով մտնելու էի Նոր Բայազիդի դաւառն և հանգիստ առնելու յիշեալ քաղաքում:

Երկու հոգի ենք ճանապարհորդներս. ես և իմ ծառան. մեր ունեցած մի-մի հրացանների վրայ աւելացրու ծառայիս հասարակ Դաշոյնը, և ահա կը լրանայ մեր կրած զէնքերի թիւը:

Աստուծոյ անունը սուսած՝ գնում ենք, բայց այս անգամ սիրտս հանգիստ չէ, զաւառական աստիճանաւորի հետ ունեցած խօսակցութիւնս ինձ վրդովել է. ինչ կը լինէր արդեօք իմ Դրութիւնը, եթէ յանկարծ մի ձորակի միջից, կամ մի բլրի երևից՝ ինքը Յունօն տռաջս Դուրս դար և յայտնէր իր ով լինելը, Դիցուք, ասում են՝ լաւ մարդ է, բայց չէ՞ որ աւազակ է և աւազակի գլխաւոր հակառակորդը ծառայոյ՞լ Դասակարգն է, մաքուր հազնուած հարուստներն են. մի խօսքով ասենք՝ գիւղացուց արտաքուստր զանազանուոյ, գիւղացու լեզուով՝ աշաներն են: Այ բարձով, ես էլ հազուստով և պաշտօնով վերջիններիս շարքիցն եմ, ուրեմն՝ և Յունօցի աչքի գրողներից մինը. հիմի ես ինչ կանեմ՝ եթէ զար ու առաջս կտրէր: Ախ, երանի թէ մի ուղեկից, զոնէ, պապահէր և այս խառնաշփոթ մտածմունքներից ազատուէի:

Աստուծոյ ողորմութեան Դուրս բաց է եղել, ցանկութիւնս Քարձրեալի Աթոռն է հասել: Նոր-Բայազիդի կամուրջը նոր էինք անցել, ձորից նոր էինք Դաշոն ընկել, յանկարծ երևներիցս մի ձիու ոսկնածայն եմ լսում:

—Բարի ծանապարհ, աղանջ, խոնարհաբար գլուխ իջեցրեց կող-  
քիցս մի գիւղացի:

—Աստուծոյ բարին:

Գեղջուկը հագնուած էր հասարակ, բայց մաքուր և առանց  
կարկապանների, որ հազուագիւր բան է տեղական ժողովրդի մէջ.  
աժանագին մի շալէ չուխաց, մի կապոյտ կտաւէ արխալուշ, ուրբե-  
րին հասարակ լափչիններ, շալէ անդրավարիկ և կարմիր ոչխարենի-  
գլխարկ: Ահա նրա սարսաղը: Հագուստին անհամապատասխան էին  
սակալն անձանօթի կողքից կախ թանգագին բեփօլերը, նրա ար-  
ծաթապտու գաշոյնը, ոսկենկար սուրը և կրծքի վրայ բազմապատու-  
կութեան խաչաձև նշանի նման աջ ու ձախ ձգած պատրոնտաշ-  
ները՝ ծայրէ ի ծայր շարուած փամփուռչոններով, իսկ թամբի աջ ու  
ձախ կողմերից ամրացրած էին երկու հրացան նոր սիսփեմի՝ որոն-  
ցից մէկը 16 անգամ իրար ետեւից կրակուող, մագաղինկա, միւսը  
պիպոլի, կամ ինչպէս առհասարակ ժողովուրդն է անուանում՝ պ-  
նալու:

Եթէ չլինէին ձիաւորի վերոյիշու ազնեքերը, իմ աչքումն նա  
մի հասարակ գիւղացու նշանակութիւնից վեր արժէք չէր ունենալ,  
ըստ որում՝ ոչ հեծած, անշնորհք, բարակ-մարակ, բրդոյ մաքակը  
և ոչ ինքն իրան արտաքինով աչքի ընկնելու ոչինչ չունէին. չոր  
ու ցամաք, նեղ երեսով, փոս ընկած աչքերով, ցանցաւ, կարծ  
ընչացքով և մօրուքով, մանր աչքերով, արևի սակին շատ  
քարշ գալուց՝ բնական զոյնը կորցրած, խանձուած Դէմքով,  
25 սարին հազիւ բոլորած մի երկրասարդ էր նա, որի բարակ ու  
սուր քթից եթէ բռնէիր, հոգին կը փչէր:

Ձիաւորին աչսպիսի մանրամասն զննութիւնը եղաւ իմ կող-  
մից այն ժամանակ, երբ մարդը ողջոյն սալուց յետոյ՝ կրնկեց իւր  
մալուսին, հաւասարուեց հետս և շատ քաղաքավարութեամբ գլը-  
խարկը վերցրեց, երկու անգամ գլուխ իջեցրեց և ձիու սանձը  
պինդ քաշելով՝ որ ինձանից յառաջ չընկնի, խոնարհադէմ ժպիտով  
երեսիս նայելով՝ կամաց ասաց.

—Համարձակութիւն չլինի, աղանջ, ուր բարով, յառաջ բարին:

Այս խօսքի հետ նա ամուր թափ սուր և իւր ձիու սանձը բար-  
կացաւ վրան, որ ինձանից յառաջ չընկնի: Մալուկը, կարծես, չէր ու-

զու՛մ հնազանդիլ տիրոջը, աշխատում էր անուարձառ յառաջ անցնել:

— Դէ, սադկիս Դու, սաստեց երկրասարդն իւր ձիուն և սանձն աւելի ձիգ տալով, գոչեց. անիծած, չափդ ճանաչիր, ամեն ժամանակ հօ չի կարելի ձիաւորի առաջ կտրել. Կեղ կայ՝ աւլան կը Դառնան, առաջ կը կտրեն, տեղ կայ՝ մկան պէս, պոչն իրան կը քաշեն, ծակը կը մտնեն: Եւ մարդն աչքով ինձ ոտից գլուխ միանգամից չափելով՝ երկու քայլաչափ չետ մնաց և կրկնեց իւր հարցը.

— Համարձակութիւնս կը բաշխես, աղայ ջան, ես հարցրի, թէ հրամանքդ ո՛ւր ետ դնումս:

Հարցմունքն, ինչպէս պեսաք, շատ համետ, բայց եթէ Դուք լինէիք իմ տեղս, ինձանից պակաս չէիք սարսափիլ: Այդպիսի մի թրջուած հաւի նման կուշեկած չնչին արարածի մէջ այնքան կրակոտ աչքեր, այնպիսի արծաթեայ սրահնչիւն և զարզանդելի ձայն. բոլորովին չէին համապատասխանում հասարակ սովորի արտաքինին:

Որպէս զի Դիրքիս ու աստիճանիս պատիւը պահած լինիմ, որպէս զի անվեհերութիւնս և վեհութիւնս ոտնադակ չտամ, Դէմքս խոժոռեցի, աչքերիս արհամարհական արտայայտութիւն տուի, յմտքերս ցած թողի և գուռզարար՝ երես հակառակ կողմը Դարձրած՝ պատասխանեցի:

— Գնում եմ Երանոս գիւղը:

— Իրաւունքը հրամանոցդ է, աղայ ջան, Աստուած բարի ճանապարհ տայ, ես քո ոտի հողն ու մոխիրն եմ, բայց ակնար ես տեսնում եմ, որ թէ Դու, թէ էս իմ կշբայրս—հրամանոցդ ծառան՝ երկուսդ էլ օտարական էք, թէ չէ այս երկիրդալի ժամանակին երկու հողով մէն-մենակ ձամբայ չէիք Դուրս գալ, մի քիչ կը քաշուէիք:

— Ամենից պիտի վախենայի ու քաշուէի և ընչի՞ համար:

— Յունօյի անունը չէք լսել, Յունօյի, Յունօյի, կրկնակի շեշտեց օտարականը:

— Յունօն միս ու արիւնից է, թէ քար ու պողպատից, արհամարհական պատասխանով վերուած՝ գլխովս նշանացի ցոյց տուի իմ և ծառայիս հրացանները:

— Հապա եթէ Յունօն ձեր երկու հրացանից աւելի լաւերն ինքն ունենար, բեւօլը կողիցը կախած լինէր, թուրն ու խանչալը

կապած, 100 պարտոն խաչմէրուկ կրճքին փռուած ունենար, ինչ կանէիք:

Անիրաւն ընչացքի փակին ժպտալով՝ աչքով ու նշաններով բոպէաբար անխօս իւր զէնքերն ինձ ցոյց փռեց և աւելացրեց. հէնց ասնիք, թէ մի բուրձ շանակ էլ չունենար, որ պանիր կոպորէր, ու գար, ձիու 7 գլուխը բռնէր ու էնքան շտապով ուսիցէր էր թանգագին, երեսայ վախացնելու թուանքի պէս խաղալիքն ուսիցէր էնպէս բոպէի մէջ վերցնէր, որ շու էլ չհասկանայիր, ու մինչև քօ ծառան աչքը կը թերթէր, ձեռքը կը բարձրացնէր՝ իր ծոբեր սպանելու թուանքը զլիսիցը հանելու, Յունօն կայծակի պէս քեզ բաց թողար, մօտենար ծառայիդ և նրա զէնքն էլ խէր, ինչպէս քօ շուրէր արեց, ինչ պարասխան կը փայլիր: Ներիր, աղանջ, ես օրինակ էի ցոյց փալի, աւելացրեց նա:

Այլ ևս ինչ պիտի պարասխանէի, անիծածը միջոց փռեց, որ անիւիքս մորածէի, բերանի խօսքը շեռ չէր վերջացրել և արդէն ևս ու ծառաս զինաթափ էինք եղած: Ճարս կարեց՝ ասացի. ևս լսել եմ, որ Յունօն մաքուր մարդին, իր գործ ու աշխատանքի գնացող հայ-քրիստոնէին վնաս չի փալիս, վաստակաւոր զիւլացիներին աներևոյթ հրեշտակի պէս պաշտպան է, սուրբ Սարգսի նման նեղութիւնի մէջ ընկածների թե ու թիկունքն է. էրպիտի մարդի ճանապարհը թող փունջ մանուշակ լինի, երբ որ գայ՝ իմ աչքիս լոյսն է, կեանքս չեմ խնայիլ, իրան կընծայիմ:

— Հէնց ես էլ էր յուսովն եմ էնպէս երկիւղալի ժամանակն առանց ընկերի ճանապարհ գնում. էս զէնքերն էլ աչքեր կապելու համար եմ վերցրել. ախար միայն Յունօն չէ, շաշտերը լիքն են պարսպ ու անգործ հաւագողեր, որոնք իրանց արհեստ են շինել խեղճ մարդկանց շատը քրտինքն ուտել, զէնք չունեցողների ծոցերը շտապարկելու իրանցից աւելի քաջ ու կարիչներից զլուխ առնել կորչել, գնալ իրանց կանանց առաջին պարծենալ. այ, էր կարգի փչերի համար է իմ զէնքը, թէ չէ Յունօցի համար եղած՝ չեղած: Ես լսել եմ, որ Յունօն սաստիկ բարկանում է մեր բոլոր զիւլացոնց վրայ, որ ճանապարհ գնալուս զէնք չէ, մի հասր դաւազան էլ չեն ձեռք առնում, որ աշուէս ու գայլ պարահած ժամանակ՝ վախաց-

Նեն: Հն, աշնայ, ասու՛մ են՝ Յունօն իր կեանքի ապահովութեան համար զէնք պահողներին սիրում է ու...

— Իսկ շու ռը ես գնում, ընդհարեցի ուշեկցիա քարոզները:

— Մառադ էլ Երանոս եմ գնում, աշայ ջան, ասաց նա, ու թէ արժան կանես քեզ ձանապարհին ընկերանալ, շար ուրախ կը լինիմ. մի ծառայ մի՛ ունենալ, երկու ունեցիր, շարից հօ վնաս չի՞ դալ:

— Ի՞նչ կայ՝ երկու չլինինք, երեք լինինք, քարցրութեամբ հաճութիւնս յայտնեցի և հարցրի.

— Անունդ ի՛նչ է, սր սեղացի ես, գործդ ի՛նչ է:

— Անունս, քեզ ծառայ Նադօ է, ինքս էս ծովի ափի դիւշերի մէկիցն եմ, գործս շողառութիւն է. ձմուան մէջ, դարնան բերանին, տաւարի կերը պակասած ժամանակ, երբ խոտ ու դարմանը թանգանում է, զիւղացիք աշխատում են ազատուել իրանց լլար ու պառաւած անասուններից, էժան գնով ծախում են. մենք էլ գնում ենք առնում, առաջուց՝ աշունքը շիզած ու պահած խոտով մի տեսակ գարունը հանում, յետոյ քշում ենք արօրալից սարերը, մտի ենք բերում (զիրացնել) ու աշնանը տանում ենք Թիֆլիս, լաւ գնով ծախում ենք մտով առուտուր անողներին:

— Փոքր ինչ տաժանելի, բայց արդար վաստակ է, հաւանութիւն տուի և լսեցի: Երկու էր լուութեանս պարճաւը. նախ՝ ուղում էի գլուխս ծանր պահել ռամկի առաջին, որ պատիւս տեղը մնայ: Այլպէս՝ դարաւոր ստրկութեան տակ ճնշուած, գազանարարօց աշաների հրամաններին մանկութիւնից հլութեան վարժուած սոգէտ դիւղացին երբ տեսնում է, որ իրան նշանակութիւն են տալիս, չափը կորցնում է և ամենատեսակ պարշաճավայելութեան սահմանն անցնում: Յոստիսս աւակարեաց չեմ, անձամբ փորձել եմ: Բկրորդ պարճառն ինքն ըստ ինքեան հասկանալու էր, նրա կրակոտ աչքերից արձակուած շանթերն ռւմ չէին լսեցնիլ:

Մարդը զգաց իմ անել շրութիւնն ու երկշիմի վարմունքն և խղճաց, կամ խոհեմութիւն համարեց խօսակցութեան թեւը կարճել հետո: Աւելորդ է ասել, թէ զէնքերս վալուց արդէն վերադարձրել էր: Նա թողեց ինձ ու ընկերացաւ ծառայիս և նրա

հետ անծայր ու անվերջ քչփչոցների մէջ մտաւ, ծանրաքայլ որոշ հեռաւորութեամբ հեռուելով ինձ:

Երկար ժամանակ ականջս կախ էի թողել և անձանթի կողմից ոչ մի խօսք չլսեցի. ծառաս էր միայն իւր մեծախօս չափազանցութեան պարկը բաց արել:

Մտաւոյիս այդպիսի սնորհապարծութիւններն ինձ քաջ ծանօթ էին և անհերքելի: Առաջին զիւլացին չէր, որի առջև ծառաս ինձ եօթներորդ երկինքն էր հանում, բարձր պաշտօններ էր յատկացնում, նահանգի մէջ՝ նահանգապետից յետոյ՝ ամենազդեցիկ և հզօր մարդն ինձ իր շինում. պայուել, պայտել, շքանշաններ, ըստ ցանկութեան, շաւղել, մինչև Սիրիւրի սառնամանիքն աքտորի շարապարտել, կախաղանից մահապարտին ազատել, այդ բոլորը, ծառայիս ասութեամբ, իմ լիազօր արտօնութիւնն էր:

Ետք անգամ էի ծառայիս վրան բարկացել և հրամայել, որ վերջ տաց իւր մեծախօսութիւններին ու սրերին, բացց նա շարձեալ իրանը շարունակում էր:

— Վնաս չունի, սէր իմ, արդարանում էր ծառաս, ասենք՝ կը լինին մարդիկ, որոնք իմ խօսքերս քամու բերած, քամու տարած կը համարեն, բացց զիւլացիների մէջ էդպէսները քիչ են, զիւլացուն հեռուից փչած տիկը ցոյց տուր, կը կարծի, թէ անմահական զինով լիքն է. նա շունդ կը Դառնաց, քամակիցդ կը վաղի, որ սիրուդ գութ ընկնի, մի երկու բաժակ իրան խմացնես. զիւլացին որ խմացաւ. թէ Դիմացի մարդն իր սէս մի հասարակ Աստուտ տրեւծած է ու ոչ թէ իր զլխին չաքուչ թակոյ, կուզի նրա զլխին նստել. ինձանից քեզ խրատ չի հասնիլ, աղայ, բացց Դու լաւ չես անում, որ զիւլացիներին բերում ես կողքիդ նստացնում ու հասար ընկերի սէս հարը զրոյց անում, էդ իմ շնորհքն է, որ նրանք իրանց չափը չեն կորցնում. ես նրանց առաջուց ասում եմ, թէ Դու իրանց փորձում ես, որ գլուխը մոռացողներին վերջը բռնել տաս ու երկրից քշես:

Մտաւս մասամբ իրաւունք ունէր, մի երկու տեղ իւր մտապարծութիւնով մեզ մեծ վրանդից ազատել էր:

Չեմ կարող վճարար ասել, թէ որքան զին ունեցան օտարականի աքրում ծառայիս պարծենկոտութիւնները, այսքանը նկա-

տեցի, որ մարդու մէջ երեւեցող անձնապատրան վտրահութիւնը չափաւորուեց. բոլոր ժամանակ՝ ամեն շէպքում՝ նա շրտալում էր պարտ ու պարշաճ ծառայութիւն մատուցանել ինձ, և եթէ ասեմ, որ մի րեսակ թիկնապահի պաշտօն էր կատարում, չափազանցացրած չեմ լինիլ:

— Համարձակութիւնս կը բաշխեմ, աղնչ, մօտեցաւ նա ինձ մի ձորաբերանում, ձիուդ գլուխը մի քիչ քաշած պահիր, ես ուզում եմ էտրիդ քեզանից յառաջ ընկնել:

Եւ Նադօն առանց իմ հրամանին ստասելու, ընկուէրը պատենից հանեց, ձեռքն առաւ ու ձորն ի վայր ներքեւ սլացաւ:

— Աղնչ, ձայն րուեց ծառաս Նադօյի հեռանալուց յետոյ, էս մարդիցը լաւ հոս չի գալիս, պռօշներս ցամաքեցին սուս սուս քամի անելով, բայց խելքս չի կտրում, թէ ասածներս գլխումը նստած լինին:

— Բերանից խօսք բաց թողեց, հարցրի ես:

— Ո՛չ, ձէն ու ծպրուներ կտրեց ու պապանձուեց, ոչ լաւ ասաց, ոչ վար, բայց շէնք ու շնորհքից ես ուրիշ նկատեցի. րեսար՝ հնց ական թօթափել մեր հրացանները թուցրեց. ես վախում եմ՝ թէ սա հէնց ինքը Յուն...:

Ծառայի խօսքը բերանումը սասեց, նրա երկիւղն էլ աւելորդ էր, գոնէ այն րոպէի համար պէտք չեկաւ. Նադօն վայրկենական երեւաց ձորակի միւս թմբում և ձայն րուեց.

— Եկէք, աղնչ, ոչինչ չկայ:

— Ի՞նչ պիտի լինէր, Նադօ, որ առաջ ընկար, ի՞նչ կար, հարցրի ես:

— Էս ձորակումը, գլխիդ մեռնիմ, պապասխանեց Նադօն, մի մաղարայ (քարայր) կայ. ճանապարհ կտրող, միան սիրտ ունեցող աւազակներն այրի առաջին ընկած մեծ քարի ետեւը կտրուի պէս մարալ (յարան) ևն մտնում ու հէնց որ իրանց խելքը կտրած օրս ևն րեսնում, վրայ ևն րալիս ու կողտպում: Յս զնացի որ րեսնեմ, թէ մեր ճանապարհն ապահով է, թէ չէ:

— Ի՞նչպէս վտրահացար, հապան, դու անձդ րորձանքի ևն թարկել. աւազակները կտրող էին զնդակով քեզ մնասել:

— Քեզ պէս րիրոջ շուքը գլխիցս թող անպակաս լինի, աղնչ:

ջան, աչքերը ցած թողալով՝ ասաց Նաշօն, հարիւր հրացան վրաս կրակեն, հարիւր թուր ու խանչալ երեսիս խաղացնեն, աչք չեմ ճպիլ, վախկոտ աւագակը որ Կեննի, թէ քո ձեռին կրակ (հրագէն) կայ, միան ծակը 1000 թումանով կառնի ու մէջը թագ կը կենաց։  
Նաշօն շարձեալ անցաւ ետևս և ընկերացաւ ծառայիս։

— Աշնչ, Երանոսն էս թմբի վրայ ընկած գիւշն է, որ երեւում է, շուք համեցէք էն ճանապարհը բռնեցէք, գնացէք, ես պիտի սարը բարձրանամ, մեր փաւարի մի մասն էս լեռան գլխին է, շրտապով մաքնացոյց արեց Նաշօն հանդէպի գիւշը և գլխարկը հանեց, խոնարհութեամբ դուրս իջեցրեց ու թեքուեց սարն ի վեր։

Գ.

Պաշտօնական գործերս ստիպում էին ինձ ամէն մի գիւշում առնուազն երկու երեք ժամ մնալ, իսկ Երանոսում մնացի մի գիշեր։

Նոր Բայազիդից մինչև Գեղամայ ծովակի արևելահարաւային եզերքի մօտ դրնուած Բասար—գէշար գիւշը ձիաւորն երկու օրումը հանգիստ կը հասնի։ Ըստ աւանդութեան՝ Բասարգէշարը նախկին Վասակաշէն յայտնի աւանն է։ Այն րեղ է վերջանում Նոր-Բայազիդի գաւառն և սխում Սիւնեաց աշխարհի սահմանը։

Պաշտօնիս պահանջածին համեմատ՝ ես չորս օրումը Բասար-գէշար հասայ և այդ չորսից երեք օրը՝ ամեն անգամ՝ գիշերածս գիւշից շուրս եկած ժամին՝ մեզ ուղեկից էր մեր ծանօթ Նաշօն։

Վարձես՝ Նաշօն հեզս ժամադիր էր եղել և պայմանաւորուել, որ իւրաքանչիւր զնացածս գիւշից մի ասպարէզ մնացած՝ բաժանուի ինձանից և թեքուի մերձակայ լեռը, իսկ գիւշից շուրս գալուս՝ նորից մի ասպարիզաչափ հեռաւորութեան վրայ հեզս ընկերանայ։

Իմ զարմացական հարցին, նա միշտ ծամ ծմեղով այս կարճ պատասխանն էր պալիս.— երևի, իմ ճակատին գրուած է, որ քո զեղերից շուրս եկած ժամանակ՝ ես էլ սարումն իմ փաւարին ականած լինիմ ու յետ գալուս քեզ հանդիպեմ։

Նաշօնի ասելով՝ ինքը 400-ից աւել սև արաւար ունէր ամբողջ ծովափնեաց լեռնաշղթայի կտորարներին արօրի հանած, որոնց րեսնելու շրջանն էր այժմ ինքը կտրարում։

Մի հանգամանք ինձ աւելի էր կասկածելի անում Նաշօնի խօս-

քերի ճշմարտութիւնն և անձնաւորութիւնը: Մեր երկու երեք օր-  
ւան ճանապարհորդութեան մէջ՝ Նադօյի հետս եղած միջոցին՝ ոչ  
մի անցւորական, լինէր նա հետեակ, կամ հեծեալ, մեզ չէր մօտե-  
նում: այսինքն՝ ոչ թէ չէին պատահում, ընդհակառակն՝ ինչպէս  
հաշորդակցութեան ամենայարմար ուղի, ամեն ընդէ երթեակն ան-  
պակաս էր՝ բայց ամէնքն էլ՝ կամ հեռուից մեզ տեսնում և ճանա-  
պարհները ծռում էին և կամ Նադօն ինքն էր ձին աշտանակում,  
ինչ որ հետները փոխում և գնացքներն այլ կողմը դարձնում:

— Ախար, այ Նադօ, ինչ իրաւունք ունիս Աստուծոյ ճանա-  
պարհորդին նեղութիւն տալու:

— Նեղութիւն չէ, գլխուդ մեռնիմ, ամէն մարդ պիտի իր շփը  
ճանաչի. սրեւր որ ելնի՝ աստիւերը կը խաւարին, կարճ կտրում էր  
Նադօն ամեն ժամանակ:

Ասացի՛ որ երկու օր մենք վայելեցինք Նադօյի ընկերակցու-  
թիւնը: Երրորդ օրն արեւը ճաշուայ տեղը նոր էր հասել, երբ մենք  
շուրս եկանք իջևանածս զիւղից և հանդիպեցինք Նադօյին:

Նա ձին լցրած՝ լեռնաթմբից ցած սլանալով՝ հասաւ մեզ և  
ըտր իւր սովորութեան՝ գլխարկը հանած՝ ողջօջն փալուց յետոյ՝  
հե ի հե, կցկուր խօսքերով այսքանը կարողացաւ ասել.

— Աղայ ջան, մննս բարեւ, մենք էլ չենք տեսնուիլ, ես շտա-  
պում եմ, աեւ պակասը ներիր:

— Ի՞նչ կայ, Նադօ, շտա ես շփոթուած, հարցրի ես նրանից  
ոչ պակաս վրդովուելով:

— Կը ներես, գլխուդ շուրքան, որ երեք օր է, քեզ գլխացա-  
ւանք եմ տալիս. մեղքս ինչ թագցնեմ, ես շտա էլ Աստու գառը  
մարդ չեմ և հրամանոցդ հետ ոչ թէ զրուցաընկեր չեմ, ետեիցդ  
էլ որսկան շտն նման լեզուս կէս գաշ կախ քաշ գալու արժանի չեմ:

— Ա՞յլ ես, ինչ մարդ ես, Նադօ, քեմքս խոժոռեցի և հարց փուխ:

— Ես, աղայ, էն մարդի քեռու սղէն եմ, որի անուանով մեր  
քաղաքի մէջտանում կրպէի սղայ Նազարը քեզ ուզում էր վախաց-  
նել ու դու էլ բերնին եկար ու ասացիր, որ ուրտա կը լինէիր, եթէ  
նրան տեսնէիր:

— Ի՞նչ Նազարի մասին է խօսքդ, Նադօ, ես ոչինչ չեմ յի-

շում, կամ ինչ մարդ է ասածդ. այդպէս մարդ ես չեմ ճանաչում, հարց տուի Նադօյին:

— Իմ ասած մարդս բէշարայ (Թշուառ) Յունօն է. էհ, աղանջ, ոչ Յունօյին, ոչ մէկէլներին ինչ կը ճանաչես, քաղցած զիւրօղ, մեր աղաների շուներին հացափոր աչբ Թափողները՝ մի քանի տարի Թիֆլիսի բաղնիսներում՝ քիսաշութիւն ու ջամադարութիւն <sup>1</sup> են անում, մի քանի շահի փող են ճանգում, գալիս են մեր քաղաքում հացի ու անունի տէր շառնում ու անունները փոխում, Մկօյի Գիօն՝ Գրիգոր Միկիպիչ է ասուում, Վրթէի Օվէն՝ Իվան Վարլամիչ, Կրպէի տղայ Նազարը՝ Լազր Ղարասիչ: Գրանք մի քանի խօսք էլ Մայամ, Թվայամ են սորվում, մի երկու տարի էլ շիւանխանէքանց շուներումն են քաշ գալիս ու մեր զլխին պոպոք (ընկոյզ) են կոտորում:

— Ախ, Լազր Գերասիմիչի մասին է խօսքդ, որ ինձ զգուշացնում էր աւազակապետ Յունօյի համար:

— Հասն, հէնց քիսաշի Կրպէի տղայ Նազարն եմ ասում, որ քեզ պարմում էր, թէ էս շաբաթ Յունօյին չաթելու (ձերբակալել) են:

— Դու, ուրեմն, այն տեղ էիր մեր խօսակցութեան ժամանակ:

— Նորէ կանգնած՝ ախանջներիս ծակերը լէնացրել էի ու լսում էի, թէ հրամանքդ ինչպէս Յունօյի համար լաւ խօսեցիր, ուղեցար ձեռը բռնել ու Կրպէի Նազարի խօսքերի վրայ քիթդ բարձրացրիր ու արխէլին ձիշ հեծար, ճանապարհ ընկար: Ձեռաց ղուլը ձիս նստեցի, ետեւից ընկաց, որ չլինի, թէ հրամանոցդ հաս մաղին քամի շիպչի. փնօք իմ Սարժուն, որ մինչև էտեղ շուաքդ տրորող չեղաւ, ողջ առողջ, անվնաս Բասարդէշարու ճանապարհի մեծ բաժինն եկել ես, բայց ներողութիւն կանես, աղայ ջան, որ հիմի էլ չեմ կարող ղուլըղըղ կանգնել, ոտիս տակին կրակ է վառում, պիտի բաժանուեմ: Վնաս չունի, Սարժում՝ քեզ ոչինչ նեղութիւն չի գալ, աչքեր կը լինին, որ վրայիցդ գիշեր ու ցերեկ անպակաս կը լինին:

— Բայց, Նադօ, ես քո խօսքերիդ մէջ պարզութիւն չեմ տեսնում, լեզուիդ տակ ինչ որ բռուեր են պարուում, ինչո՞ւ ես կմկմում:

<sup>1</sup> Թիֆլիսի բաղնիքների ծառայողները, կարելի է ասել, բացառապէս Նոր-Բաղադիցի քաղաքացիք կամ գաւառացիքն են: Ծանո. Հեղ.

— Ինչ կմկմոց, աշայ ջան, ես քեզ պարզ, աշկարայ ասեցի՛ որ Յունօջի քեռու տղան եմ, գնացել էի քաղաք՝ համբաւներ իմանալու: Կէս ժամ չի լինիլ՝ սարում ինձ խարար հասաւ, թէ Կրպէի նազարի ասածը կատարուում է: Էս իրիկուն՝ մութը որ գետինն առնի, մեր գաւառի օգնականը պիտի մյնի Ա. դիւլը, որտեղ մեր Յունօն է ու չափարներով ու շագախներով տունը շրջապատի: Ես հիմի շտապում եմ Յունօջին խմաց տալու, որ թողնի, հեռանայ, որ չլինի, թէ անեցոնցն ու երեսէքանցը մի փորձանք պատահի:

— Իսկ Յունօջի մասին երկիւշ չէ՞ս անում, որ բռնեն:

— Յունօջին, ջաշացի բուկը գցես, աշայ ջան, կազարուի. հազար ձիաւորի միջից Դուրս կը պրծնի, մեր ցաւը նրա խորոտիկ, ջահէլ անեցինէ (կինը) ու երկու Սարուծոց տուած թխլիկ ու փափլիկ աշունակի Դոխերը (ձագեր): Ասենք՝ երեսէքանցն ոչով վլաս չի տալ, բայց անեցու համար՝ չարն սատանէն իր չարութիւնը կանի, մարդիս ոտքը չար ճանապարհին աւելի ուրախ կը փոխուի: Հախ Աստուծու, անողն իրաւունք էլ ունի. որ էտրեղից տաս՝ Պետրպոլքում Դուս գաս, արարած աշխարհքումս Գիւլօջի հատը չկայ. նրա չախմուր (խարտեաշ) աչքերը Մասիսի գլխին՝ Նոյեան տարւանից Դէսը Դիզուած ձիւնը կը հալցնին, ես էլ ի՛նչ կարող եմ մեղքի ճանապարհը սիրող տղամարդ աշամորդուն մեղ Դնել:

— Ի՞նչ, մի՞թէ շապ գեղեցիկ է Յունօջի կինը:

— Հապս որ խորոտիկ չլինէր, պատասխանեց ինձ ՆաԴօն, Յունօն ընչի՛ պիտի հիմի տանից տեղից աւարայ ընկած լինէր:

— Հապա ես լսել եմ, որ Յունօն Ղարաբաղի կողմից եկած աւազակների ոտքերը կտրելու համար է լեռներն ընկել:

— Գու էլ ուշորդ ես, աշայ, Յունօն չէր կարողանում համբերել, երբ որ լսում էր, թէ Սիսիանից եկած գողերը հայ ու թուրք գիւղերի տաւարը, ոչխարն ու ձիանքը փախցնում են ու ժողովրդին էլ նեղացնում են. նա մտքումը Դրել էր գնալ, չափաւր գրուել ու խնդրել, որ ինչ տեղ աւազակներ կան, իրան շրկեն բռնելու: Հէնց էր մտքի վրայ էր, որ Գիւլօջին փախցնելու ժամանակ՝ մէլիք Մրտօջի տղի արեւը սև արեց ու գործը խճճուեց. ի՛նչ պտուղ է մէլիք Մրտօն, որ իր երկու աչքի սև ու սպիտակը խաւարագնողից որդու

արիւնը չհանած՝ սիրտը հովացնի: Հէնց էն օրը Յունօն համ կնկաք  
 փէր Դարձաւ, համ չօրերն ընկաւ:

— Հետաքրքիր պատմութիւն ես անում, սիրելի Նաշօ, ասացի  
 ես. էսօր երևի օգնականը չի դալ, գալ էլ, նա իմ լաւ բարեկամն  
 է. չեմ թողնիլ՝ որ շրտապի: Դու մի քիչ ժամանակ էլ մեզ ընկե-  
 րութիւն արա, Յունօցի գլխով անցածներէի հետ մեզ ծանօթացրու,  
 չեմո՞չ՝ փէր ընդ քեզ:

— Դուրբան արեւիդ, քո հրամանն ինձ համար աւելարանի-  
 խօսք է, բայց վախում եմ՝ ուշանամ: Էսօր մեր Յունօցի համար  
 բազէն ոսկի է. թէ որ, բերանիցս Դուս գալ, քամին փանի՝ նրա  
 փնեցու մախմուր թշերին մէկի ձեռը քսուի, կամ չար աչքով երե-  
 սին մտիկ փան, իմացած կաց, որ վաչն եկել է՝ մեր երկրի սիրուն-  
 ներին փարել, ամենքին մէկ-մէկ եօթը կողպէքի փակից Յունօն  
 Դուրս կը հանի, սարերը կը քաշի, շուն ու գէլերու ձեռը կը գցի-  
 ու խեղճ անմեղների պատիւը կը շինի էս հողը, որ ուրիշներու փակ  
 փորում ենք:

— Մի՞թէ, ուրեմն, Յունօն կանայք էլ է չափշտակում, այդ  
 վնաս բան է:

— Աստուած չանի, աւճ, իր փնեցուց Դուրս՝ բոլորը Յունօցի  
 բերնի սրբութիւնն են, իր մէր ու քուրերն են, նա իր կեանքի-  
 մէջ ոչ մէկ օղլուշաղի վրայ մինչև օրս ոչ չար աչք Դարձրել է, ոչ  
 կը Դարձնի, համա Յունօցի աչքը չի փանիլ, որ ուրիշների փնե-  
 ցիքը, մէր ու քուրերը նամուս պահած մնան ու իր Գիւլօցի  
 անունը կորուրի: Յունօն ինքը հեռու կը քաշուի, ու իր երեսուն  
 ձիաւորներին իրաւունք կը փայ իր Գիւլօցի վրէժն ուրիշներից  
 հանելու...

— Սիրելի Նաշօ, ընդհատեցի ես, քան թէ երկու ժամ է  
 ծոծուացնելով՝ թանգաղին ժամանակդ զուր կորցնում ես, աւելի  
 լաւ չէ՞ Յունօցի պատմութիւնը կարճ պատմես ու քշես, գնաս:

Նաշօն փոքր ժամանակ լուս էր, նա փափանման մէջ էր, նա  
 անշաղար աջ ու ձախ խլիղորում էր, երևի, վախում էր՝ ուշանալ,  
 օգնականը վրայ հասնի և ինքը միջոց չունենալ Յունօցին օգնու  
 թիւն հասնելու. Նաշօցի ասու թեամբ՝ Յունօն մի շարքածից աւել է՝ մի-  
 քանի ընկերներ հետն առած՝ իր խորերն է հնձում:

Որքան և լսել էի, թէ Յունոն անխփիր հայ ու թուրք զիւղերում ընդունուած է, բայց այս վերջին հանգամանքը խիստ զարմանալի թուեցաւ ինձ: Իշխանութեան և աշխարհքի ձեռքից փախըստական եղած մի յայտնի աւագակապեպ, շաքաթներով՝ օր ցիբեկով՝ զիւղումն իւր անայնի գործովն է պարապում, այն էլ ոչ միայնակ, այլ քանի մի իւր նման աւագակների մասնակցութեամբ, և չի դուրս գալիս մէկը, որ լուրը տեղ հասցնէր:

— Ոչ թէ միայն մեր զիւղումն, աղայ ջան, պարզեց Նադոն, մեր Նոր-Բայազիդի բոլոր զիւղերում՝ ծանօթ անծանօթի մօզ՝ ամիսներով ու փարով էլ եթէ մնաց, ամենքի գլխի վրայ Յունոն տեղ ունի էն օրից, որ նա անից տեղից կտրուեց, ձիու քամակն ընկաւ: Հէնց իրա՝ մէկիք Մրփօյի էլ աչքի լոյսն էր՝ մինչև նրա տղային սպանելը ու էօօր՝ միայն մէկիք Մրփօն է, որ Յունօյի արիւնն ուզում է խմել: Մէկիք Մրփօն էլ մեղաւոր չէ, վրայ բերեց Նադոն, իմ որդու սպանողի սիրպն էլ՝ եթէ փորիցը հանեմ, փաքտաք, արնաթաթախ ծամեմ ու կուլ փամ, էլի սիրտս չի հովանալ: Հախ Ասպիւն, մէկիք Մրփօն վար մարդ չի, դարողմանու, խօսքի տէր, պատուով մարդ է, Յունոն ինքն է կողիւր, թէ չէ՝ որ չարն սատանի զուխը արորի, զնայ մէկիքի շեմքն ընկնի, թուրը հանի, իր շնքին շնի ու մէկիք Մրփօյին ասի՝ քո բնիչն եմ ընկել, առ էս սուրը, կամ վիզս կտրի, կամ սխալմունքս բաշխի, մէկիքը, ես լսել եմ, որ պատրաստ է Յունօյին գիրկն առնելու, համբուրելու և ասելու. էս օրից սկսած՝ իմ Չաքօն կենդանացաւ, դու ինքդ ես իմ փան ճրագը, իմ Չաքօն, զնա փերտեր փար, Չաքօյիս լոյս գերեզմանն օրհնել փուր ու արի հայրական օրհնութիւնս փամ, քեզ ճանապարհ դնեմ: Էն ժամանակը մէկիք Մրփօյի զլուխը մեռած պիտի լինի, որ քո մազին մէկը շիպչի, ալևոր մօրուքս կառնեմ, չոքէչոք կերթամ դիւանի դուռը կընկնեմ ու զնացած ճանապարհիցդ քեզ կը փրկեմ, չետ կը դարձնեմ:

— Աւրեմն ընչու չի գնում Յունոն, հարցրի ես:

— Մարդս որ կայ, աղայ ջան, միս ու արիւն է, Յունոն ամօթ է քաշում, վախում է՝ որ չկարողանայ անբաղդ մէկիքի երեսին մտիկ փալու: Մարդ ենք՝ յանկարծ՝ եթէ մէկիքը նամարողութիւն անի, չընեիրի, ու զենաց բռնել, շիւան դադաստանի մարմնի, կն ժամա-

նախն աշխարհքը գութանի հասար զնջիլ (շղթայ) Դառնայ ու Յու-  
նոցին մէջ առնի, Յունոն իր արմաստի պէս սուր թրոյն առաջ՝  
մէլէք Մրտոցի գլուխը կը թոցնի, չիտոյ զնջիլը հասարակ Դերձանի  
պէս կը կարի, մէջ պեղից Դուրս կը պրծնի: Յիտոյ՝ նա իր ճանա-  
պարհը կարողներից շարերին կսպանի ու ինքը ձեռ չի ընկնիլ:  
Քաջ՝ էս էլ քեզ ասեմ, աշայ, որ Յունոն ինքն էլ ուրախ չի լի-  
նիլ, որ անմեղ մարդկանց արիւն թափեց. նա<sup>ս</sup> մինչև օրս ոչ մի ան-  
մեղ մարդից մի կաթիլ արիւն չի հանել, նրա սպանածները կամ  
մարդակեր աւաղակներն են, կամ խեղճերի հոգեհանները. որտեղ  
լսեցիր, թէ շահին շահ առնոյ, շահը գլուխ շինոյ, անողորմ, ան-  
հոգի, պնքանդ մարդ է սպանուել, իմացիր, որ եթէ Յունոն ինքն  
էլ չի սպանողը, իր մարդ խառն է, ՅՈ կարիճ փշամարդ ունի,  
որոնց ամեն մինը մի աժդհայ են, քարափովը որ քցի Յունոն, բո-  
լորը միասին գլխների վրայ կերթան. որ պեղ լսուեց, թէ Սիսիանի,  
Գարալազեազի ու Գեօգչայի սարերում աւազակ է սպանուել, իմացիր,  
որ Յունոն ինքն է շարերին իր ձեռքովը հաւի պէս ոտքի փակ  
Դրել, մորթել, էշպէսների ջնջուելը Յունոցի համար ուրախութիւն  
է: Յունոցի սրտի ղարղը միայն Մէլէք Մրտոցի փշայ Չաքէն է,  
որին ինքը չուզելով սպանեց: Սխտը մարդ էլ իր սիրեկան ընկերի  
վրայ ձեռք բարձրացնի, չէ որ Յունոն ու Չաքէն մի հօրից, մի մօ-  
րից ճնած եղբայրներից աւելի սիրով էին. շաբաթ չըլինէր, որ  
կամ Յունոն Չաքոյենց գիւղը չըգնար, կամ Չաքոն Յունոցի մօտ  
չըգար, ամեն կիրակի՝ թօւը ձեռներին՝ ծովումն իրար հետ ձուկն  
էին բռնում, կամ որս էին անում: Քահու, մե'ռնի Յունոցի մէրը,  
որ նա իր ընկերին շար աչքով մտիկ փայ: Եւ Նաշօն խոր յոգևոց  
հանեց ու աչքերը փակեց:

—Վերջապէս, պարմիր, Նաշօ, ամեն բան ու թող զնա, սրի-  
պեցի ես:

—Քէ որ հրամայում ես, հառաչեց Նաշօն, ես կարճ ասեմ, Դու  
շար հասկացիր ու, բան է, թէ որ օգնականը վրայ հասնելու լինի,  
ես կը թողնեմ, կը թռչեմ, Դու մի քիչ ժամանակ խօսքով արա,  
մինչև որ ես Յունոցին պարաստեմ:

Եւ Նաշօն այսպէս սկսեց շիւր պարունութիւնը:

Դ.

Բասարգէշար զիւղացի Աւօջի մինուճար աղջիկ Գիւլօջի սիրու-  
նութիւնի համբաւը արեւելից արեւմուտ քամու բերանն էր ընկել,  
փռուել: Բանած Գեանջու շնարից, հասնի Երեւանաց փոսը, պորըտի  
Փամբակով, Դուրս զայ Գիւլիջանի խոր ձորից, մինի մեր Քաւաուը  
(Նոր-բայազիդ), օրական՝ էն պակասը՝ հինգ, տասն ազաւալ իգիթ  
պղայ՝ անուճաւոր հօր որդիք, քամու հետ խալս ընկնող ձիանոն-  
ցը արծաթի ուախտով (ձիու սարք) զարդարում էին, իրանք էլ  
հագում, կապում էին ու գալիս Բասարգէշար զիւղը ու ձին  
քշում, ճակարէ ճակար իջնում Աւօջի Դուանը, Դուուը զարկում,  
իրանց տան պէս ներս մննում, բարով տալիս: Գիւլէին, որ Աւօն  
խնամաքարը Դրել է, աղջկանն ուզում է մարդու տալ:

— Բարով:

— Ասործու հազար բարին:

— Ղօնաղ չէք ուզում:

— Ղօնաղն Ասործունն է, մեր աչքի, մեր գլխու վրայ, ասում  
էր Աւօն: Նա կորիճի ձին ձեռքիցն առնում էր, զոմը քաշել տա-  
լիս, դարին ու Դարմանն անխնայ առաջը լցնում, ու ձիու արիտջ  
ձեռից բռնած՝ համեցէք էր անում տուն, խալիչէքանց ու փափուկ  
բարձերի վրայ բազմացնում ու ձէն տալիս:

— Սղիի, Գիւլօ, էլ ինչ կուշանաք, հաց քաշեցէք, մեր աչքի  
լոյս ղօնաղին տափու տուէք, Ասործու շէն դարգետահից (Դանից)  
ինչ որ տանը կը գորնուի, մէջ տեղ բերէք. աղուհաց, սիրտը բաց:  
Մեր աշխարհքում զինի չի Դուս դալիս, աղաց ջան, ասաց Նադօն,  
շափ հետու արեւելից են բերում, Դրա համար էլ թանգ է ու ամեն  
տան չի գորնուիլ, բայց Աւօջի տանը արկերով զինին անտակաս էր,  
դաւը լցում էր, պղնձէ մեծ թամն էլ հետը տուն էր բերում,  
մէջ տեղ Դրում:

Անր, խմիր, սէր ու սոհքաթ արա, հինգ օր, տասն օր կաց,  
ոչ ոք թթու աչք չի քցիլ վրայ, Գիւլօն ձեռները սրտին, զլուխը  
կախ՝ առջևդ կանգնած էր միշտ, հրամանք արա, ինչ սիրտդ ու-  
զում է: Բացց հէնց առաջին ճաշելուց յետոյ՝ եկող պղան իմանում  
էր, որ գործը ձախ գնաց, իր կորուստը Աւօջի տանը գորնելու չէր,

խեղձն անխօս փեղիցը վեր էր կենում, ձին սուս ու փուս շուս էր քաշում ու որփելից եկել էր, շէնն էր դնում:

Անչի, ո՞վ նրա իշին շօշ ասաց, սրբին ո՞վ կպուս:—Ոչով: Քանն էս է, որ ամենքին չաչտնի էր, թէ Աւօջի աղջիկն իր հօրից իրաւունք էր խնդրել: որ ինքը կերթայ էն փղային, ում որ ինքն իր ձեռքով պղնձէ թաւը կը լցնի ու համեցէք կանի. հէրն էլ աղջկանը սիրում էր, աղջկաց սիրտը չցաւացնելու համար՝ չէ չէր ասել ու իր շուսը կրճկի վրայ չեփ էր բացարելք Սրբանց էր Աւօջի արածը, թէ երեսահանոյ՝ չեփոջ կիմացուի. մենակ էս կաց, որ երկու փարի էր ինտուքարը շրել էր ու շեռ Գիւլօն ոչ մէկին իր ձեռքով ջուր էլ չէր խմացրել, ո՞ր մնաց զինի:

Արգ արի, հրամանոցդ, աղայ ջան, շարունակեց նաշօն, որ Յունօն ու մէլիք Մրբօջի փղայ Չաքօն իրարու ջան էին ասում, ջան լսում:

Մի օր Չաքօն գալիս է Յունօջի կարիկին ջուր դնում (սրիպել), թէ ել, ձիդ հեծի, գնանք Բասարգէշար գիւղն Աւօջենց փունն աղջկափես:

—Չան, ասում է Յունօն, էդ աղջկաց անունն ես էլ լսել եմ, շար անդամ էլ սրտովս անց է կացել, որ գնամ փեսու թիւնի, բաց սիրտ չեմ արել, որս իմ կարգեփոյն եմ արել, Աւօն մի հարուստ մարդ է, կուզի՞ որ իր փեսան էլ ոսկու միջին թաղուած լինի, ես ի՞նչ նրա ընկեր մարդ եմ. չանկարծ դնամ, աղջկանը փեսնեմ, հաւանեմ, սիրտս կպչի ու նա ինձ զինի չփայ, հէրն էլ ինձ սառը սառը չեփ ճանապարհ դնի. անիծուի իմ գոռոզ սիրտը, վայ թէ չկարողանամ համբերել ու մէջ փեղից մի վապ բան շուրս գայ:

—Տօ, ել, գնանք, ի՞նչ պիտի շուս գայ, զու է արել Յունօջին Չաքօն, Աւօն աղջկանը աչքի լուսի պէս սիրել է, մօր մահից չեփոջ էդ մի աղջիկն է մնացել, երես է փուել, չի կարողացել խաթընն շիպչել, աղջկաց կամքը կափարել է. բաց թագաւորի փղան եթէ դար, Գիւլօն էլ եթէ դժուէր ու փասը թաս զինի իր ձեռովը նրան խմացնէր, հէրն իր փեսացուն ունէր, աղջկանը նրան պիտի փար. երեխու թիւնից Գիւլօն ու Չաքօն ըաշիքքար թմայ արած են (ուխտեալ են), հիմի Չաքօն քեզ խնդրում է, որ իրան ընկերանաս, գնանք, նշանը փանք, չեփ գանք: Բայց եթէ Աստուած կը խուովի Գիւլօջի

գլխին, ալջիկը սարսանի ձին կը հեծնի, չի ուզիլ ինձ գինի փայլ, 7 ու պիտի ինձ օգնեսու էս գիշեր պիտի ձիու գաւալն առնես, բերես մեր գիւղը, փաննը ժամ, փերփէրը վաղուց պարտաստ է. մեզ կը պսակի, խաչեղջարն էլ 7 ու կը լինիս. մի՞ վախիլ, ոչով քեզ չի ասիլ, ի՞նչ ասքից վերեն յօնք կայ, Աւօն գիտէ էս բանը, Աւօջի խորհրդովն ենք էս բանն անում:

— Սարսանական, եթէ Աւօջի ալջիկը գինու թասը լցնի ու ինձ փայ, էն ժամանակն ի՞նչ անենք, ասում է Յունօն Զաքօյին:

— Տօ, ծնունդ (չիմար) ես, տղայ, Գիւլօն աչքեր չունի. նա չի տեսնիլ, որ մի թիզ է հասակդ ու երեսդ էլ երկու մարը, նա ինձ պէս քոյով, քուսաթով, փեսք ու կապտով տղին թողած՝ քեզ կը հաւանի. նա իմ հօր հարստութիւնի ձէնը չի լսած, նա չգիտի, որ հօրս փունը հարս եկած օրից՝ զլխին ու կրծքին էնքան ընկնած ոսկիք պիտի կախես, որ ծանրութիւնից փակին ձկոյի (կուչ գալ), մնայ, պարծենում է Զաքօն:

— Ես էլ եմ կարծում, որ խելք չպիտի ունենայ էն ալջիկը, եթէ քեզ թողած՝ ինձ հաւանի, մարդասիկ շնի, բայց բան է, թէ որ սխալեց ու թասն ինձ մեկնեց, ի՞նչ կասես, նորից հարցնում է Զաքօյին Յունօն:

— Էն ժամանակը կասեմ, որ քո բաղդն է եղել, քո ղսմաթն է (վիճակիալը), Աստուած բարի վայելումը փայ, ես էլ՝ քո խաչը բանօլ:

— Հասարմար:

— Հասարմար, Յունօյի ձեռքը բռնել, սեղմել է Զաքօն:

— Թէ էդպէս է՝ գնանք:

Եւ երկու աղիզ սիրական ընկերները սրօջտի են արել, ձի են նստել, երեսներին խաչ են հանել, գնացել Բասարդէշար, Աւօջի 7 բանն իջել:

— Բարով, հազար բարի, քո ոյնամուտդ շնորհաւոր, մեր գլխի, մեր երեսի վրայ ես եկել, յառաջ է գալիս Աւօն ու Զաքօյի կանից բռնում, փուն համեցէք անում: Համա մեր խեղճ Յունօյի երեսին էլ չի մտիկ փախիս, թողում է բակում ցից կանգնած:

Յունօյի սրտին շար կողում է, 7 անակ փայլի՞ր՝ արիւն չէր կաթիլ, աւելի իր ընկերիցն է նեղանում, որ Աւօջին չի ասում,

թէ մենք մէկ չենք, երկու ենք, ուզում է՝ որ ձին ցովից շուրս քաշի, հեծնի, յեր շառնայ:

Մէկ էլ՝ Գիւլօյի աչքն առնում է բազում կանղնած օտարականին: Աղջիկն առանց հօր հրամանի մօտ է գալիս, խնդրում է Յունօյին սուեն, նստացնում է հացի վրայ ու իր ձեռովը մի կտոր հաւի կուրծք լաւաշ-հացի մէջ փաթաթում, իրան տալիս ու պղնձէ թասը պտտէ Վրացու գ լցրած՝ համեցէք անում, առջևը չոքում, գլուխը կախում ու ասում. Ստուած ողջ պահի իմ գլխու տիրոջը, թող ինչ որ մօտն ունի՝ հանի, նշան տայ իր ճակատին գրած ետրին (սիրական):

— Ե՛լ տեղիցդ, անդգամ, անամօթ ղա՛նջը, գոռում է Գիւլօյի վրայ հէրը, շեռ իմ գլուխս մեռած չի, որ իմ աղջիկն իր հօր ու մէկիք Մրբօյի կտրած ըաշիքեարթմէն քանդի, հերիք էր ինչքան էս երկու տարումը քո խելքովդ ընկայ, սուենս շուն ու դէլերով լցրի, շուռս ամեն աւազակի առաջ բաց արի. ես էս օրուայ համար էի սպասում, փեսաս ուշ եկաւ՝ բաց նուշ եկաւ, քո նշանածը մէկիք Մրբօյի օճաղը շէն անող Չաքօն է, թասն առ շրա ձեռից, սրան սուր. շա չի եկել աղջիկ ուղեւու, Չաքօն ասեց, որ շրան բերել է իր ձիու գլուխը բռնելու, շու չտեսնր, որ ես շրան սուեն համեցէք չարի, ծառայի տելը գոմն է ու բազը, մի կտոր հաց կը տան, փորը կը կշտացնի, կենի, իր տիրոջ ղուլլուղին կը կանգնի.

Գիւլօն, հէնց իմանաս, կամ խուլ էր, կամ էնտել չէր, հօր երկար ու բարակ գիլի աւետարանները քամու պէս ախանջի կողքովն էին անց կենում, մնում է Յունօյի առաջին չոքած: Մեր Յունօն էլ քար էր կտրուել, մնացել, աչքը սնկել էր Չաքօյի երեսին ու սպասում, թէ իր ընկերն ինչ պատասխան պիտի տայ:

— Լա՛ւ է ասում Աւօ աղէն, Յունօ, վերջ ի վերջոյ ձէնը հանում է Չաքօն, Գիւլօն որ կայ՝ ծամը երկար, խելքը կարճ աղջիկ է. ոչ արածը կը հասկանայ, ոչ իր լաւն ու վատը կը ծանաչի. բացց հէրը փորձած, աշխարհ տեսած մարդ է, դիպէ, որ իմ հօրս սուկու սնդուկն եօթը մարդ տեղիցը չի կարող կտրիլ, համա շու մի շիփլախ փորաբացի մէկն ես, ձեր սպակի մէկէլ օրն ուտելու հաց չէք ունենալ: Դրա համար էլ Աւօ աղի բարի կամեցողութիւնն է:

որ շու գինին չեւր փաս Գիւլօյին ու թողնես, հեռանաս. էնէնց է, թէ չէ, Աւօ աշնց:

— Ես իմ Աստուած, ուղորդը որ կայ, քո ասածն է, թէ սուր ասեմ, էս հացն իմ վրին ոչ գտնուի: Տուր, սղան, փուր գինին Գուլօյին, թող իր ձեռքովը փայ Չաքէին. կը լի սխալուց ու քեզ մեկնեց, մարդ ենք, սխալական ենք, խրապ էր կարդում Աւօն Յունօյին:

Խեղճ Յունօյի փորն եփ էր գալիս փլաւի ջրի պէս, բայց վիզը թեքում է ու թասը չեւր մեկնում Գիւլօյին:

— Ե՛ր թասը որ կայ, իմ կեանքն է, իմ արևն է, կամաց և կարական ասում է Գիւլօն Յունօյին, կամ ձեռովդ գինին թափիր, թասը շարփիր, և կամ անուշ արա, նշանդ փուր, ինձ բաղդաւորացրու:

— Բո ազիզ կենացը, իմ կեանք ու արև', Գիւլօ ջան, ասում է Յունօն և թասը մինչև փակը մի շնչի ծծում, հանում խանչալի փակի երեսից ղամալթին (սուր շանակ, որ խրած է լինում շաշոնի ներքևի երեսին) քցում թասի մէջը ու ալջկայ կունիցը բըռնում, կանդնացնում ու ասում. էս օրուանից շու իմն ես, ես քոնը, վնջ նրան, ով կը չիմարանայ գլուխը ցաւոյ օձի պէս՝ գալ իմ ճանապարհի վրայ ձգուիլ, է՛ր պտտիկ ղամալթիով ես էնպէս մարդի կոկորդը շուրս կը կտրեմ: Մնաս բարև', Գիւլօ ջան, ես գնում եմ, շու հօրդ ուրքերն ընկիր, լեզու հանիր, աղաչանք արա, որ մեզ իրարից չջոկի. եթէ կամաւորուեց՝ շնչու լաւ, թող մարդ շրկի մեր գիւլը՝ Սափօյի Յունօյին կանչել փայ, թէ չէ՝ ես շարթուան գլխին՝ ուղիղ կիրակի օրը՝ կը գամ, ձեր փունը կը մտնեմ, հօրդ աչքի առջև քեզ խրխրս կառնեմ, ձիուս գաւակը կանցկացնեմ ու թէկուզ հազար թուր ու թուանք քերեսիս խաղացնեն՝ իմ ճանապարհս չեն կարող կապել: Ելի ասում եմ, ձէնը վեր քաշեց Յունօն, ով իր գլխիցը ձեռք է վերցրել, ում համար իր մի գդալ արիւնը գին չունի, թող շուրս գայ յէմն կտրի:

— Յունօյի խօսքի վրայ՝ Գիւլօն գլխիցը մի մազ է պոկում, փալիս իր նարինն ու ասում. էս մազն էլ թող լինի իմ նշանը, իմ ափօն (հայր)՝ կամ թիկունքիս վրայ փռուած փասնեթու ծամն էլ իր ձեռքովը կը բռնի, գլխիս հետ կը բաշխի քեզ, կամ թէ չէ՝ էս մազը պարան կը շառնայ, օշաճիւ կը լինի, վիզս կընկնի:

Առնում է Յունոն մազը, պաշում, ճակարին է շնում, հօրն ու Ջաքօյին գլուխ փալիս, գնում է ձին նստում ու շունչն իրանց գիւշուհն առնում:

— Օհ, բացականչեցի ես զարմացած, առակաների մէջ ասուած առասպելական շիջուհիների պտտմութիւն ես անում, Նաշօ:

— Կիցուհի ինչ ասել է, աշայ ջան, հարցրեց Նաշօ:

Մասձեցի, մտածեցի ու ասացի. սիրուն աղջիկ:

— Ամեն ժամանակ սիրուններն իրանց առականերն ունին, գլխիդ մեռնիմ, փրամաբանեց Նաշօ:

— Վերջը, վերջը, Նաշօ:

— Վերջը, աշայ ջան, էն շաբաթն Յունոն երեք անգամ ձին հեծել, Ջաքօյի մօտ է գնացել, սպքերն է ընկել, աշաշէլ, որ փուած խօսքին հաստատ մնաց, Գիւլօյից ձեռք քաշի, իր խաշեղբայրը շառնայ:

Ջաքօն ստարանի ձին է հեծել ու կարական ասել. իմացիր, որ կիրակի օրը՝ չիտուն ձիաւորով Աւօյի դրանը Գիւլօյին ձեռից խլելու եմ:

Խեղճ Յունոն՝ ճարը կտրած՝ մկել է Մէլիք Մրտօյի մօտ, եղելութիւնը միմին պարմել ու խնդրել է, որ որդու գլխին խելք շնի, իրանց էնքան փարուան պինդ կապուած եղբայրութեան պարանը կտրուելուն պարճառ չըշառնայ:

— Տօ, լակոպ, ձեացել է Մէլիքը, ես Գեօզի մ'հալի (Նոր-Քաջագիդի գաւառը) Մէլիք Մրտօն լինիմ ու իմ ոտք լիզող շանը թողնեմ, դայ, վրաս հաշի. շուրս կորի փոնիցս, թէ չէ՝ ձայն կըստմ ծառաներիս, փուն կը թափուին, էնքան կը թակեն, որ ճանապարհդ չես գտնիլ:

— Մեղքը ձեր շինքն, ասել է Յունոն ու առաջին կիրակի իրիկունը՝ Ջաքէի վիզը կարմիր թել է կապել:

— Սպանե՛լ է, սարսափած հարցրի ես:

— Էն րոպէին՝ որ Յունոն Գիւլօյին դաւակն առած՝ ուզում է ձին կրնկել, Ջաքօն — չիտուն ձիաւորով վրայ է հանում, առաջը կտրում է, Քրդի թօփգլուխ (գնդակազուխ) դաքանչէն շէմ է անում Յունօյի սրտին և ուզում է կրակել: Յունոն խլում է Ջաքօյի ձեռից փշտովը, կրակում է նրա ճակարին ու գլխի վրայ ձիաթափ եղած

Դիակը ուրնաւորակ սալիս ու իր շորս կողմը կտրած ձիաւորների մէջը ծշում, սիրեկանին բերում է իրանց տունը, մօրն է չանձնում ու ձիու քամակն ընկած՝ ճանապարհ կտրոշ է Դառնում: Քայց չունքի Յունօն արդար մարդկանց, հալալ աշամ որդու ճանապարհը չի կտրում, այլ տներ քանդելու, սաւար, ոչխար ու ձի փախցնելու, կողսպուտներ անելու, ժողովրդի ու խեղճերի աչքների լոյսն իր բուռն առնելու, անխղճմանք շահեր առնելու սովոր մարդկանց ճանապարհներն է կտրում, Դրա համար էլ՝ թէ մեր դիւշունը, թէ բոլոր դիւշերումը, թէ քաղաքումն ամենքի աչքի լոյսն է մեր Յունօն. ամեն մարդ աւելի շուտով իր որդուն, իր եղբօրը Դիւանին կը մտնի, և Յունօյին չի ստիլ, թէ՛ մոխը քո կողմը: Յունօն էլ մի օր իր ստան, իր ընտանու, իր երկու երեխի մօտին է հանգլստանում, հինգ օր չօրերումն ու սարերումն անքուն պահապանի պէս իր երեսուն ձիաւորովը զիշերներ է լուսացնում, ցերեկն ահ ու սարսափ է թափում վար մարդկանց գլխին: Հինգ տարի է՝ Յունօն փախաւորական է և հինգ տարի է՝ մեր երկրում գայլն ու գառն իրար հետ եղբայրացել են, հինգ տարի է՝ աշխարհն օրհնում է Յունօյին: Մէնմէնակ՝ Դարդի ձեռից չմքած, կիսամեռ, ստան ընկած, աչքի լոյսն ու կռներ-ձունների զօրութիւնը կորցրած Մէլիք Մրսօն է, որ զոգերով անէծք է թափում իր որդու արևը խաւարացնողի գլխին, նրա սիրեկան սնեցու, նրա անմեղ քորփէքանց գլխին: Մէլիք Մրսօն իր ծովի չափ կարողութիւնը փչացրեց, ընտանի մարդկանց ու շափարները փորը կոխեց, որ կարողանայ իր Զաքօյի սիրտը ծակող ձեռները հաստ գնջիլի մէջ տեսնել ու մեռնել հանգիստ սրտով:

Յունօն մահից չի վախում, բայց Մէլիքի Դարդը նրա սիրտն ու թղթն է խաշում:

Է՛հ, աղանջ, հերիք է, կը ներես, մնաս բարով, խոր հառաչանք ու թառանջ արձակեց սրտի խորքից նաշօն, ձախ ձեռը տարաւ աչքերի լոյսը շփոթող արտասուքը սրբեց ու ձիուն կրկնեց:

— Ափսոս, շատ ափսոս, բացականչեցինք միաժամանակ ես և ծառաս:

Այդ միայն մի ցաւակցութիւն չէր Յունօյի անձին վերաբերեալ, զգացմունքի այդ գեղմունքն ինքն ըստ ինքեան հասկանալի էր,

քարասիրտ ու անխիղճ մարդը միայն անտարբեր կը մնար գաղափարական աւազակապետի ներքինին բարոյապէս շխարհկցելով. մեր արտասանքի մի մասը վերաբերում էր մեր անձնական կորստին, և իրան, մեզ համար մեծ կորուստ էր մեր ուղեկցի հեծած մտաւիտ առանց ուշադրութեան թողնելը: Առասպելներում համբաւուած, հրեղէն մտաւիտների արժանաւոր սերունդ էր անշուշտ Նադօյի արտաքին գեղեցկութիւնից չզուրկ, բրդոտ ու փռհակալած մտաւիտ: Երևակայիր՝ փոթորիկից մշուած մի բուռը փոշի, որ սկզբում միայն օդի մէջ աչքի է ընկնում և վայրկենաբար մթնոլորտում անհետանում: Սրաթուիչ նժոյգն ու իր սէրը ականթօթափել՝ չքացան մեր աչքից:

--Արժան էր, աշնց, կորիճ որդամարդին հրեղէն մատենանը (մտաւի), գոչեց ծառաս, Նադօ էր անունը, թէ Յունօ, ինձ համար մէկ է, մարդի մէջ շնորհք կար: Էն ձեռը կորուի, որ սրա վրայ բարձրանայ, գոչեց ծառաս և լուեց:

Ե.

Միում է երկնագոյն ծովակն իւր ականապարար ծածանումով, անցորդի ուշադրութիւնն է հրաւիրում իւր կանաչափայլ ջրի մէջ խաղացող, լողացող, ջրասուց ձկնկուլիների, վայրի սագերի, բաշերի ու կարասների վրայ, արագավազ սահում են առաջատուաւոր նաւակներն ու հաստագերան լաստերը՝ ակոսելով լճի խաղաղ մակերևոյթը, բայց այդքանը բաւական չէ մեր հարցասիրական տենչը յագեցնելու: Խօսել Գեղամայ՝ հրաշարեսիլ ծովի մի փոքրիկ կտորի մասին և ուշադրութեան չառնել լեռնային այդ հսկայական ջրամբարի ամբողջութիւնը, միևնոյն է, թէ մի սրաթուիչ արծուի մի թևը տակից կտրել ես ու սրիպում, որ օդաչունների հաշմանդամ թշուառացած թագաւորը՝ իւր արքայական վեհութեամբը, իւր ամպեր պարառութիւլ բնապուր ընդունակութեամբը՝ արծուի տեսոյն կարօտ այցելուին կարողանայ սքանչացնել, հիացնել ու ոգևորել:

Եւ որպէս զի պարզերես ու վստահ կարողանամ սիրելի ընթերցասէրներին մեղադրանքների ծանրութիւնից զլուստ ազատ կացուցանել, ես մի մտաւոր պտոյտ եմ դործում նրանց հետ Գեղամայ լճակի շուրջը: Եկէք, ուրիմն, սկիզբն անենք մեր Գեղամ

պապի սիրած ու հաւանած ծովակի արևելահիւսիսացին կողմից: Բայց հարկաւորութիւն չկայ ծովի ափին շաւր մօտ լինելու, մենք բարձրանանք ծնկնահար, խոտալի ու ծաղկալի լեռնաթմբի կատարը, Չքիլու կոչուած հայքանակ գիւղից շատ վեր: Որոշածս կէտը ճիշտ այն փեղն է, ուր Ղազախի Դժոխատոր ձորերից, Գիլիջանի օձագալար, ոլորապոռոյտ կեռամաններից զգուած ճանապարհորդը՝ երևը թողնելով երկնամերձ էջակ-մէջշանի լեռան հիւսիս արևելեան երեսի ձորահովտում գտնուած Սիմէօնովկա մալակնաբնակ իջեանը, շրապում է լոյս աշխարհ փսննել, երկնքի անեզր ու անծայր փարածութեանն արժանանալ և մի ազատ շունչ քաշել: Նա կանգ է առնում և երկու թևը խաչաձև լայն փարածած, բերան, ունդունք ու աչքեր չկա ճոթաւած, խոր շունչ է քաշում, կեանքի գործօն անմահական օդը քուլայ քուլայ ներս է ծծում, կուրծքը լայնացնում, թոքերն ու փորի խոռոչն ուռցնում է և սրտալիր զոչում:

... Օխաաաայ... քո հող ու ջրին մեռնիմ, այն Հայոց աշխարհ, քո ճանապարհը մանուշակ ու վանդ, սվ նուրբ ճաշակի պէր, սվ բնութեան սիրահար, հայոց հարազատ Գեղամ նահապետ, լոյս կըտրիս Դու, որ էսպիսի հազուադէպ բարիքը, հրաշագոն Սեանայ լիճը քո հօտերին, քո նախիրներին, քո ջոկերին ջուր խմելու աւազան ընտրեցիր, քո չեփնորդներին յաւիտենական ժառանգութիւն թողիր:

Նայիր կանգնած Դ կէտից Դէպ արևելահարաւ. այդ մի քարացած վիշապ, միապաշաղ մի ժայռ է, որի զլուխը հարաւ, ազին հիւսիս, երկար ու մէկ արեկող է արել: Դա Գիւնէյին<sup>1</sup> է, մի դողաւորուած լեռնաշղթայ է, որի թիկունքն արևի փակ անշաղար խանձում է, իսկ սիրտը Գեղամայ չժրածպիտ, պարզ ու վճիտ, զմրուխտանման, սառնորակ լճի անուշահամ ջրից զովանում է: Պոռոյտ արա հարաւարեւելքից Դէպի հարաւարեւմուտք. այդ Վայոց ձորի լայնանիստ լեռնաթումբն է, որի հիւսիսացին սպորտի փափարակն աստիճանաբար իջնելով՝ հիւրասիրել է իւր սեահող ու բերրի Դաշտի վրայ մեր այցելելու երեսունից աւելի հայ գիւղերը: Մի-մի գետակներ ու ձկնալի գետեր պատառում են լեռնադաշտի հարթութիւնը և լեռների կատարներից արագավազ ցած հոսելով՝ գնում:

<sup>1</sup> Գիւնէյի նշանակում է արևահանդէպ:

միանում են իրանց մօր-Քեղամայ լճակի հետ: Նուրջ Կուր գէպի արևմուտք և կը գտնես լեռների գոգերում թագ կացած, նախկին Գաւառ աւանը, իսկ այսօրուայ Նոր-Բայազիդ քաղաքը:

Եւ անս, մենք ունեցանք մեր առաջը մի վիթխարի աւազան, որի ջուրը ոչ թէ համանման լճերի ու ծովերի պէս երկիրը պարարացնելու, ուռեղելու գործում ամուլ է, այլ իւր արեւմտեան կողմի պարսոուածքով ընծայում է Արարարեան մայր-Դաշտին Հրազ-Դան, կամ Չանդու դէտը, որի փուած օրական օգուտը ժողովրդական աւանդութիւնը մի լիւր ոսկի է որոշել: Քանզուն մի լիւր ոսկի է Կալի, ասիլ են մեր պապերը, իսկ Քասախն օրական մի լիւր արծաթ է բերում:

Աչքիդ փետողութիւնը ցած թող, հեռաքրքիր այցելու, և լաւ Դիւրի ծովակի հիւսիսային ափին երկու երեք ասպարէզ հաղիւ մնացած, ջրի միջից խուզ Դուրս ցցուած բլուրը Քա մեծահռչակ Սեւանայ յայտնի կղզին է, որին համարձակ կարոյ էինք քարաժայռ անուանել, եթէ նրա հիւսիսային ստորտումը մի նեղ շերտի նման ձգուած աւազու պարակի վերայ աչքի չընկնէին մի անփառունակ եկեղեցի և մի շարք փոքրիկ ու հասարակ, հողաշէն փնակներ: Այդ խցիկները վկայում են, թէ մի խումբ աշխարհբիցս ձեռք քաշած մարդիկ, մշտամուռն աղօթաւորների մի փոքրիկ միաբանական եղբայրութիւն ինքնայօժար կենդանի թաղուել են այնտեղ: Այ իրանց մարմին և ոչ մարդկութեանը պիտանի լինելու համար են երես Դարձրել այդ սրբասուն հայրերն իրանց հօրից ու մօրից, իրանց եղբայրներից ու քոյրերից, իրանց ազգ ու ընտանիքից և հեռաւորներից, մինչև իսկ համայն մարդկութիւնից, այլ օր ու գիշեր սաղմոս քաղելով՝ նրանք իրանց, առանց այն էլ, արդար հողու ճանապարհն են միայն գէպի երանաւէտ հանդերձեալ կեանքը՝ ետական շիրաւորութեամբ՝ հարթում ու մաքրում:

Տես՝ որքան վերացած են եղել ներկայ սուրբ հայրերի սրբատուրք երանելի նախնիքը, որ շարակով ջուր են կրել լեռնակղզու կախարք և երեք հրաշակերտ փառարների շինութեան կրի զանգուածն են շաղախել:

Երեք ականակուռ թագ են իշել ժայռի զազաթը զարդարող սուրբ «Յարութեան», «Առաքելոց» և «Յովհաննու Կարապետի» անունով

շինուած սրբավայրերը: ժամանակը լափել, յափշտակել է առաջին  
 տաճարը, իսկ երկուսը կան և ԴիմաԴրում են ամենակուլ աւերիչ  
 ժամանակի հարուածներին:

Բարձրացիր, վեր բարձրացիր, ջերմեռանդ ուխտաւոր, Սեա-  
 նայ բլրի կատարը և ափշիր ու հիացիր Առաքելոց տաճարի քարի  
 պէս կարծր, փայտեայ Դրան նրբաքանդակ փորուածքը զննելով:  
 Մեղանչած չեմ լինիլ, եթէ ասեմ, որ շարավերջիս կատարելագործ-  
 ւած արուեստագէտը բերանաբաց կը մնայ և կը խոստովանի իւր տգի-  
 րու թիւնը և ծուկն կը չոքի միջնադարեան հայ արհեստաւորի հըմ-  
 րութեան առաջին:

Թողնենք Գեղամայ լճի արտաքինը և ներս թափանցենք մըտ-  
 քով նրա խորքերը: Տես, ինչպէս թևին, պոչին անելով՝ շփվում  
 են միլիոնաւոր ձկները:

Ներս մտնելու ինչ կարիք ունինք. ամբողջ Երևանայ և Գան-  
 ձակի գաւառները լիանում են Սեանայ լճակի համեղաճաշակ, տասն-  
 երկու տեսակ ձկներով, որոնց անուններից ես և Դու, պատահական  
 այցելու, մի քանիսը միայն գիտենք՝ օրինակ՝ իշխան, ըսխտակ,  
 աղնջան, գեղարքունի, կողակ, քոջակ և այլն, իսկ տեղացի մա-  
 նուկը մի շնչի տասներկուսը կը համարի: Թողովրդի աստութեամբ՝  
 իւրաքանչիւր ամիս ծովակը հնումը մատակարարում էր մի տեսակ  
 ձուկը:

Մէկ էլ տեսնում էիր, որ բիւրք բիւրուց ու հազարք հազարաց  
 միատեսակ ձուկը չու բռնեց ծովի խորքից և եկաւ մտաւ լիճը  
 լցուող գետակները, վտակները ու գետերը՝ ձկնկիթ ածելու, իրանց  
 սերունդն ածեցնելու: Գետի լայնութիւնը բաւական չէր լինում  
 ձկների հրոսակները պարփակելու, շապերն ավերից ցամաքն էին  
 ընկնում և անշնչանում:

Վճարքս սրն է, հրամմէ՛, Դուրս տուր թիակով, ընտրի միջե-  
 րից լաւերն ու խոշորները, բեռներդ կապիր, մի սհաքղղանն պարս-  
 կական պղինձ Դրամ, կամ ներկայ երեսուն կոպէկը տուր Գեղամեան  
 իշխանական սոհմի<sup>1</sup> ներկայացուցչին և բարձիր, ճանապարհ ըն-

<sup>1</sup> Խակըրանէ՝ մինչև պարսկական տիրապետութեան վերջը Գեղամայ  
 ծովակը ժառանգական սեպհականութիւն էր Գեղամեան սոհմին:

կիր, փար ընտանիքիդ փարեկան պարրասպառ թիւնը փես, աշաջուր շինիր, ձկներդ աղիր:

Քո կամքն էր՝ ի՞նչ ձուկն էիր ուզում աշել, որ ամսին գալիր, նոյն ամսի որսից կը փանէիր: Կողակն ու իշխանն ամենից գործածական ձկներն են, առաջինն չարկապէս աշելու, երկրորդը և՛ աշելու և՛ թարմ ուտելու: Իշխանը Գեղամայ ծովակի սառնարիւն բնակիչներին իշխանն անուն կրող թագաւորն է:

Ներկայումս խանգարուել է բնական կարգը, այժմ՝ խեղճ ձկներին չեն թողում զեպի ջրի արժանանալու, զեպումը ձկնկիթ ածելու: Հիմա ձկնորսութիւնը զխաւորապէս կատարուում է ուսկաններով ծովի խորքերումը: Այդ պայմառով՝ Սեանայ ծովի ձուկը փոսանապարիկ, հարիւրապարիկ թանգացած՝ հեպհնիտէ դժուարամարտի է դառնում ժողովրդի չքաւոր դասակարգին:

—Այս օրն էլ փեսանք, երբ քառորդ կոպէկի քառորդը չարժեցող, կռանս չափ իշխանաձուկը մանէթներ է արժենում, շաք փեղ, մինչև անգամ, կշռի մէջ գրուած՝ գրեանքով ու մխալով է ծախուում: Լսուած բան է, ապրել կը լինի, սարսափած՝ գլուխը բացասաբար պորպում է մի ամբողջ դարի գլխով թուիչք արած, զառամեալ պապը:

Խեղճ ձկներ, փես՝ իրքան թշնամիներ ունին, փես՝—ինչպէս վախում են նրանք ծովակի երեսին խաղացող ու ջրի հնո ծածառող երկարակտուց, թեւաւոր լոշնորդներին:

Ահա, ուրբերն ու պոլը վեր բարձրացրեց ջրաչին մի թռչուն և սուզեց ծովի փակը, ընկաւ մի ձկան ետեւից, բռնեց, սեղմեց կտուցի մէջ, ելաւ ջրի երեսը և թեւերը թափ պալով՝ սլացաւ դէպի վեր երկինք, թեւեւեց դէպի ափ, կամ՝ ծովից գլուխը սնկան նման հանած մի ժայռ և անողորմաբար ուժեղ կտուցով ջախջախեց խեղճ ջրաբնակի գլուխը և կերակուր արեց իւր անկուշտ որկորին: Անբաղդ իշխանաձուկը շաք թափ է թափ եկաւ, զալար—մալար ոլորեց, աշխարեց դուրս պրծնել իր ոխերիմ թշնամու ճանգից, բաց իզուր. նրա օրերը հաշուած էին, նրա կեանքի թեւը չափ փեան կտրուեց, նա կար և չըկայ:

Հերիք է, հարցասէր ընթերցող, թող փուր ինձ բաւական համարել Գեղամայ ծովակի նկարագիրը քեզ անելը, ես գործ ունիմ. վաղուց ժամանակ է ինձ զրաստիս քաջերին նեղութիւն փալ և չըմտնել մինչև Ա. գիւղը մնացած երեք գիւղերը, այդ գործը կը թողնենք մեր վերադարձին, ինձ անհրաժեշտ է այս գիշեր անպարճառ լուսացնել Ա. գիւղումը, ուր Յունօյի փունն է և ուր արշաւեց Նաշօն:

(Շարունակելի)

## ԳԱՐՆԱՆ ԵՐԳԵՐ

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

I

Գարունն եկաւ շոշոշալէն,  
Հեփն էլ բլբուլ զընդհնգալէն,  
Ասորէ վզնոց՝ ցոլցլալէն,  
Բարով եկար, ծիլ գարուն:

Բարով եկար, անուշ գարուն,  
Դուք էլ վարդեր, բլբուլներ,  
Սխ ուր մնաց կեանքս նշխուն,  
Ո՛ւր է սէրս, բլբուլներ...

Է՛լ տեսար ինձ, նշխուն գարուն,  
Տեսար, թէև շէտ կ'ապրիմ,—  
Բայց վնչ գարուն, որ սիրտս արուն՝  
Կ'ապրիմ, կ'ապրիմ ու կ'ապրիմ..

1899 թ. մայիս. Կովք:

## II

Հազար սրտերն ինչ են երգում  
 Վարդով, ծաղիով ցնծալէն, —  
 Գարննն, սրտեր շնու ես զուգում  
 Երգովդ անուշ զնդալէն...  
 —Միլ սրտերին մի՛շտ է դարուն,  
 Սէրը կարմիր, շողուն է,  
 Սիրտը թող վառ կանանչ լինի՝  
 Կեանքը միշտ էլ նշխուն է.  
 Մենակ ախսոս սիրտդ է արուն,  
 Սրտիդ ծալքում սէրդ է սև.  
 Կեանքը թէկուզ կանանչ լինի,  
 Արև կարմիր՝—սիրտդ է սև.  
 Տնոր սևերդ ծալքի շիրմում,  
 Թող արևը կարմիր դաչ,  
 Կեանքն էլ նշխուն թէ սև լինի,—  
 Սիրտդ պիտի լուռ մտայ...

\*  
\* \*

Ես մի մեծ շնորդ եմ քաշում,  
 Գարշիս ինչի՞ն էք իմաց.  
 Օր-օրի սիրտս եմ մաշում,  
 Գիտէք թէ էլ սիրտ մնաց:

Կեանքիս բա՛լը՝ ընկաւ քո՛ղը,  
 Չեմ քաշում՝ հասնիմ վաղը.  
 Վաղըս անցնաւ, —նիսն եմ քաշում,  
 Գիտէք թէ էլ սիրտ մնաց...

## ԱՄՊԵՐԻՑ ՎԵՐ

ՓՐԱՆՍՍՈՒԱ ԿՈՊՊԵԼԷ-ից Թարգմ. Մկրտիչ Նալասարղեանի

Քաւական սարի է սահել այն օրից՝ երբ ես ստիպուած էի ժընեւում մի շաբաթ սպրել բացասուպէս մտախլապապ չունար ամսի ընթացքում:

Իսկապէս ձմեռն է, սխուր և մռայլ երկնքի սակ, երբ կալինական Հոռը իր բնական պատկերն է զգենում: և միմիայն անցողակի տեսած լինելով զեղեցիկ եղանակներին, ինչպէս անում են սուրբխսպները, չի նշանակում ճանաչել ժընեւը: Խոնչ չուշեր են պահում միտներում ժընեի մասին ճամբորդներն իսկապէս Աճի ու լեռների անգուգական տեսարանը, լիճափի շքեղագարդ հիւսնոցները, Կորսարի վաչելչաշուք խանութները, Աղանի շոգենաւի գախպականմածի վրայ ճամբորդների համազդի խօսակցութիւնը, — համարեա այս է ընդամենը: Կալինի չիշարակը ոչինչ չունի ջանկուցիչ: Քիչերն են զայթակղում այս սոսկալի հերձաճողի հետքերը որոնելու հին քաղաքի նեղիկ բարափոյ փողոցներում և սուրբ Կեպոսի կամարների սակ. և ճամբորդը, ժընեի վերաբերմամբ, պանում է իր հետ վայր ի վերոյ տպաւորութիւն իբրև մի հարուստ և զեղեցիկ քաղաքի մասին՝ շինւած կախարչիչ ու վեհապանձ զաշտանկաջի վրայ:

Ռեֆորմացիայի հին միջնաբերդի ստոր, բոցց ուժգին, բանասրեզժութիւնն զգալու համար, այնտեղ պէտք է գտնուել ընդհակառակն իսկ ձմռան մէջ սեղը, երբ մթնորոտի խոսութիւնը համեմատ է սեղական բարքերին, և երբ փչում է ստոր հիւսիսը կրօնական վէճի պէս կծու կերպով: Աման զեպը թաքչում է մշուշի

տակ, կարծես թէ նրա հնչրաւեպ լազարըը երկնչում լինի հուգննտրական ամօթխածութիւնը վիրաւորելուց, իսկ ծառերի կմախքները պրոպետանաք քահանայի քարոզի նման շոր են: Ահա, հէնց այդ միջոցներումն է որ պէտք է մագլցել բարձր քաղաքի սև ու խոնաւ փողոցները: Այնպեղ կան յեպ ընկած փոքրիկ հրատարակներ, քարէ հին սանդուղքի գլխին փնկած կնձենիով, ու ասանց շար երեակայութեան՝ մարդ կարող է կարծել՝ թէ որպեղ որ է կերևայ ինքը Կալւի'ը գլխին թասակ ու հագին սև շոր, մագլուրկ կուան տակը ճարմանդաւոր մի հաստ Ասրւածաշունչ, իր բհիրանման միրուքի արանքից անէճքներ մըմըթալով թեթևարարոյ հերեպիկոսների շէմ:

Այս մուսլ թաղում՝ գոնում է նոյնպէս Գոանմ փողոցը, ժըննի Աէն-ժերմէն արւարձանը, որպեղ՝ հինաուրց ապարանքներում բնակում են խիստ ասրւածապաշար և շար հարուստ կնշաւորներ, որոնք տարին տասներկու ամիս պարապում են աշօթելով ու փողեր շիգելով:

Եթէ այնուհետև իջնելու լինէք քաղաքի նոր մասը և խառնրէք առևտրական փողոցների գործունեայ ամբոխի հետ, շար շէմքերի վրայ կը նկատէք նոյն դաժան խտամբեր բնոյթքը: Կանայք՝ մուշտակներում փաթթած և շէմքերը քոշարկած, կարծես թէ թաքցնում են իրենց գեղեցկութիւնը ինչպէս գայթակղիչ մի առարկայ. իսկ բորսայի շէմքի վրայ կը հանդիպէք լուրջ և խոհական պարոններին, որոնք բանքիրներ են և իրենց մէջ գրուցում են արժէքների մասին. թէև շուք պիտի կարծէիք թէ շրանք մեկնաբան շոքտորներ են ու որևէ սրբաղան գրւածքի բացապրութեամբ են զբաղւած:

Թող բարի ժընեցիները ներեն ինձ ներկայ ուրւագծովն արած այս հանաքս: Ձեմ մոռանում նրանց ինձ երբեմն ցոյց տւած սրտաբաց հիւրընկալութիւնը, երբ ես գնացել էի նրանց առաջ բանաստեղծութիւններս արտասանելու, և այն թանգագին համակրանքը, որ ես վայելել եմ նրանցից: Ո՞վ չի հիանայ վերջապէս ու չի յարգի այս հիւրընկալ և ուսումնասէր քաղաքը, միքի ու ազատութեան քաղաքը, անթիւ տարագիրների այս բնական ապատանը:

Սակայն ժընեցիները կը համաձայնին, որ ձմեռը Աեմանի ափե-

րում անհամբոյր է: Հետեապէս հասկանալի են Քիզիկական ստուտուս և տագնապս երբ ես յունեար ամնի այս առաւօրուն, լուսամուտիս ապակիների միջից, հէնց զարթնելուն պէս, տեսայ մի յուսահատ ու սպանիչ մթնոլորտ, մուր հոտոշ մի զարշելի մառախուղ, որ մինչև իսկ ներքին սենեակներն էր թափանցում:

Յանկարծ բարեկամս, որի հիւրն էի, ներս մտնելով սենեակս ասում է ինձ ուրախ շէմքով.

«Վամենում էք արեգակը տեսնելու: Սկզբում կարծես թէ չարածըճի կատակ էր: Այ ամենևին. շրանից հեշտ բան չըկար: Պէտք էր միայն կառք նստել, ուղևորել մինչ մի որոշ բարձրութիւն Սալե լեռան լանջին, ապա մագլցել քանի մի քայլաչափ ոտով սարի վրայ և շուք կը գտնէք մառախուղից վեր, կը տեսնէք արևն ու կապոյտ երկինքը:

Ճշմարիտը պէտք է խոստովանել: Ահաւասիկ մի զւարճանք, որը անկարելի է ձմռան մէջ վաչելի, Պարիզում, նոյն իսկ Մոնմարտրում Սակրէ-Վէտոր աշտարակի զագաթին վրայ:

Պարզ է, որ ուրախութեամբ ընդունեցի այս հրապուրիչ առաջարկը ու մի կէս օր միջոցից յետոյ մենք նստեցինք մի շատ չարմար լանդօջում, որի պարուհանները սակայն անթափանց էին շրտի մառախուղի պարծառով, և այսպէս զրկւած էինք արպաքին աշխարհի տեսութիւնից:

Սկզբում արշաւում էինք բաւական երկարատեւ միջոց արագաքայլ, ապա հանդարտ, վերելքը ձիերի գործած ճիզից զգալով միայն, որը կառքի մէջ նստածին պարզապէս զգալի է: Երբ մեր կառքը կանգ առաւ, սուք շրինք գետին, շրջապարւած ամսերով:

Յուրաբ խիստ էր շաղկապ: Տասը քայլաչափ հեռաւորութեան վրայ ոչինչ չէր տեսնուում: Սակայն հարկ էր դեպնին նայել անիւներից առաջացած ախոսների և կէս սառած ցեխի մէջ չընկնելու համար: Ճամբի աջ ու ձախ կողմերում ծառերի բուները թեթեւակի սևացած կարծես թէ բամբակի մէջ փաթթւած լինէին: Քէ և ես, այն ժամանակներում, լաւ որդանաց էի—աւանջ այժմ այլ ևս չեմ—վերելքը ինձ ծանր թւաց: Մարդ քրտնում էր վերարկուի տակ, հեթեթում էր, և մենք, ես ու ընկերս, քիթ ու բերնից թանձր գոլորշի էինք արտափչում: Օրն իսկոցն ցրում և խառնուում էր մշուշի:

հետո Սահայն չկենելով ձեռնափայտերին ու ալպինիարների նման երկայնաքայլ առաջանալով Դոնդալորէն դնում էինք և բարձրանում փոքր առ փոքր սպիտակ գոլորշու միջով:

Վերջապէս այդ գոլորշին թեթևակի ներկեց վարդագունի, որ արևի ներկայութեան նշան էր: Մենք մերձենում էինք մեր նստատեղի կէտին: Այժմ մենք որոշում էինք քարափների թաց շալարը, կաշինների ճիճուս կեղևը, մշտաբերև մացառների կանաչութիւնը: Ի վերջոյ մեր Դիմացը մշուշից Դուրս ցըցեցան ելևինների կապարները, և մեր գլխից վերև փարածեց քնքոջ ու ընդիր կապուտակ լոյս:

Այս երկինքն էր. մենք ամպերից վեր էինք գտնուում:

Կարող եմ հարիւր փարի ալրել — որ չեմ ցանկանում և որ կը լինէր անմիտ ու գայթակղիչ — առանց մոռանալու սքանչացումս, արքունս, որ ինձ փրկել ու կաշկանդել էր այն միջոցին հրաշալի տեսարանի Դէմ:

Մենք գտնուում էինք մի փեսակ ստրաւանդի դադաթի վրայ, որտեղից մեր յորս բոլորը փարածուում և ծաւալուում էր մեր աչքի առաջ կաթնապօշն ու անեզր ծովածոց. այդ մառախուղն էր, որի միջից բարձրացել էինք և որի անդունդի մէջ գտնուում էր ժընկն իր լիճով: Այդ գոլորշու ծովից լսուում էր ձիչ, կոչ, կառքերի գըզըզոց, երկին շոյեկառքի սուր սոյլ, մեծ քաղաքի ամրոյշ Դղորդը: Ես երազեցի այնտեղ խորճաւոր Սարանտիդը ու յիշեցի Իս քաղաքի առասպելը, որն անդնդատոջ կորաւ Մորբիհանի կոհակներում և որի մասին փոթորիկից բռնած նուաստիները հաւաստաբոււմ են թէ լսոււմ են անհետացած քաղաքի զանգերի շողանջը:

Մեր Դիմացը, այսպէս ասած, միւս եզրի վրայ, ամպերից վեր էր նայում Իւրա լեռնաշղթան բոլորովին ձերմակ, այն ինչ մեր աջակողմը կաթնապօշն ովկիանոսը հորիզոնում կորչում և անհետանում էր անորոշելի երկնեքանդներով երկնքի գոհապ լազարդում: Երբեմն Լեմանի ամար թռչունը վեր էր թռչում չանկարծ մշուշապատ խորխորարից, սլանում էր մի երկու բուրբալապի լայնածաւալ լոյսի մէջ ու ժգին թեւահարումներով. ապա մտնում, ընկղմում էր ամպերի մէջ սուր ձիչ արձակելով, կարծես թէ ուղում էր անդունդի մէջ սողացող մեծ քաղաքի բնակիչներին ծալրել սրանով. և ոչինչ: չկար աւելի զարմանահրաշ քան թէ այս սպիտակ ծովը:

որտեղից վերթուում և նորից սուզում էին անդադար թռչունները: Այս ամեն հրաշալիքների վրայ լողում էր յաղթանակօրէն ձմեռային, պարզ ու պաշարեզակը երկնքում, փարածելով հեռուն ձիւնապարզագագթների վրայ մի պաշտելի եռանգով մա.ի ցոլք, մեր շուրջը գտնուող թաց արօտները զոհարի նման շոյացընելով:

Այն, կը յիշեմ միշտ սրտիս անուշիկ թաթիւը, ոգևորութիւնս. խորունկ հառաչները, երբ, հակառոյջ ու մաշլ մառախուղի միջով շտաւրին վերելքից յետոյ, ես գտնուեցի անսպասելի կերպով բնութեան այս շիւթախաղի շէմ. շիւմաց և մնացի՛ ապշած այնչափ փառահեղութեան և կարարելութեան հանդէպ:

Ի՞նչ պարծառով սակայն արդէն վաղուց անցած ու կարելի է կեանքիս մէջ միակ այդ հրաշալի փառութեան յուշը վերանորոգում է ինձանում այսօր այդչափ յամառօրէն:

Ա՛հ, այդ նրանից է, որ ես փանջուեցի սոսկալի կերպով և շարձեալ փանջում է մարմինս ամեն օր. այդ նրանից է, որ ահա, ինձ համար, հասել է արդէն կեանքիս ձմեռը, ծերութիւնը իր փառութիւններով: Շատ ժամանակ չէ անցել, որ այս անկումը յուսահարեցնում է ինձ և ես շնչասպառ էի լինում խաւարային մառախուղի մէջ: Բարեբախտաբար բարեպաշտ ու հայրասնում բարեկամիս աջը հասաւ ինձ օգնութեան, նա ինձ հրամայեց հաստատ բարեսրտութեամբ կանգնել ուղիղ ձամբի վրայ ու բարձրանալ շէպի լոյսը: Անչափ բախտաւոր եմ զգնելով վերստին մէջս հոգուս և մանկական աղօթքներին մի փոքր մասը: Ս՛հ, քաղցր է լինել հեզ, հաւատ ու նենալ ու հնազանդել: Հազիւ անցել եմ առաջին կայանքը և ահա ցրում է գոռոզութեան ու ամբարիշտութեան մառախուղը, սբ ինձանից թաքցնում էր ուղիղ ձամբան:

Եւս բարձր, հոգի իմ: Միշտ շէպի վեր: Երկնքի վրայ մեզ փեսանելիներինցն էլ առաւել բարձր: Ի՞նչ յիշողութիւն է վերանորոգում մոքիս մէջ ներկայ ժամին: Սարի վրայ ես բարձրանում էի շէպի արեզակը միայն: Այսօր ես ամբառնում եմ շէպի մի աւելի ապշեցուցիչ անհամեմատ սրբութիւն. որովհետեւ հրեշտակապետի շար գեղեցիկ ասութեամբ՝ արեզակը Աստու սրբերն է միայն:

## ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՄԻ ԳԻՇԵՐ

(La nuit de Décembre)

ԱԼՓՐԷԴ ԴԸ ՄԻՒՍԵՐԻ՝—Քարգմ. ՅԱԿՈԲ ՏԵՐ-ԳԷՈՐԳԵԱՆՅԻՒ

### Գ Ո Է Տ

Այն ժամանակ շեռ աշակերտ էի.  
Մի դիշեր արթուն, ու մենակ նստած  
Եի շահլիճում մեր առանձնակի.  
Սեղանիս առաջ լուս կանդնեց յանկարծ  
Մի աղքատ մանուկ, ամբողջ սևերում,  
Որ եղբորս պէս ինձ էր նմանում:

Գեղեցիկ էր նա, բայց ղէմքը պտուր.  
Մօտեցաւ. մոմը ցոլում էր աշօտ,  
Կիսաբաց գիրքս կարդում էր նա լուս.  
Եւ մնաց աշնակա մինչև առաւօտ,  
Գլուխը թեթև հակած իմ թևին  
Մտախոհ, անուշ մի ժպիտ աչախն:

Տասն ու հինգ տարիս պէտք է լրանար.  
Մի օր պատրի դնացի մենակ  
Թաշանձով ծածկած մի կանաչ անտառ.  
Եկաւ ու նստեց իմ գէմ ծառի տակ  
Մի երիտասարդ, ամբողջ սևերում,  
Որ եղբորս պէս ինձ էր նմանում:

Ճոյց Կուր խնդրեցի, առչիս ցոյց Կուր ինձ:  
 Մի ձեռքին կար վին<sup>1</sup>, մի փունջ միւս ձեռքին,  
 Հիւսւած վայրի թարմ վարդենիներից.  
 Բարեկամաբար ողջոյն Կեց լուս,  
 Ապա կիսադարձ չենեկով ծառին  
 Մայրնանիչ արաւ հեռուն մի բլուր:

Երբ ես Դեռ սիրոյ էի հաւապում,  
 Մի օր միայնակ սենեակում նստած  
 Առաջին աղէպս էի արտասուում—  
 Եկաւ և նստեց կրակիս Դիմաց  
 Մի օտարական, ամբողջ սևերում  
 Որ եղբօրս պէս ինձ էր նմանում:

Մտածկոյ էր նա, մռայլ վշտահար,  
 Զախ ձեռքին բաց սուր, մինչ անշարժ իր աջ  
 Գէպի երկինք էր ցոյց տալիս չամաւ.  
 Նա էլ իմ վշտից տանջւում էր, ասես:  
 Յանկարծ մի խորին այձակեց հասաչ  
 Եւ անյայտացաւ... Երազ էր կարծես:

Այն տարիքի մէջ, երբ մենք ստահակ  
 Շքեղ խնջոյքին կենացն ենք պարպում,  
 Մի օր ես ևս վերցըրի բաժակ.  
 Եկաւ և նստեց Դիմացս ժպ, ուն  
 Մի զրօսակից—ամբողջ սևերում,  
 Որ եղբօրս պէս ինձ էր նմանում:

Նա ստահած ունէր վերնազգեստի տակ  
 Արդէն քրքրւած իր հին ծիրանին,  
 Գլխին շորացած մրտենու պսակ.  
 Իր նիհար ձեռքը—ձեռքս էր որոնում:

<sup>1</sup> վին=երաժշտական գործիք:

Բաժակս Դիպաւ նրա բաժակին—  
Դողշոջուն ձեռքիս փշրեց խփոյն:

Անցաւ մի գարի, խաւար սև գիշեր,  
Ես ծունկ խոնարհած այն մահճի մօտին,  
Ուր իմ սիրելի հայրս մեռնում էր,  
Տեսայ վշտահար մի որբ սնարին  
Նստած էր լռիկ, ամբողջ սեւրում,  
Որ եղբօրս պէս ինձ էր նմանում:

Աչքերը լեցուն արփասուքներով՝  
Թւում էր լինել վշտի հրեշտակ,  
Միրանին կարծես ներկած արիւնով  
Գլուխը շրած մի փշէ պսակ,  
Վինը—անկիւնում,  
Ու սուրը—սրբում:

Այնպէս պարզորոշ չիշում եմ նորան,  
Որ այնուհետև իմ ամբողջ կեանքում  
Ես ձանաչել եմ ամեն մի վտչրիեան.  
Մի օտարտփի երևոյթ անքուն,  
Հրեշտակ թէ Դև՞ լոկ ամեն քայլիս—  
Տեսնում եմ սրւեր իմ—բարեկամիս:

Երբ այնուհետև չողնած փանջանքից  
Վերածնւելու փոխւելու յուսով  
Ինձ պստրեցի իմ Պրանսիայից,  
Երբ զբօսնելու անհամբեր տինչով  
Յանկացայ երժալ, երթալ որոնել  
Յոյսի շնորհներ,—

Ապենինների ելեէջքի մէջ  
Պիզա, Կոլոնից, ափերում Ռայնի  
Մառտր Նիցցայի հովիտներում պերճ,

Ապարանքներում Ֆլորենցացի,  
 Հին խրճիթների ջարկի փակ — Բրիգում  
 Եւ աւեր Դարձակ Ալպերի զրկում;

Ու Ջենովական կիրտնինների,  
 Վէլէի կանաչ խնձորինների,  
 Սպերներրի փակ, Պաւր, Վենեպիկ,  
 Կապաշի Լիդօ, մի շիրիմի  
 Խորերի վրայ հանգում է, մեռնում  
 Գժգոյն ծուփերով գորշն Աշրխարիք:

Եւ ես ամեն րեղ, ուր այս ընդարձակ  
 Վնասման երկնի կամարների փակ  
 Մաշել եմ սիրոյս, աչքերս լարել,  
 Մի անբոյժ վէրքից արին եմ ծորել,  
 Ուր Կալ Ջանձրոյթը թմբերի վրայ  
 Ինձ ման է ածել, հանդստացրել:

Ամեն րեղ — ուր ես անյագ, անշաղար  
 Որոնում էի մի անյայտ աշխարհ,  
 Ես հերեւել եմ իմ ցնորքներին.  
 Ամեն րեղ — ուր ես չէի ապրել Դեռ —  
 Միշտ րեսածներըս րեսայ ես կրկին՝  
 Մարդկային Դէմքեր և իր կեղծիքներ:

Ամեն րեղ, ուր ես իմ անվերջ ճամբին,  
 Ամեն րեղ, ուր ես ուզեցի նիրհել,  
 Ամեն րեղ, ուր և կոխել եմ դեպին,  
 Գալիս նստում էր՝ խոհերը ձակարին,  
 Մի անյայտ թշուառ, ամբողջ սևերում,  
 Որ եղբորս սէս ինձ էր նմանում:

Ասա, հիվ ես Դու. Դու, որ այս կեանքում  
 Տեսնում եմ ես միշտ իմ ճանապարհիս.

Մեղամաղձանքին ես չեմ հաւարում—  
 ես չեմ հաւարում, որ շու ճակարիս  
 Սև ու չար գիրը կարող ես լինել:  
 Շար համբերող է անուշ ժպիտդ,  
 Անչափ գթոր եմ քո արտասուէքներ.  
 Տանջանքիս քոյրն է նոյն իսկ քո վիշաբդդ,  
 Բարեկամութեան է նա նմանում.  
 Եւ քեզ տեսնելով ես Տէրն եմ սիրում:

Ո՞վ ես. շու բարի հրեշտակս էլ չես.  
 Երբէք ինձ ոչինչ չես փալիս շու լուր.  
 Տեսնում ես ցաւերս—զարմանում եմ ես,  
 Բայց իմ փանջանքս շիտում ես շու լուր.  
 Քսան փարի է հերկում ես ինձ,  
 Բայց շեռ չըզիտեմ ինչ անուն փամ քեզ.  
 Արդեօք գալիս ես շու Ասրեաճանից.  
 Ո՞վ ես, որ առանց ուրախանալու,  
 Ժպտում ես յէմքիս. ու կարեկցում ես,  
 Առանց մի բառով մխիթարելու:

Դեռ այս երկից քեզ շարձեալ տեսայ:  
 Տխուր գիշեր էր. մութ պայտահանիս  
 Քամին իր թևով քաւում էր անցնում.  
 Եւ ես միայնակ ընկած անկողնիս՝  
 Այրող համբուրից շեռ չըզովսցած  
 Մի շիւթող կէտի աչքերս չառած,  
 Անըջում էի, թէ կինը ինչպէս  
 Մոռանում է շուր անցած ամէն ինչ.  
 Աւ քայքայւում էր—զգում էի ես—  
 Կեանքիս մէկ մասը չամբ ու քիչ-քիչ:

Ժողովում էի անքուն գիշերին  
 Նամակներ, մազեր—սիրոց մնացորդ.  
 Աղջը տխանջիս կրկնում էր նախկին

Յաւիտենական երգումներն այն չորք,  
 Այդ սուրբ մասունքներն էի ես զննում,  
 Որոնք շողշողում էին իմ ձեռքում,  
 Ու մէջը թաղած—սրտիս արցունքը,  
 Մտածում էի, նոյն աչքունքը,  
 Որոնք այդ բոլորն արտասուել էին,  
 Չէին ճամբելու նոցա վերաբին:

**Մ**ի պինդ կտորով փաթաթում էի  
 Այս յուշիկները խաղաղ օրերի.  
 Ամեն րոպէս բան—մտածում էի—  
 Պարտոյզ է միայն վառուղ մագերի.  
 Մտացութեամբ մէջ էի ընկղմած,  
 Խորութիւնն էի ամեն րոպէս փորձում.  
 Հեռու աշխարհից արտասուում կամաց,  
 Ու թաղած սէրս էի ես ողբում:

**Ե**ւ կնքում էի սև մոմէ կնքով  
 Այս անգին զանձը. չէի յանդգնում  
 Ինքըս հաւատալ. ո՞ղջը ողբալով  
 Դարձնում էի յետ—բայց շեռ կասկածում:  
 Օ՛, թոյլ կին, հպարտ, անմիտ արարած,  
 Դու այդ կը յիշես կամքիդ հակառակ.  
 Ինքնախաբուծիւն, օ, Բարձրիւլ Ասուած:  
 Այդ շառն արցունքըդ, քո այդ հեծկլտանք  
     Էլ ինչու համար,  
     Եթէ սէր չըկար:

**Այն**. Դու փանջում, լալիս ես մաշում.  
 Բայց քո ցնորքը մեր մէջն է մնում.  
 Դէհ, մնաս բարե. դու էլ կը հաշես  
 Ժամերը, որոնք բաժանում են մեզ.  
 Դէհ, զնացէք, զնացէք և սառցէ սրտում  
 Տարէք գոհացում իր հպարտութեան.

Դեռ իմն շարձեալ թարմ է, եռանդուն,  
Բայց ձեր պարծառած շարիքի վրան  
Այլ շարիքներն են գալիս տեղ դրնում:

Դէ՛հ, գնացէք. անմահ բնութիւնն  
Ամեն ինչ տալ ձեզ չի բարեհաճել.

Մ, թշուա մանկիկ,

Որ ցանկանում ես լինել գեղեցիկ —

Չըզիտես ներել.

Դէ՛հ, հեպեցէք ձեր ճակատագրին  
Եւ դու էք քամուն մեր սէրը նախկին,  
Չեզանով ամեն ինչ մարդ չէ կորցնում:  
Բայց չէ որ անչափ քեզ սիրում էի.  
Եւ եթէ արդէն թողնում ես, գնում,

Ասա էլ ինչ՞ու

Ինձ սիրում ես շուր:

Բայց մէկ էլ յանկարծ գիշերւայ մթնում  
Մի սուեր, որ մեղմ սահում էր անցնում,  
Բացեց վարադոյրն և ուղիղ ահա  
Եկաւ ու նստեց անկողնիս վրայ:  
Ասա, ո՞վ ես շուր. ինչ ես ցանկանում.  
Դու մնայլ պատկեր, շուր փոքր թուշուն,  
Որ սեւեր հագած շուրջս յաճում ես  
Երանգ է արդեօք, թէ դա հայելում  
Սեփական շէնքս է աղօտ նշմարում:

Ասա, ո՞վ ես շուր, իմ ջահելութեան  
Ուրախան սրդեօք. թէ թափառական  
Դու մի ուխտաւոր: Ասա, ինչ՞ու քեզ  
Տեսնում եմ ես միշտ խաւարում նստած.  
Ո՞վ ես. — վշտերիս սրտազին հիւրն ես,  
Թէ մի այցելու, մի ասանձնակեաց.  
Եւ ի՞նչ եմ արել, որ շուր անշաղթար

Հեղինակում ես ինձ մեր այս աշխարհում.  
 Ո՞վ ես, ո՞վ ես Դու... արդեօք մի եղբայր  
 Որ յայտնում է ինձ իմ սև օրում:

## Ո Գ Ի

Քարեկամ, մի հօր սրդիք ենք, զխոցիր,  
 Բայց ինձ չըկարծես հսկող հրեշտակ,  
 Եւ ոչ էլ մարդկանց չար ճակատագիր.  
 Միայն չդիտեմ թէ ի՞նչ ոչժի պակ  
 Իմ սիրածներս պալիս են հասնում  
 Այն ցեխի կոյտին, ուր մենք ենք գտնուում:

Չըկարծես ինձ Դու, և ոչ էլ Ասուած.  
 Բայց իմ իսկական անունս գիր,  
 Երբոր քու սիրտդ ինձ ղեղբայրս ասաց.  
 Ո՞ւր էլ Դու գնաս — ուր էլ որ լինես,  
 Ես այստեղ եմ միշտ, մինչև օրդ վերջին,  
 Մինչև որ շիրմիդ վրայ կը հանգչիմ:

Երկինքը ինձ է քո սիրտը չանձնել:  
 Եւ երբ քեզ պատեն վշտեր խոցողուն,  
 Ե՛կ ինձ մօտ վստահ. և Դու սր կողմ էլ  
 Որ քայլերդ ուղղես, ես անխօս արթուն  
 Ուղեկից եմ քեզ. բայց ձեռքդ սեղմել  
 Ձեմ կարող: Անունս — Միայնակու թիւն:

1897. Յուլիս

ժրնե.

## Ե Ր Ա Ձ...

### Մ. ԵՍՍՅԵԱՆԻ

Այլ երազ էր ցնորամիտ...

Ս. Եսե-Այլ

#### I

Մեղսագործների վերջերքն էր, որ Ազիզենց Պարսին Բալխանուց վերադարձաւ գիւլը: Վերադարձաւ, շարերի նախանձը շարժեց և շարերի էլ ակորժակը բացաւ... Նրա կարմիր շալէ արխալուղը, արծաթէ գօպին, մահուդ չուխէն՝ թեւերի փակը կանաչ կտոր ձգած, երկարավիզ կօշիկները, կլոր գլխարկը և վերջուպէս վիճակախաշում ընկած չուզունէ փոքրիկ ժամացոյցը ում նախանձը չէր շարժել Զանգեզուրում, այն էլ այդպիսի մի չիտ ընկած գիւլում... Իսկ եթէ դրա վրայ աւելացնենք բերնէ-բերան անցնող, բերած խալաթների և ճոթ ու կտորների պատմութիւնը, ապա պարկերը կտարբեալ կը լինին: Ճիշտ է, շարերն են օտարութիւնից պարաքելիս սանշուղներն բերել, շարերն են արծաթէ ժամացոյցով ու քամարով գիւլը վերադարձել ու անմեղ պատանիների ակորժակը զրգռել, բայց Ազիզենց Պարսին մի ուրիշ բան է. նրանից եզրուի շարիբաւորն հազիւ թէ գիւլումը պատահած լինէր. և հէնց դա էր պատճառը, որ ողջ գիւլը մի բերան դարձած, նրա մասին էր խօսում, նրա գովքն անում: Մարերը, նոյն իսկ, իրենց փունն էին շնորաւիրում և պարմել փալիս շէսից-շէսից: Պարսին Բալխանին ար վառ գոջներով էր նկարագրում: Մարերը երանի էին փալիս նրա մօրը, որ այդպիսի աշխատարարն արդայ ունի:

—Տունդ չքանդուի, արդարէր. արդայ է է, աշխարհն հաւաքել

ու իրենց փունն է թափել. ասում էին բարեկամները և հեռանում:

Բայց ով էր Ազիզենց Ծարսին: Մի հասարակ «մասլենչիկ», որ մի քանի փարի շարունակ Քալախանի հոգած կազարմաներում (բանեորանոց) օր ու գիշեր անելով, բանեորութիւնից հասել էր մասլենչիկ շիկու (թեան (իւլ քսոյ) «բարձր աստիճանին», մի պաշտօն, որին այսօր հազարաւոր Փարսիներ՝ իշէալ շինած, հասնել են ձգարում: Տարիներ շարքաշ աշխատութեամբ ձեռք բերած կոպէկները, փունն դնալու ժամանակ՝ կերպով ծախսելով, նա մազի չափ անգամ չէր շեղել այն շաւից, որ փարիներից ի վեր դժել էին զանազան Փարսիներ... Ուրիշներին զարմացնելու համար արդեօք, թէ հէնց իրենց շարքաշ կեանքից յետոյ մի «լաւ ապրելու» համար, այդ ոչորմե ի արարածները, շափ անգամ, արիւնտով ձեռք բերած մանէթները կոպէկների փեղ են ծախսում: Հաւանական է, որ հէնց ուրիշներին զարմացնելու և շլացնելու համար. մանաւանդ, որ շափերը վերաշաւնալով օրարութիւնից, անմիջապէս ամուսնանում են, կամ առնւազը նշան են դնում... Այդ շափերից մէկն էլ Ազիզենց Ծարսին էր, որ գիւղում անջքան աղմուկ էր հանել...

Ծարսու մօր «երջանկութիւնը» հանգիստ չէր փալիս գիւղացի մայրերին. ամեն ոք երանի էր փալիս այն օրին, որ կը փեսնեն իրենց որդուն էլ «այն օրին» հասած: Ահա այդպիսի մայրերից մէկն էլ Շիրիկենց Սօնան էր, որ իր որդի Սքօին Քալախանի ճանապարհ դնելիս, եկել էր մինչև գիւղի աղբրի մօտ և անշաղաբ Ծարսուն էր օրինակ բերում՝ խօսելիս:

— Որդիս, ասում էր նա. — Ինչ ուզում ես արն, միայն որ գիւղը վերաշաւնաս, անուններս դեղնովը շրաս. մենք էլ մեզ համեմատ փուն ենք. «չոստ ու շիւշման»-ի նայիր, «նամուս»-չէջրաթ » արա: Օրէնքը այն է, որ փշան օրարութեան մէջ ինչ էլ որ անէ, հարցնող չի լինելու. միայն թէ վերջը լաւ լինի, որ պարզերս ս' ճնողաց երես շուրս գայ... Մի օր սոված մնալով, մարդ չի մուսնիլ. որ յետ շառնաս փուն, քեզ չեն հարցնելու թէ ինչ ես կելել. ասելու են՝ ինչ ես բերել. գրպանդ են պոռելու: Գրպանումդ որ եղաւ, խօսքը քոնն է... Մի խօսքով, այնպէս արն, որ Շիրիկենց Աշաջանին գիւղամիջում պարզերես անես...

Այս խօսքերով Սաքօին ճանապարհ գրին նաւթի քաղաքը:

## II

Տասնևվեց փարեկան Սաքօն իր համագիւլացիների հետ հասաւ Բալախանի, որոնց միջոցով և Վեդեօրչչիկի պաշտօն ստացաւ. ուրիշ ոչ մի պաշտօն այնքան հեշտ չէր ճարուում... Ե՛հ, ինչ անենք, մենակ ինքը չէ, իրեն նման հազարները կան. ինչպէս նրանք, այնպէս էլ ինքը: Բայց կազարմաները... Այդ արդէն շատ ծանր էր Սաքօի համար: Հարիւրաւոր թուրք ու հայ, կեղտոտ բանտրների հետ պառկել մի մութ ու խոնաւ նկուշի մէջ, առաջին անգամից սարսափեցրեց նրան: Հէնց ուզում էր, առաջին պայահոշի հետ գիւլը փախչի, բայց մէկ էլ որ յիշում էր Ազիզենց Պարսուն, յետ էր կենում այդ մտքից. մտածում էր. «Ի՞նչո՞ւ յաւիտենական չէ, որ մարդ չկարողանայ շիմանալ. ժամանակաւոր բան է. մարդու մի որից կախ փալու էլ որ լինին, էլի մի փարի մի փեղ կարող է մնալ: Զէ որ վերջը լաւ կը լինի...»

Վերջը լաւ կը լինի... Ուրիշ խօսքով մի օր՝ իր վերադարձին գիւլում մի քանի մարդկանց պիտի զարմացնէ իր գեղեցիկ շորերով...

Վեդրաչու պաշտօնին շուր չընտելացաւ: Մանաւանդ գիշերուայ ծառայութիւնը անսիրանելի էր. ամեն ինչ կտար, միայն թէ գիշերները հերթ պահել չտային. բայց ու՞մ կարող էր յայտնել իր միտքը, և ո՞վ կընդունէր այդպիսի փարօրինակ խնդիր: Ի՞նչ ասել է լինել պարտալռչիկ և կամ վեդեօրչչիկ... Գիշեր-ցերեկ, չորս հինգ ժամ շարունակ փեղը մխուած, անթարթ աչքերով և լարւած ու շարժութեամբ նայել նաւթահան թոկին, նոցն իսկ փարիներով ծառայածների համար մի շնոր Գժւար աշխատութիւն է. ուր մնաց: Սաքօի պէս պարսոյ-սարսոյ պրփած, անհոգ այծարածի համար, որ սովոր էր օրական հարիւր անգամ ծառերի կտրարները բարձրանալ, սար ու ձոր չափչփել իր քէֆին: Ախր Սաքօն ո՞վ, վեդեօրչչիկութիւնը ո՞վ... Զմեռուայ երկար ու ցուրտ գիշերներին նաւթահորերում հերթ պահելը՝ հեշտ բան է Սաքօի, նման, մօր պահած երեսանների համար: Նա մօր պահած է. ինչ անենք, որ ուրիշների ցաւով վարակւած, այժմ ընկել է Բալախանու նաւթի ցեխերի մէջ: Տանը եղած ժամանակը, որ երեկոցեան հանդիպ վերադառ-

նում էր, աարֆ) չէր անում, որ իր արեխները հանէ ոսկերից. քոյրերն էին գալիս իրենց ազիզ եղբոր արեխները քաշում, ոսկերը լւանում և փափուկ անկողնի մէջ շնում: Իսկ այժմ...

## III

Չմեռւայ գիշեր էր: Յուրօն ու խաւարը պատել էր ամենուրէք. հանդարտ կերպով արեղում էր ձիւնը և երկիրը ծածկում փափուկ սաւանով: Ամեն ինչ ընկղմւած էր խորին լուսթեան մէջ. միայն երբեմն երբեմն լսում էին փորիչ-մեքենաների (հոր փորելու) խոլ ճռնչիւնը: Գիշերային այդ պահուն մեքենաներն էին միայն, որ փաք-փաք գոլորշիներ արտադրելով, անընդհատ գործունէութեան մէջ էին, որոնց մերթ արագ և մերթ ընդհատ ձայները միախառնւելով գիշերային սուլիչների ձայների հետ, մի խորհրդաւորութիւն էին տալիս այդ համապարած լուսթեանը:

Սաքօն և իր ընկերը կանգնած նաւթահան ճախարակի մօտ, կամաց-կամաց նաւթ էին հանում. ըստ երևոյթին շատ չոգնած էին, որովհետև չորս ժամ շարունակ աշխատում էին արդէն: Սառած ոսկերը տախտակներից էին կպել, բայց այնուամենայնիւ քունները փանում էր. որքան աշխատում էին արթուն մնալ, երգում էին մեղամաղձիկ բայաթիներ, սակայն ի զուր. արդէն թուլացել էին: Մի քաղցր նինջ սկսաւ փրփել նրանց: Ննջում էր Սաքօն և երազ տեսնում:

Հարիւրաւոր խառն ի խուռն տեսարաններ գալիս անցնում էին աչքի առաջից: Նրան թւում էր, որ ինքը արդէն այլ ևս վերջօրը չէի չէ, այլ մի ուրիշ, աւելի բարձր պաշտօնեայ. փող է աշխատել, հարսպացել և գնում է հայրենիք: Նոր շորեր է հագել, ճիշտ Ազիզենց ֆարսու նման: Վարմիր շալէ արդալուրջ, մահուր չուխա, արծաթէ քամար, երկարավիզ կոշիկներ...

Արդէն փանն է: Հայրը, մայրը և քոյրերը ու բարեկամները հաւաքւել են և շրջապատել իրեն ժպտադէմ. շուրջը անբաւ ուրախութիւն է փրում. ամենքն էլ խալաթ պիտի սրանան: Հանում է մօր «մերինոս» արխալուղացուն, հօր «լասպիկ» արխալուղացուն, քոյրերի կանաչ ձարլաթները, բարեկամների ու ազգականների խալաթները և բաժանում: Ամենքն էլ ուրախ են, ամենքն էլ շնոր-

հակալ... Աչքալուսանքի եկածները թէյ են խմում և ուրախ-ուրախ խօսում: Դրանց մէջ է նոյն իսկ Ազիզնեց Պարսին, որ եկել էր Բալասանուց փեղեկութիւն հարցնելու: Պարսուն փեսնելուն պէս նա ժպտադէմ հարցնում է.

—Ա՛ Պարս, քեփդ հալդ, ի՞նչպէս ես:

—Քէֆս խարաբ է, գիւղում օրը լաւ չի անցնում: Ուրիշ բան էր Բալասանումը...

Թրը՛խկ. Սաքօն: սարսափած բացաւ աչքերը: «Ժալոնկան» (նաւ-թահան ցիլինդր) բարձրացել էր նորից ու ամբողջ բուրգը ԴՐՆԸՐ-դեցնելով, ուժով կպել էր վերեին: Ժալոնկայի ԴՂԴԴԳԻԳ էլ վրայ հասաւ քացխած գործակաւորը—մի պինդ ապրակ նախ Սաքօին և ապա ընկերոջը:

Ե՛, ապրակը ոչինչ, բայց որ մի մանէթի շարաֆ (փուզանք էին գրելու):

«Գիւղում օրը լաւ չի անցնում. ուրիշ բան էր Բալասանումը»:  
Հնչում էր շեռ Սաքօյի ապրակից խժժացող ականջին:

## ԱՂԵՐԻԴ ՄԷՋ

ՎԱՀՍՆ ԹԱԻԱՐԲԵԳԵԱՆԻ

Ամէն անգամ երբ կապուրակ  
Աչերիդ մէջ եմ նայում,  
Ինձ թւում է ծով անչափակ  
Ծով փոթորկոյ ու անհուն,  
Որ փրփրուփ, լեռնակուրակ  
Ալիքներով վիթխարի  
Քաշում է ինձ ու սպանում,  
Մարմնիս սարսուռ է փալի:  
Ու շուր նեղում եմ ես փարում  
Քու թարմ կրճքիդ շեռայի,  
Աչերդ անչազ, ջերմ համբուրում,  
Որ վախը՞ քիչ փարայի:

ՈՉ...

ՎԱՀԱՆ ՔՍԻԱՐՅԷԳԵԱՆԻ

Ո՛չ, մի՛ յիշիր ինձ՝ ո՛չ արշալուսին  
Միծաղկոյր գարնան,

Ե՛ւ ո՛չ էլ սգւոր մայր մընող լոյսին  
Գորշ աշուն օրւան.

Ո՛չ, մի՛ յիշիր ինձ՝ ո՛չ կեանքի ետուն  
Զւարթ խնձորում,

Ե՛ւ ո՛չ էլ երբ քեզ թախծութեան անհուն  
Մոզն է փոթորիում.

Ո՛չ, մի՛ յիշիր ինձ:

# ՀՈԳԵՊԱՃՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՈՐԱ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ ՄԵԶԱՆՈՒՄ՝

Ա. ՏԵՐ-ՊՕՂՈՍԵԱՆԻ <sup>1</sup>

Կրօնները շարունակ այնպէս չեն եղել, ինչպէս նոքա գոյութիւն ունին: Պատմութիւնից իմանում ենք, որ նոքա մի սաղմնային շրջութիւնից աճել և զարգացել են զանազան փոփոխութիւններով, և թէ բոլոր նախնական կրօնները և զարգացած կրօնները իրենց նախնական վիճակում ընդհանրական յենակէզներ, բոլորին չարուկ ընդհանուր զաղափարներ ունին, որոնք անուարակոյս սկզբնականը պէտք է համարւին և որոնց վերարարարդրումը կրօնի փիլիսոփայութեան ամենատառջին խնդիրներից մէկն է:

Բնապաշտութեան (Naturismus) ենթաշրջութիւնը պաշտպանողները ընդունում են որ մարդս, տեսնելով բնութեան հրաշալիքը, նորա տաժ օգուտն ու փնասը, նորա՝ նախամարդու համար անըմբռնելի ոյժն ու զօրութիւնը, իւր բանականութեան համար անբացատրելի երևոյթներին և այդ երևոյթներն իրենց մէջ կրող

<sup>1</sup> Այս տեղածը՝ պատշաճ փոփոխութիւններով, կարգադրել է Բերլինի հալոսանողական ժողովում 1898-99 ձմեռնային սեմեստրի ընթացքում: Տպագրութեան համար պատրաստելուց լեռնոյ ձեռքս անցաւ այս նիւթի համար խիստ հեղափոխիչ մի աշխատասիրութիւն—Dr. M. Abeghian: Der armenische Volksglaube (=Պր. Մ. Աբեղիան—Հայոց ժողովրդական հաւատքը, Leipzig, 1899), որի վրայ անհրաժեշտ ուղարկութիւնը դարձրինք: Ծան. Հեղինակի:

Ներկայ աշխատութիւնը մի քանի ամիս առաջ շրջաւոր էր խմբագրութեանս, և, յօդածազրի ցանկութեամբ, և ոչարձակց իրեն՝ պ. Աբեղիանի նորույս տեսած աշխատասիրութիւնը ի նկատի առնելու համար: ԽՄԲ.:

առարկաներին վերագրում է զերմարդկային, ասուածային բնաւորութիւն, որոնց առաջ խոնարհելու է ստիպուած ինքը, և այդ յարաբերութիւնից ծագում է պաշտամունքը — կրօնի հիմքը:

Բայց կրօնական պաշտամունքը կարող էր ծնունդ տանել սարսափից, վախից: Նախամարդը վախնում է, որովհետև նորա մարածոյութեան եղանակն է անթրօպօպաթիան (= Anthropopathie), այսինքն՝ նա վերագրում է բոլոր արարքին իրերին և երկօյթներին մարդկային ախֆէկտներ՝ մոլութիւն, կիրք, ցանկութիւն, կամք ևն: Սա երևան է գալիս շիցաբանական պարմաճքներում, ուր ոչ մի այն ասուածներին է վերագրում մարդկային բնութեան չարակարգ սրկութիւն, ռիսկալութիւն, վրէժխնդրութիւն, ևն, այլ և անշունչ իրերին, հեղեղաբար ընդունակ՝ մարդուն որ և է չարիք կամ վնաս հասցնելու: Այն ամեն գործօնութիւնը, որը մեր ներքին աշխարհը լցնում է, այսինքն մեր մտածման բազմազան ընթացքը, գգացումների գաղտնաձուլ խաղը, ղէպի որ և է մի բան ձգտելու մեր կենդանի ոչժը՝ որի անսահման ազատութեան մէջն է թւում մեր ամենամեծ բարիքը — անհատի երեխայութիւնը և զիտակցութեան պատանկութիւնը արարքին աշխարհի ամենապարբեր ձևերի մէջ էլ փսնել է կարծում: Եւ մեզ ամենքիս մեր երեխայութեանը և գուցէ շարերին իրենց հասուն փարիքումն էլ այս գգացմունքը փոքր դեր չէ խաղում: միայնակ խիտ անբառով անցնելիս՝ քամու սուլոցը, փերկների սոսափիւնը, սահող առւազի մեղմ գլղլոցը, որ և է կենդանու խուլ մունչիւնը, գոռը, կամ մթութեան մէջ խարխափելիս՝ անօգնական դրութիւնը, անսպասելի պարահարի կարիլիութիւնը յեզ ազդում են մի սարսուռ: մենք զգում ենք վախ ոչ որովհետև իրերը անմիջական կերպով կարող էին մեզ վնասել, — նոցա անվնաս ինչը մենք փորձառութեամբ գիտենք — ոչ, այլ որովհետև նոցա վերագրում ենք մի գործող ևս — հոգի: Ուրեմն բնապաշտութեան ենթադրութիւնը պաշտպանողները, որոնք հաւարացնում են՝ թէ կրօնական պաշտամունքի ամենահին ձևը անմիջական կերպով

<sup>1</sup> Lotze — Mikrokosmos 4. Aufl. 1885 — 88, Leipg. (= Լոթե — Միկրոկոսմոս, 3-րդ փպ.) I, էջ 40

ուղղում է դեպի բնութեան ոյժերը <sup>1</sup>, տնտես են անում այդ ոյժերի մէջ բնակող և շոցա շարժող ու կենդանութիւնն սրտը մի ինչ որ, մի էակը Հէնց այն հանդամանքը, որ իրերը և երևոյթները մտածուում են իբրև մարդանման, իբրև հոգևորաւ ձեւեր, լուսաբանում է հոգու խաղացած գլխաւոր դերը մասնաւորապէս կրօնական հաշեացքների ծագման և զարգացման մէջ. և ամենեւին չափազանցրած չի լինի ասել, թէ՛ բոլոր կրօնական մտապարկերները ամենատարբեր պով կապուած են հոգի մտապարկերի հետ: ... Արեւմտեան ուր որ մի մարդկային համայնքի մօտ արդէն կրօնը, գոյութիւն ունի, գրեթէ մաթեմատիկական ճշգրտութեամբ կարելի է գտնահան լինել, որ այնտեղ հոգեղէնի մասին նոյնպէս որ և է մտապարկեր գոյութիւն ունի արդէն <sup>2</sup>:

Տարակոյս չըկայ որ բոլոր մտապարկերները, որոնք մեր գիտակցութեան պարունակութիւնն են կազմում, ձեռք են բերուած ժամանակի ընթացքում և որ այս մտապարկերները փոփոխութեան և զարգացման ենթակայ են: Նշանակում է որ եղել է մի ժամանակ, երբ շոքա մարդու գիտակցութեան մէջ գոյութիւն չեն ունեցել. ուրեմն և հոգի մտապարկերը իր ծագումն ստացել է ժամանակի ընթացքում: Այժմ ինչիւր է, թէ որպէս կարող էր նախամարդու մէջ հոգեղէնի մասին մի գաղափար կազմել և թէ ինչպէս նա կրօնական պաշտամունքի մէջ այնքան մեծ տեղ պարի ստանար:

Վերևը չիշեցինք, որ մեր մանկութեան և առհասարակ մարդկային գիտակցութեան պարունակութեան շրջանում անթրոպոպութիւն է բնորոշում մտածողութեան եղանակը. այդ ժամանակ պաշտարանական և բարոյական և մեկտեղիկական սպեկուլացիան մեր գործը չեն <sup>3</sup>: Այսպէս և հոգեղէնի գաղափարը միևնոյնն է, ինչ որ մի զգայական մի նիւթեղէն իրի գաղափարը: Աոգորական և ամենօրեայ երե-

<sup>1</sup> Ed. v. Hartmann — Das religiöse Bewusstsein der Kulturmenschheit. (= Լ. Գ. Փոն Լարոման — Կուլտուրական մարդկութեան կրօնական գիտակցութիւնը), էջ 20.

<sup>2</sup> Fritz Schulze: Kosmos (= Յրից Շուլցէ. — Կոսմոս), III. սարկէր. Զան, IV. տետր, էջ 248:

<sup>3</sup> Շուլցէ, նոյն տեղ, էջ 250.

ւոյթները չէին կարող Դրդիւ նախամարդուն, որը ամենից առաջ և միայն իր օրական ապրուստի մասին է հոգում, նա որ աւելի բարձր իշխալ չունի, քան իւր անմիջական գոյութեան պահպանումը և որն արդէն սովոր է մանկութիւնից ի վեր բնութեան շարունակ կրկնող երևոյթներին հանդիսաբես լինելու՝ առանց Դիտել, ըմբռնել կարողանալու, սոքա չէին առաջինը, որ շարժառիթ հանդիսացան նախամարդուն խորհրդածութիւններ անելու: Վիայն մի պարահար իւր կրկնութեամբը չէ վերաբերում հասարակին և անուշադրութեան ստիպում շրջանին. միայն մի բան Դեռ այսօր ևս կիսակիրթ ժողովուրդների համար, իբր բնութեան արգասիք՝ իր հասարակ լինելու պարճառով անուշադրութեան ստիպում արժանի չէ, այլ բնութեան խանդարումն է նկատում և Դորա համար մեծ ուշադրութեան արժանի և զարմանալի է — մերձաւորի մահը<sup>1</sup>: Երէկայ կենդանի մերձաւորը, սիրելին, խնամակալը, պաշտպանը, որի հետ կենսական զանազան և անմիջական շարաբերութեան մէջ էր, այսօր Դիակցած ընկել է զեպին: Տարօրինակ և զարմանալի երևոյթ, նախամարդու համար բոլորովին ոչ-բնական. այժմ նոյն իսկ շատ վայրենիներին մօլմահը ոգիների շարագործութեան արդիւնքն է, որոնք բունի կերպով խլում են մարդու հոգին<sup>2</sup>: Ֆիզիոլոգիայի օրէնքները գտնելու կամ այդպիսի օրէնքներ ըմբռնելու համար նախամարդու հասկացողութիւնը Դեռ շատ տհաս էր. նա չէր կարող հետաքրքրել մահւան ժամանակ երևան եկած օրդանական-ֆիզիոլոգիական զանազան փոփոխութիւններով. նախամարդու գիտութիւնը կենդանական մարմնի

<sup>1</sup> J. Lippert — Der Seelencult in seinen Beziehungen zur althebraeischen Religion. (= 3. Լիպերտ — Հոգեպաշտութիւնը իր շարաբերութիւնների մէջ Դէպի հին եբրայական կրօնը). Berl. 1880. էջ 3.

<sup>2</sup> Պրն. Արեւիանից իմանում ենք թէ այդ կերպ մրածելը հայերիս համար բոլորովին խորթ չէ. «Ամեն լաւ բան — կեանք, օրաւ լուսը, բերկրութիւն, բարեւոքութիւն և այլն... ըմբռնում է իբրև լուսաւոր (բարի) ոգիների գործ, և ամեն վատ բանը — մահ, խաւար, հիւանդութիւններ, Դժբալութիւն և այլն, իբրև գիշերալին շար ոգիների գործ» (Arm. Volksglaube, էջ 7): Բայց երևում է որ այդ կարծիքը լեռն սրբապրել է, որովհետև նոյնպէս էջ 16 կարդում ենք. «Չարոգիները կարող են թէպէտ շարիք և հիւանդութիւններ՝ բայց ոչ մահ պարճառել մարդուն»:

վերաբերեալ, սորա արտաքին (և ներքին) զգայական մասերից այն կողմը չէր անցնում: Արդ, ինչպէս է բացատրում նա մահւան երեւոյթը, ինչ փարբերութիւն է դրնում երէկւայ կենդանիի և այսօրւայ մեռեալի մէջ — Ըստ երեւոյթին, մեռեալի մարմինը իր մասերով ոչ մի փոփոխութիւն չէ կրել. միայն նա ընկած է գետին՝ անշարժ. առաջ այս մարմինը տաք էր, այժմ բոլորովին սառն. կենդանին շնչում էր և նորա արտաշնչութիւնը տաք էր ու արտադրում էր խոնաւ շոգի (որը ցուրտ ժամանակ տեսնուում է), կենդանի մարմնի զանազան տեղերում խփում է զարկերակը. մեռեալի մօտ անյայտանում են սոքա՝ Ան փարբերութիւնը. ահա որտեղ է կարծում նախամարդը մահւան՝ շիակի անշարժութեան պատճառը գտնել: Մահւամբ պակասել է մարդու մարմնից մի բան, որը պատճառ դարձաւ նորա անկենդանութեանը, որը ուրեմն նորա կենդանութեան կրողն էր — նրա հոգին: Վահը, կարելի է ասել, աշխարհ բերաւ հոգիները... հոգին այստեղ առաջին անգամը հոգու մասին մտածելու, մի մտապատկեր կազմելու շարժառիթը ներկայացաւ մարդուն. — հոգին է մարդուս փառութիւնը, նրա զարկերակը (այսինքն երակներում վազող տաք արիւնը) և որ գլխաւորն է՝ նորա շունչը: Մարդու շունչը՝ նախամարդու համար անհասկանալի լոյսի և սուբրի երեւոյթը, որը այնքան նման է մարդուն, կազմում է միսնիւրի հետ այն առարկաները, որոնցից հոգու սկզբնական մտապատկերները երեւակայել են:

Այս առաջին քայլն անելուց յետոյ այլ ևս հեշտ, կարելի է ասել նոյն իսկ, անհրաժեշտ էր առաջ գնալ: Մահով բաժանուում է մարդուց մի բան — նրա հոգին, մարմնին կենդանութիւն պուոյը, այսինքն կենդանութեան զօրութիւնն իր մէջ կրողը և որ շարունակում է ապրել շեռ ևս: (Այստեղ հարկաւոր է նկատել, որ հոգու այսպիսի մտապատկերը միևնոյնը չէ անմահութեան գաղափարի հետ, որովհետև այս հոգին շեռ ոչնչանալու վիճակին ենթակայ է, ինչպէս յետոյ պիտի տեսնենք: Անմահութեան գաղափարը շատ աւելի ուշ ժամանակաց ծնունդ է):

<sup>1</sup> Շուլցէ, նոյնտեղ էջ 251:

Թէ մահից յետոյ հոգին շեռ ևս ապրում է, ապացուցանում է նոյնպէս և նրազը: Թերևս անհիմն լինի պնդել թէ՛ միշտ ևրազի երևոյթներն են եղել, որոնք անմահութեան գաղափարը արթնացրել են<sup>2</sup>, այնուամենայնիւ չէ կարելի փարակուսել, որ երազը մի ուժեղ Ֆակտոր էր հոգու գոյութեան և ապա անմահութեան գաղափարները կազմելու համար:

Մերձաւորը, սիրելին մեռաւ. բայց նորա՝ հոգին շարունակում է ապրել: Սա իր ամբողջ էութեամբը մահացածի ներկայացուցիչն է. նշանակում է՝ նախամարտու անթրոպոպաթիք մրաժողութեամբ, նա կենդանի մարտու բոլոր պահանջներն էլ ունի. նա կարիք ունի հոգածութեան և խնամքի, ու սոքա փակաւին ապրող մերձաւորների պարպականութիւնն են: Այս շարաբերութիւնից ահա առաջանում է պաշտամունքը (պաշտել = ծառայել, խնամել, հաճոյակապար լինել): Աւրեմն ոչ թէ անյայտ գորութիւնների անորոշ վախից, այլ սիրալիր մեծարանքից առ ծանօթ աստածները, որոնք արենակցական ուժեղ կապերով իրենց պաշտողների հետ կապուած են, սկիզբն է առնում կրօնը՝ այս բառի միակ իսկական նշանակութեամբ: Կրօնը սարսափի ծնունդը չէ. ոչ Պաշտամունքը շրահան կրօնների ուղն ու ծուծն է, որն ուղղում է յէպի ծանօթ աստածների հոգիները, և նոցա պաշտօն մատուցանելը — հոգեպաշտութիւնը (Seelencult) սկիզբն է առնում անմիջապէս կրօնի հետ և շոգի գաղափարը ինչպէս զարգացած՝ կապարելադորժուած համարուող կրօնների, նոյնպէս և ամենանախնական կրօնների մէջ երեւան է զայն ու կրօնական պաշտաման աստիականների էութիւնն է կազմում: Բայց անպարակոյս նա չէ կրօնի ծագման միակ Ֆակտորը, որը խիստ բարդ հանգամանքների ծնունդ է, ոչ էլ կրօնների միակ սկիզբնական փարըն է նա:

Հոգեպաշտութեան զանազան և բազմաթիւ մնացորդներ և արտաքին սովորութեան ձևեր գոյութիւն ունին այսօր ոչ միայն վաչրենիների, այլ նաև քրիստոնէութեան մէջ, և յոցանից շարքերը նոյն իսկ քրիստոնէական եկեղեցուց սրբագործւել են: Այսպէս օրինակ.

<sup>2</sup> Peschel - Voelkerkunde (= Պէշել — Ազգապրութիւն) Ալեպոյից, 1875. էջ 271.

հայ քահանան աշօթում է շոգուցն հանգուցելոց, Քրիստոս Աստուած, արն հանգիստ ողորմութիւն»։ նա խնդրում է Քրիստոսից հանգած հոգիներին հանգիստ շնորհել, որովհետեւ իրենց հանգիստը չգրած հոգիները վնասում են մարդկանց, անմաքուր կախարչութիւն անում, պղծում են (spuk treiben)։ Հայոց կրօնական երգեգերի մէջ հոգու պաշտամունքը և փառաբանութիւնը ահագին տեղ է բռնում։ Ս. Գրքերի ընդունած մարդկային հոգին հաւասար է Աստուծոյ շունչին, որը երբայեցեքէնի մէջ միևնոյն բառովն է արտայայտուում, ինչ որ քամին (ruagh)։ և այս պատահական նմանութիւն չէ, այլ արդարեւ միևնոյն մկապարկերն է եղել երկուսի մասին։ (Ստերէն յուլս, յուլչ, արարերէն նէփս, նէփէս, հայերէն հոգի, ռգի, շոգի, շունչ և այլն. բառերի նոյնահնչիւն լինելը ամենեւին պատահական չէ)։

Մի ասացածքում պայմանում է որ Գրիգոր Լուսաւորիչը Տարոնոյ վանքի քրմերի հետ կուեկով՝ նոցա յաղթում և նոյնտեղ իրենց բնակութիւնը հաստատող ոգիներին հալածում է ու միայն մէկին պահում է այնտեղ ծառայութեան համար. աւելացնում են, որ այդ ոգին կաղ է և թոնիրի մոխիրն է յուրս կրում, որ ծառայութեան անունովն էլ կոչուում է վանքի մոխրաման<sup>1</sup>։ Միևնոյն աւանդութիւնը պայմանում է նաև Վանայ նահանգում գտնուած «Հոգուց վանքի» մասին, այն րարբերութեամբ, որ այստեղ Գրիգոր Լուսաւորչին փոխարինում է Թագէոս Առաքեալը (որն իբր թէ հիմնել է այդ վանքը)։ ոգին նոյնպէս կաղ է և նոյն անունն ունի<sup>2</sup>։ Այս վանքի անունը մեզ իրաւունք է տալիս եզրակացնել, որ այդ տեղը սկզբում հոգեպաշտական արարողութիւնների մի կեդրոն պէտք է եղած լինի։

<sup>1</sup> Հմմտ. Արեղեան—նոյնտեղ, էջ 113 :

<sup>2</sup> Այդ մասին հետաքրքրելով՝ վերոլիշեալ երկու վանքերում եւ հարցրի. պատասխանեցին թէ՛ արդարեւ իրենք յուլս են թափում մոխիրը, բայց ոչ այնքան լաճախ և այնքան շատ, ինչպէս ուրիշ տեղեր, որովհետեւ «կաղ-մոխրահանը» իր պարտաւորութիւնը կատարում է, թէպէտ իր կաշտութեան համար չէ կարող լրիւ կատարել աչդ։

Այդ վանքերի թոնիրներում համեմատաբար քաղաքացիների թոնիրները հետ, քիչ է մոխիր գոգանում և դորա պարճառը վառելիքների տարբերութիւնն է։

Արնեղըայր շառնալու սովորութիւնը հողեպաշտական այն հին մնացորդներին է, երբ մարշուս հողին պատկերացնում էր իբրև նորա արիւնը: Արեան իրար հետ խառնելովը երկու օտարներ շառնում են հարազատ արիւնակիցներ. քրիստոնեայ հողերականների ազդեցութեան փակ արիւնն իսկապէս իրար հետ խառնելը թողնում են հայերը, բայց սովորութիւնը փոքր փարբեր ձևով մինչև այժմ շափ փեղ պահել են. արնեղբայր շառնալ ուզողները գնում են եկեղեցի ու միասին խաչն ու աւերարանը համբուրելուց և քահանայի օրհնութիւնն սրանալուց յետոյ շառնում են իսկական հարազատներ, որոնց մօտ խնամութիւնը արգելւած է:

Երուսաղէմ՝ Քրիստոսի զերեզմանն ուխտի գնացողները վիտել (taetovieren) են փայխ իրենց մարմնի որոշ մասերը և շառնում են մահտեսի, այսինքն իսկապէս Քրիստոսի արիւնակից եղբայրներ, որը բացարձակապէս հողեպաշտական հայեացքների ծնունդ է և շափ աւելի հին՝ քան ինքը Քրիստոս: Այս սովորութիւնը կայ մահմեդականների մէջն էլ, որոնք փոխանակ Երուսաղէմ զնալու՝ Մեկկա (Հաջ) են գնում, (Նիաները նոյնպէս և Քէրբէլէ և Մէշէշ), և մահտեսի չեն կոչւում, այլ հաջի, (կամ քէրբէլայի, մէշէշի): Կրօնական նոր վարդապետութիւնները կարող էին միանշամից արմատախիլ անել ժողովրդի մէջ ամրացած հայեացքները, որոնք ժամանակի ընթացքում միայն փոխադարձ ազդեցութեան փակ շարմարում են միմեանց:

(Շարունակելի)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՏԱՃԿԱ-ՋԱՅՄԱՏԱՆԻ ՀԱՄԱՐ

«Deutsche Hilfsbünde für Armenien»

ԳԼՈՐԳ ՄՅԻ ԻՔ-ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

(Շարունակութիւն 1)

ՈՐ ԲԱՆ ՈՅՆՆԵՐ

ԲԵՐԼԻՆԻ ԿՈՄԻՏԷԻ ՈՐՁԱՆՈՅՆԵՐԸ<sup>2</sup>

Որ քաղաքում	Կիմնարկութիւններ	որքերի թիւը
Ուրֆայ (Տաճկաստ.)	5 որբանոց, 1 արհեստանոց, 1 հիւանդանոց բնակիչների համար, 1 մասնաւորապէս որբանոցի զաւակների համար և 1 շեղարուն:	300 որբ
Գիարբեքիր (Տաճկ.)	1 որբանոց	120
Ուրմիայ (Պարսկաստ.)	1 »	80
Խոյ (Պարսկաստան)	1 »	136
Ռուշուկ (Բուլղար.)	1 »	20
Վարնա (Բուլղ.)	Մտատրութիւն կայ բանալ որբերի մի ապաստարան:	
		Ընդամէնը . . . 654 որբ

<sup>1</sup> Տես «Մուրճ» 1899, № 11-12.

<sup>2</sup> Թւերը քաղում ենք Բերլին—Կենդրոնի օրգանից. «Aus der Arbeit des armenischen Hilfswerks». Now, 1899 էջ 1.

## Փրանկֆուրտի որբանոցները (ընդունել Տաճկաստանում)

Որտեղ	Հիմնարկութիւններ	Որբերի թիւը
Բեքեկ (Պոլսի մօտ)	1 որբանոց	95 աղջիկ
Մեասերիչ	4 որբանոց, մի հիւանդանոց և մի ապաստարան այրի և հիւանդանոց կանանց համար:	155 տղայ 121 աղջիկ
Հիւսեննիկ	3 որբանոց	10 տղայ 31 աղջիկ
Պիրջենջ	2 որբանոց	40 տղայ 12 աղջիկ
Պալու	4 որբանոց	80 տղայ 70 աղջիկ
Մարաշ	3 որբանոց և 1 արհեստանոց	78 տղայ 100 աղջիկ
Վան	2 որբանոց	170 որբ
Ապտաչ բէջ (Ամասիայի մօտ)	2 որբանոց, այս երկու որբանոցներին պատկանում է և ահագին տարածութեան մի կտոր հող (4.000 գերմ. մորգէն) և չափազանց որբերի բնակութեան համար: Այստեղ կան փականքի, ճախարակագործութեան և աղիւսի գործարաններ:	10 տղայ 5 աղջիկ
Հաճին	1 որբանոց	100 որբ
	Ընդամենը . . .	1.077 <sup>3</sup> որբ

Եթէ այս գումարին աւելացնենք և ոչն որբերի թիւը, որոնք այս կողմից միջոցով բերած են Գերմանիա և տեղաւորւած են զանազան գերմանա-

<sup>3</sup> Ինչպէս տեսնում է ընթերցողը, մի քանի քաղաքների վերաբերեալ ցուց չէ որբած տղաների և աղջիկների թիւը առանձին, ուստի մեզ մնում է ցուց տալ երկու սեռից ընդհանուր գումարը: Բերլինի կողմից ամենևին չէ ցուց տալիս սեռերի թիւը առանձին:

Վան ընկանիքներում . . . . .	65 <sup>4</sup> որբ
Կը ստանանք . . . . .	1.142 <sup>5</sup> որբ
Ուրեմն Բերլ. և Ֆրանկֆ. կոմիտեները <sup>6</sup> միասին պահում են	
ընդամենը . . . . .	1.798 որբ

Այսպես ևս կը նկատենք, որ ամբողջ Ֆերոպան և Ամերիկան միասին պահում են մինչև 6000, (կամ ըստ ուրիշ աղբյուրների— 5000) հայ երեխաներ. արդեօք սոքա ամենքը որը են, այդ յայտնի չէ մեզ:

Այս որբ-ապաստարանների գլխավոր հսկողները, տեսուչները գերմանացիք, կամ, առեկի ճիշտն ասած, ոչ-հայեր, եւրոպացիք են. իսկ երկրորդական պաշտօնները տրուում են և հայերին: Սոցա զբոսնում ենք հետևեալ պաշտօններում— վարժապետի (հայերէն լեզուի), վերակացուի, արան ծնողների— Hauseltern (սրանք, ինչպէս երեւում է, նման են արան մշակներին) և այլն:

**ԿԵԱՆՔԸ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԵՒ ՈՒՍՈՒՄԸ**

Այսպէս գործադրուում այն է սկզբունքը, որ երեխան ըստ կարելոյն պիտի անէ ամեն բան, ինչ որ անհրաժեշտ է նորա կեանքի համար: Հետևեալ ցուցակը (Բեբեկի աղջկերանց որբանոցի), որը նկարագրում է որբանոցի մէջ սիրող կարգը և կեանքը, պարզ ցոյց է պալիս այդ:

Ժամ 6<sup>1</sup>/<sub>2</sub>-ին (առաւօրեան) անկողնից վերկենալը: Մեծերը լւանում են փոքրերին և հագցնում են նոցա 2 մեծ աշակերտներ հետևում են միջակների երես լւանալուն և 2 ուրիշ մեծերը մաքրում են Դպրոցի սենեակը:

Ժամ 7<sup>1</sup>/<sub>4</sub> Նախաճաշիկ:

<sup>4</sup> Այդ պատահել է անմիջապէս կոտորածներից չեմոս, երբ կոմիտեները շեռ չունէին ապաստարաններ Արևելքում: Այս 65-ի առիթով չալտնում է համապատասխան կոմիտէն, որ նա «ալ ևս չի բերում որբեր Գերմանիա»:

<sup>5</sup> Բ==Բեռլինի, Ֆ==Ֆրանկֆուրտի:

<sup>6</sup> Առեկի ճիշտ կը լինէր ասել «ապաստարան են տւեր», որովհետև լիջեալ 65 որբերը կոմիտեների հաշուով չեն պահուում:

ժամ 7<sup>1</sup>/<sub>2</sub> Առաւօրեան աղօթք:

» 8—11 Դասեր I և IV Դասարաններում:

» 11—12 Ասեղնագործութիւն IV Դասարան և խաղեր I Դասարան:

» 8—10 Տնային աշխատանքներ (Hausarbeiten) (II և III Դասարան աշակերպներ):

4 երեխայ մաքրում են ճաշի սենեակը, ափսէները և բաժակները:

3 երեխայ մաքրում են բոլոր լամպարները:

3 » օգնում են ութոյելու:

2 » օգնում են խոհանոցում:

10 » մաքրում են սանդուխքները և շաքաթը մի անգամ լւանում են:

8 » սրբում են կօշիկները ) փոփոխարար ամէն:

8 » մաքրում են կանաչիղէնը ) մէկը 1 ժամ:

2 » մաքրում են կլոզէպները:

2 » աւելում են Դասարանները (այն աշակերպներին համար, որոնք պարապում են այսօրից կէսօրից յետոյ: Սորա մասին յետոյ):

6 » կարկապում են:

ժամ 10—12՝ ովքեր ժամը 10-ից յետոյ փնային աշխատանքը վերջացնում են արդէն, Դասերն են պարապում (Schularbeit) և ով որ այս էլ է վերջացնում, օգնում է կարկապանքի գործում կամ զբաղւում է ասեղնագործութեամբ IV Դասարան աշակերպն. հետո:

ժամ 12—1<sup>1</sup>/<sub>2</sub> ճաշ և ազատ ժամանակամիջոց:

» 1<sup>1</sup>/<sub>2</sub>—3<sup>1</sup>/<sub>2</sub> Դասեր IV, III և II Դասար. մէջ:

» 3<sup>1</sup>/<sub>2</sub>—4 Հանդարութիւն: Տալիս և հաց և կաթ:

» 4—5 Դասեր II, III և IV Դասարաններում:

» 5—6 Դասեր II և III Դասարաններում. IV Դասարանի աշակերպները պարապում են իրենց Դասերը:

» 6—7<sup>1</sup>/<sub>2</sub> Ընթրիք, աղօթք և ազատ ժամանակ:

» 7 Մեծերը փանում են փոքրերին քնացնելու:

» 7<sup>1</sup>/<sub>2</sub>—8<sup>1</sup>/<sub>2</sub> IV և III Դաս. աշակերպները պարապում են իրենց Դասերը:

ժամ 8 Գնում են II Դասարան աշակերտները:

՝ 8 1/2 Գնում են III և IV Դասարան աշակերտները:

Տնային աշխատանքը փոխում է ամեն շաբաթ:

Որբանոցները, ինչպէս փեսնում է ընթերցողը, միևնոյն ժամանակ և ուսումնարաններ են: Պատկեր տալու համար, թէ ինչ ուսում են ստանում նոցա մէջ հայ երեխաները, կը բերենք Բերեկի աղջկանց որբանոցի Դասերի ցուցակը<sup>8</sup>:

	1 Դասար.	2-7 Դաս.	3-7 Դաս.	4-7 Դաս.
Կրօն. . . . .	3 ժամ <sup>9</sup>	4 ժամ	4 ժամ	6 ժամ
Հայոց լեզու . . . . .	3 »	4 »	4 »	4 »
Գերմաներէն . . . . .	4 »	4 »	4 »	4 »
Փրանսերէն. . . . .			2 »	4 »
Անգլիերէն. . . . .				2 »
Թուրքերէն. . . . .				2 »
Պատմութիւն . . . . .				2 »
Աշխարհագրութիւն.			1 »	2 »
Թուաբանութիւն. . . . .	2 »	2 »	2 »	3 »
Նրդեցողութիւն. . . . .	2 »	2 »	2 »	2 »
Նկարչութիւն . . . . .			1 »	1 »
Ձեռքի աշխատանք.	4 »	4 »	4 »	4 »
Ասեղնագործութիւն				6 »

Ընդամենը . . . 18 ժամ 20 ժամ 24 ժամ 42 ժամ

Այս ցանկից հրեւում է, որ գերման ընկերութիւնը (Հիլֆսբունդը) տալիս է, գոնէ ինչ վերաբերում է աղջիկներին, իւր հայ որբերին աւելի գործնական, քան գեսական գիտելիքներ: Ահա այն առար-

<sup>8</sup> Նախընթաց թւերը վերցրած ենք Փրանկֆուրտի կոմիտէի մի թուոցիկ թերթից. նոյնը արտադրւած է և իւր օրդանի. «Mittheilungen aus dem Orient vom deutschen Hilfsbund für d. christliche Liebeswerk im Orient». 1899 № 7.

<sup>9</sup> Unsere Waisenhäuser im Orient. Zweiter Bericht des «Deutschen Hilfsbundes für Armenien. 1897 էջ 18. Այս միակ ցուցակն է, որը մեզ լաջողեւ է գտնել: Աւելի շահեկան կը լինէր ծանօթանալ, ինչպէս աղջիկներին աչնպէս և տղաների Դպրոցների նոր ցուցակների հետ. բայց Հիլֆսբունդի բոլոր հրատարակութիւնների մէջ չըկարողացանք այդպիսին գտնել:

կաները, որոնք առաջի շասարանից մինչև վերջինը անընդհատ ուսուցանում են. կրօն, հայերէն, գերմաներէն, թուաբանութիւն, երգեցողութիւն, ձեռի աշխատանք. իսկ պայամութիւնը, նկարչութիւնը, աշխարհագրութիւնը, Փրանսերէնը, անգլիերէնը սկսում են բարձր շասարաններից, այն էլ սակաւթիւ ժամերով (բացի Փրանսերէնը): Քացի այդ շահեկան է համեմատել կրօնի, գերմաներէնի և հայերէնի ժամերի թւերը: Կրօնը ունի 17 ժամ, գերման. լեզուն—16, հայերէնը—15: Այս վերջին համեմատական թւերի վերայ որ և է մէկը գուցէ և կարողանար ցոյց տալ, ինչպէս ապացոյց այն կասկածանքների հիմնաւորութեան, որոնք պարածուած են առհասարակ մեր հասարակութեան մէջ, այսինքն, 1) որ Հիլֆբուռնշ'ը ձգտում է իւր հիմնարկութիւններով բողոքական շարձնել հայերին և 2), որ նա մտադիր է հայ որբերից շաստիարակել ոչ թէ հայեր, այլ գերմանացիք: Քէպէս ես չեմ կարծում, որ Հիլֆբուռնշ'ի գործիչները իրենց հայկական օժանդակութեան գործում զեկավարեն լոկ մարդասիրական զգացմունքներով ազատ որ եւ է միտումից, այնու ամենայնիւ կ'պնդեմ, որ չիշեալ կասկածները դոնէ այն տեսակէտով և պարզաբանութիւններով, որոնցով նոքա առհասարակ արտայայտուում են— սխալ են: «Օգնութեան միութիւնը» անշուշտ ունի բողոքական ձգտումներ Տաճկա-Հայաստանում, բայց այդ կրօնական ձգտումները բոլորովին այլ տեսակի են, քան թէ մենք նոցա երևակայում ենք. այդ կ'փորձենք պարզել յետոյ, առայժմ կը բերենք գերմանական ընկերութիւնների հրատարակութիւններից մի քանի քաղաածքներ, այդ երկու կէտերը՝ հաւատարմութեան (պրոդելիտիզմ) և ապազգայնացումի (dénationalisation) հարցերը լուսաբանելու համար:

Սկսենք վերջինից:

ԱՊԱՍՏՐԱՅԵԱՅՈՒՄԻ ՀԱՐՅԸ: Հիլֆբուռնշ'ի հրատարակութիւններից և նորա գործիչների նամակներից չի երևում, որ հայ որբերի շաստիարակութեամբ նա կամենար գործել հակահայկական ուղղութեամբ. հայ որբերը զրկել իրենց ազգութիւնից, խլել իրենց ազգից—այդպիսի ձգտումներ բոլորովին բացակայում են այստեղ: Ընդհակառակը, «Օգնութեան միութեան» գործիչները դրական կերպով ասում են, ինչպէս կ'տեսնենք ներքև, և աշխատում են որպէս

սկզբունք անցկացնել հետևեալ զաշափարը. հայ որբերը—հայ նն եւ պիտի հայ մնան. ապագայում նոքա պիտի գործեն իրենց ազգի եւ հասարակութեան օգտին:

Յայտնի ամերիկական միասինար Դ-ր Ռայնոլդս (Reynolds), որը փասնեակ փարիներ հայ երեխաների շաստիարակութիւնով է զբաղւել Տաճկաստանում և որին գերմանական Ֆրանկֆուրտեան կոմիտէն յանձնել է առաջ՝ իւր Վանայ որբանոցի շեկավարումը, գրում է. «Ամենից առաջ մենք ցանկանում ենք շաստիարակել երեխաներին մաքուր և օգտաւէտ կեանքի համար և որքան կարելի է կրթել նոցա որպէս հայերի, որպէս զի, եթէ սլայմանները այդ թոյլ կ'փան, նոքա վերաշառնան իրենց փները առանց շեւարութեան: Մեր շաստիարակութիւնով յոյս ունինք միջոց փալ նոցա կրթողական կերպով ազդելու իրենց շրջանի վրայ»<sup>10</sup>:

Նոյն զաշափարը, այսինքն, որ որբերի կրթութեան մէջ ի նկատի է առնւում շոցա ապագայ գործունէութեան հայկական շրջանը, երևան է գալիս Դ-ր Բելկի (Belck) և Դ-ր Լեհմանի (Lehmann) հաշւեւում թիւնից (Bericht): Այս անձերը, որոնք Վանի սեպաձև գրութիւնների ուսումնասիրութեան համար այդ քաղաքում երեք ամիս (1899) անցկացրին, հիւր են եղած Դ-ր Ռայնոլդսին և իրենց հաշւեւում թեան մէջ յիշել են նաև որբանոցների գործունէութեան մասին: «Կարելի է յուսալ, գրում են սոքա ի միջի այլոց, որ եթէ այստեղ (այսինքն, յիշեալ Դպրոցներում) շաստիարակող փղաները և աշխիկները, որոնցից ոմանք բոլորովին անուսում են եկել Դպրոցը, կ'վերաշառնան (յետոյ) իրենց գիւղերը, որպէս ուսուցիչներ, արհեստաւորներ և հաւաքարիմ քրիստոնեաներ, շոքա ԴրԴիւ օրինակ կ'լինին իրենց հայրենակիցների համար և օրհնեալ միջոց ամբողջ ազգի մտաւոր և բարոյական մակերևոյթը բարձրացնելու համար»<sup>11</sup>: «Մենք չենք ուզում, զրւած է ուրիշ փեղ, «երեխաներին բարձր ուսում փալ, որ նոքա յաճախ ստանում են ամերիկական վարժարաններում. ամենազխաւորը, ինչ որ սպասու է, այդ—հմուտ ար-

<sup>10</sup> Շարափական:

<sup>11</sup> Wan und das elsass-lothringische Waisenheim daselbst. 1897  
երես 25.

հետապահողներն են: Այդ նպատակով Մեսսերէյում սարքել ենք մենք չափահաս սղանների համար արհեստանոցներ, ուր նոքա սովորում են կոշկահարութիւն, գերձակութիւն և արագձագործութիւն»<sup>12</sup>: Այս խօսքերը կողմնակի կերպով ապացուցանում են նոյն ցանկութիւնը—հայ որբերը կրթել հայերի համար և համաձայն իրենց պահանջներին: Հետաքրքիր է նոյնպէս, որ պս սփոր Երնսար Լոհմանը, Ֆրանկֆուրտի կոմիտէի վարիչը, այցելելով 1899 թ. սկզբին Փոքր-Ասիայի գերմանական որբանոցները, իւր նամակներից մէկում, (Սիւլասից), շիմում է հայ որբերի գերմանական «ծնողներին» (սոցամասին րես Մուրճ 1899 № 11-12) խորհուրդ է տալիս սոցա, որբերին այլ ևս պարգևներ չուշարկել Գերմանիայից: «Որպէս ամենալաւ պարգև», ասում է նա, «ես կառաջարկէի ուշարկել փող մեր որբերի ապաստարանների վարիչներին, որպէս զի սոքա գնեն երեխաների համար հայերէն գրքեր, որոնք կը մնան նոցա համար իբրև գեղեցիկ չիշապահարան նոցա ամբողջ կեանքի ընթացքում...»<sup>13</sup>: Աւելացնենք այսպեղ, որ այն հանգամանքը, թէ Հիլֆսբուհը, ինչպէս երևում է, գերադասում է շապերին րալ սփորին ուսում, քան թէ քչերին բարձրը, մեր կարծիքով, նոյնպէս ապացուցանում է, որ «ժանդակութեան միութեան» գործիչները ի նկատի ունին րաձկահայ բնակիչների պահանջները, ամենաարարական կարիքները, և ոչ թէ իրենց որ և է շահերը: Դա ընդունւած է, որպէս սկզբունք, և ի հարկէ հարկաւոր գէպքում, գերմանացիք միջոց են տալիս հայ երեխաներին շարունակել իրենց մրաւոր զարդացումը: Դես 1897 թ. պատրոր Բրոկէսը (Brookes) գրում էր Քիւրքիայից Բեբեկի որբանոցի մասին. «Առաջի (ըստ մեր հաշիւի—վերջին) շաւաքան մէջ 8-ից մինչև 14 րարեկան երեխաներ են: Այս շաւաքան մէջ հաւաքել ենք մենք բոլոր ընդունակ և աշխատասէր երեխաները, որոնք հիմք են տալիս հաւատարմու, որ բարձր<sup>14</sup> ուսումը նոցա համար արգասաւոր կը լինի: Իմ կարծիքով, ոչ թէ երեխաների ծնողների (վախձանւած) շասակարգը,

<sup>12</sup> Zweiter Bericht über die Arbeit d. Elsass-Lothringischen Hilfscomités in der türkischen Provinz Wan 1899. Էջ 15.

<sup>13</sup> Աղբիւրը րես ծանօթ. 8. Էջ 33.

այլ երեխաների ընդունակութիւնը և աշխատասիրութիւնը վճռողական պիտի լինին վճռելու համար թէ հարկաւոր է արդեօք փալ նոցա բարձր ուսում, թէ ոչ<sup>15</sup>։ Նոյն 1897 թ. գերմանական «Börsenkurier» թերթի Կ. Պոլսի թղթակիցը, նկարագրելով այդ թերթի մէջ Բեքեկի որբանոցին իւր փրկած այցելութիւնը, ի միջի այլոց ասում է. «Համաճացն իրենց ընդունակութիւններին՝ երեխաներից պատրաստում են վարժուհիներ, կամ աշխիհներ (Dienerinnen), և մեծերը արդէն աշխատում են փնարարութեան մէջ»<sup>16</sup>։ Որբանոցների վարժապետների և վարիչների նամակներից երևում է, որ պատրուկ Բրոկէսի կարծիքը և Բեքեկի որբանոցում գործադրուող սկզբունքը ընդունւած գաղափար է բոլոր որբանոցների Դպրանոցներում։ Կը բերենք մի քաղաքի վանայ որբանոցի կառավարիչ Դ-ր Ռայնուլդսի նամակից առ Էլսազ-Նիթրինգիայի ճիւղ-կոմիտէն. «Աւելի ընդունակ տղաներից ոմանք ամբողջ իրենց ժամանակը պիտի նւիրեն ուսման, որպէս զի յետոյ, երբ երկրի քաղաքական Դրութիւնը թոյլ կ'տայ, նոքա կարողանան իրենց զիւղերում ուսումնարաններ բանալ և ուսուցիչներ լինել։ Երեխաների մեծ զանգւածքը գործադրում է իւր ժամանակը փոփոխաբար ուսումի, և արհեստի վրայ. նախաճաշից յետոյ կարճ շաշարտորանից յետոյ մի մասը գնում է արհեստանոցները, մնալով մինչև ճաշի ժամը։ Այսպէս սովորում են նոքա ոստանանկութիւն, Դերձակութիւն, հացթխութիւն, Դարբնութիւն և կաշեգործութիւն. նոքա իրենք պատրաստում են իրենց շորերը թելից սկսած մինչև գործւածը, իրենց ոպնամանները՝ կաշից սկսած մինչև կապտաբանալ կոշիկը։ Այն մասը, որ ուսումնարան է այցելում, սովորում է (այս արհեստները) օրը մի ժամ և յետոյ ժամ 9—12 անցնում է Դասապետները... մենք չենք ձգտում փալ նոցա մեծ զիպութիւններ, մենք ցանկանում ենք միայն զիպութիւնների փարկքը սովորեցնել նոցա—կարգալ, գրել, փոքր ինչ թւաբանութիւն, աշխարհագրութիւն, թիւքերէն և զլիսաւորապէս Աւելորանը...»<sup>17</sup>։

<sup>15</sup> Աշխիւրը տես ծանօթ. 8, № 5, էջ 33.

<sup>16</sup> «Բարձր ուսումը» այստեղ պիտի հասկանալ ինչպիսի ուսում, որը սկզբնականից աւելի բարձր է։

<sup>17</sup> Տես ծանօթ. 8, էջ 0.

Այսքան առ այժմ՝ ասպազգգայնացումիս մասին: Առաջ բերած քաղաքները բոլորն էլ թեր են, և հիմէ մենք չենք բերել ոչ մի կտոր, որը այդ սեպակեպից «Հիլֆբուրնդի ղէմը խօսած լինէր, այդ այն պատճառով է, որ մենք նորա գործիչների նամակների մէջ ոչ մի սող չենք գտել, որից կարելի լինէր ենթադրել, թէ Հիլֆբուրնդը իւր գործում ձգտում լինի որ և գերմանական քաղաքական-ազգային նպատակների: Այն գաղափարը, որ հայ որբերի գերմանական դաստիարակումը, կամ աւելի ճիշդն ասած, որ գերմանական որբանոցները ապագայում կարող են մեծ ծառայութիւն մատուցանել Գերմանիայի արևելեան քաղաքականութեան, նորա ելևմտական շահերին Թիւրքիայում, այդ գաղափարը արծաժւեց առաջին անգամ 1899 թ. գարունքին, այն էլ ոչ Հիլֆբուրնդի, այլ մասնաւոր մարդու կողմից: (Dr. P. Rohrbach. «Deutschland unter den Armeniern». Preussische Jahrbücher. 1899, Bd. XCVI Heft 2): Բացի դրանից, այս գաղափարը արգայնացուեց որպէս պատասխան գերմանական մի քանի լրագիրներին, որոնք յարձակում էին Հիլֆբուրնդի վրայ, ասելով, որ վերջինը իւր գոյութեամբ խանգարում է գերմանական քաղաքականութեանը Արևելքում:

Հիլֆբուրնդի ղէմ քաղաքներ կարելի է գտնել միայն կրօնական, շաւանափոխական հարցի վերաբերեալ, մի հարցի, որը աւելի նուրբ, աւելի դժուար լուծելի է և որի մասին բաւականին շարժերեց մեր և եւրոպական մամուլը:

Անցնենք այս հարցին:

#### Կ Ր Օ Ն Ի Հ Ա Բ Յ Ը:

Ընթերցողը յիշում է վերև ներկայացրած դպրոցական դասերիցուցակից, որ հայ որբերին եռանդուն կերպով կրօնի դասեր են ստանալու որբանոցներում: Հարց է առաջ գալիս — որ կրօնն է այդ, լուսաւորչական թէ բողոքական: Կամ աւելի լայն ըմբռնած, այդ ուսումնարաններում չին դառնում արդեօք հայ երեխաները յանկարծ, կամ փոքր առ փոքր, բողոքականներ, թեպէտ լինին նորա նաև հայ բողոքականներ, և ուրեմն այդ 2000 որբերը չին կարող արդեօք լուսաւորչական եկեղեցու համար արդէն կորած համարել:

Այս հարցին վերին աստիճանի շուտ և որոշապէս պատասխանելը Հիլֆսբուռնշի գործիչների նամակները, նիստերի արձանագրութիւնները, նորա բոլոր պարբերական և ուրիշ հրատարակութիւնները ընթերցումը չի տալիս հետազոտողին պարզ պատճառութիւն, որպէս զի կարելի լինէր պատասխանել բացարձակօրէն, «ոչ կամ ապո»։ Այս հանգամանքը Դր. Դեյչի ինձ գիմել ուղղակի պ. Դ. Ռոռբախին (Dr. P. Rohrbach), որ թէպէտ Հիլֆսբուռնշի (= Օգնութեան ընկերութեան) գործիչը չէ, բայց կողմնակի կերպով շատ է գործում յօգուտ «Օգնութեան ընկերութեան» և մանրամասնաբար ծանօթ է Դորա գործերի հետ<sup>18</sup>։ Նորա պատասխանը կը բերեմ յետոյ. առ այժմ, հաւատարիմ մնալով մեր սխալէմին, գիմենք անմիջական աղբիւրներին, այն է թէ ինչ է ասում Հիլֆսբուռնշը ինքը։ Հարկաւոր է այստեղ ևս նկատել, որ Հիլֆսբուռնշի գործողների այդ խօսքերը և կարծիքները երևան են եկել ոչ թէ իբրև պոլեմիկայի հետևանք, այլ նորա յայտնած են եղել «Օգնութեան ընկերութեան» գործունէութեան առթիւ ծագած պոլեմիկայից առաջ, որպէս միջերի հասարակ փոխանակութիւն այդ գործողների միջև։ Այդ պէպք է ի նկատի ունենալ, որովհետև այդ հանգամանքը առանձին արժէք է տալիս մեր առաջ բերելիք քաղածքներին։

Մի բրոշուրի մէջ (տես ծանօթ 11), յառաջաբանում, հեղինակը (որը պատուր է և, ինչպէս երևում է, պիտի որ շատ կրօնամոլ լինի) ի միջի այլոց ասում է. «Ոչ թէ ճնշում, այլ ազատութիւն կրօնական կրթութեան մէջ, թոյլատրութիւն մինչև անգամ (!) հաշկական ժամասացութիւնները այցելելու, կարգապահութիւն, աշխատասիրութիւն, խրատուսանք Դէպի ինքնուրոյնութիւնը, և ամեն բանի մէջ կրթութիւն երկրի և բնակիչների բախտաւորութեան համար— սորա են թանկագին տեսակէտները (Gesichtspunkte)։ Ռոռբախը, որին Ելզաս Լոթրինգի ծիւղ-կոմիտէն յանձնել էր այցելել Վանի որբերի իւր ապաստարանը, գրում է մի նամակում 15 յունւ. 1899 թ. ... երկրորդը, որը առանձին կերպով արդիւնաւէտ է, Դ. Դ. Ռաջնոլդսի (այդ որբանոցի շեկավարողի) սկզբունքն է երե-

<sup>18</sup> Տես ծանօթ. 8, էջ 11.

խայոց կրօնական շաստիարակութեան նկատմամբ, թէպէս այդ սկզբունքը միայն նորանը չէ. և այն<sup>19</sup>:

Ո՞րն է այդ սկզբունքը:

Ինքուր. Ռայնոլդսի նամակներից մէկում (1896 թ.) գտնում ենք ի միջի այլոց հետեւեալ խօսքերը. «Մենք ամենևին չենք փորձում հեռացնել նոցա (երեսաներին) իրենց ազգային եկեղեցուց. շաբաթը մի անգամ նոքա կարող են այցելել իրենց եկեղեցու ժամասացութեանը, իսկ նոքա, որոնց խիղճը թելադրում է չայցելել, կարող են և մնալ: Բայց մենք աշխատում ենք համոզել նոցա, որ նոքա ըմբռնեն Քրիստոսին, որպէս բարեկամի ((Freund) և գործեն այդ հասկացողութեամբ, որպէս զի շուրս գնան այստեղից, որպէս փրկւած անձեր և թթխմորի պէս գործեն իրենց հասարակութեան մէջ ...»<sup>20</sup>: Նոյն հեղինակը գրում էր 1897 թ. «...Շաբաթ օրը, նոցա, որոնք այդ ցանկանում են, թոյլ է տրւած այցելել հայկական ժամերգութիւնը: Հաճելի է տեսնել, ինչպէս նոքա, իրենց չափահաս աշակերտների միջից ընտրւած, սպասներով գնում և զալիս են. բայց ամենքը պարտաւոր են կիրակւայ և չոքեշաբաթը աջ ժամասացութիւններին մեր սեփական (բողոքական) մասուռում մասնակցելու. և Աւետարանի ուսուցումը օրւայ շասածրագրի պարտաւորիչ մասն է: Նոցա շաստիարակութեան նկատմամբ մեր նպատակն է մասնանիչ անել Քրիստոսի վրայ, ինչպէս փրկութեան ճանապարհի վրայ, և համոզել նոցա անձնապէս միանալ նորա հետ

<sup>19</sup> Տես ծանօթ. 11, էջ 9. Ափսոս որ, ինչպէս բերած տողերից, այնպէս էլ ամբողջ նամակից պարզ չէ երևում, թէ ինչու՞մնէ կալանում զանազանութիւնը գիտութիւնների ծառայի մէջ, որը սրտանում են «ընտրւածները» և մնացածները: Պարզ չէ նոյնպէս, թէ բերած առարկաների ծրագիրը սոցանից ո՞ր մասին է վերաբերում:

<sup>20</sup> Dr. P. Rohrbach-ը անցեալ տարի մեծ ճանապարհորդութիւն է արել Տաճկահայաստանում և իւր տպաւորութիւնները նկարագրել է զանազան թերթերում, բայց դրանից եւ մի տարի առաջ նա այցելել է Արմկասը, և Անդրկասպեան երկիրները: Այդ ճանապարհորդութիւնը նա նկարագրել է «In Turan und Armenien» գրքի մէջ, որ արժանացել է որոշ ուշադրութեան: Տես դրա մասին և „Братская Помощь“ 2 изд.: Проф. Герве. Призвание России на Востокѣ.

(sich persönlich mit ihm in Verbindung zu setzen): Բայց մենք ամենևին չենք ձգտում անջարել նոցա իրենց ազգային եկեղեցուց. նոցա ապահովցրած է՞ խղճի ազատութիւնը. օրինակ պաս պահելը և շորա նման սովորութիւնները. իսկ իրենց եկեղեցին չաճախելը ծանօթացնում է նոցա իրենց ժամասացութեան հետ: Պասի շրջաններում և ուրիշ շէպքերում մենք մեր ժամերգութիւնը կապարում ենք լուսաւորչական եկեղեցու երաժշտութիւնով: Մեր նպատակն է նոյնպէս, ինչ վերաբերում է սնունդին, յագուստին և սովորութիւններին, այնպիսի կենցաղավարութիւն մտցնել (որբանոցներում), որ մենք չ'բաժանենք նոցա իրենց հայրենակիցներից, որպէս զի նոքա անընդունակ չլինին (ապագայում) իրենց գիւղ'րում ապրելու. միևնոյն ժամանակ մենք շատիարակում ենք նոցա այնպէս, որ նոքա չեւորցզործեն ժողովրդի մէջ ինչպէս թթխմոր: Մենք խուսափում ենք այնպէս կրթել նոցա, որ նոքա ցանկանան հեռու ապրել այս երկրից (Հայաստանից): (Ստորագծումը հեղինակինն է): Շնորհա հայ են և հայ պիտի մնան»<sup>21</sup>:

Թէ որբանոցների այս կրօնական կողմը որքան շփուր և մինչև անգամ Հիլֆսբունդի համար մութ հարց է, ապացուցանում են այն անթիւ կարծիքները և կշռադատութիւնները, որ գրնում ենք ընկերութեան հրատարակութիւնների մէջ: Այդ հարցը, ինչպէս երևում է, շատ է զբաղեցնում նորանս Գ-ր Ռայնոլդսը ինքը պարզ ասում է այդ իւր մի ուրիշ նամակում (1897 թ.): «...Այն, թէ ինչ շիրք պիտի բռնենք մենք շէպի լուսաւորչական եկեղեցին և ինչպէս պիտի ազդենք երեխաների վրայ, ի նկատի առնելով այդ եկեղեցին,—մեզ բոլորիս համար վերին աստիճանի լուրջ հարց է: Անջարել նոցա բոլորովին իրենց եկեղեցուց, իմ կարծիքով, սխալ բան է, և ես ձգտել եմ խուսափել դորանից: Երեխաներին ոչինչ չի ասում ազգային եկեղեցուց հեռանալու կամ աւերարանականութիւնը ընդունելու մասին: Բայց ես չէի ցանկանալ սխալ սպաւորութիւններ չառաջ բերել: Երեխաները պարտաւոր են (ստորագծումը հեղինակինն է) մասնակցել մեր բոլորական ժամասացութիւններին և նոցա ուսուցանուում է Քրիստոսի փրկութեան զործի

<sup>21</sup> Տես ծանօթ. 11, էջ 20.

(Erlösungswerk) մասին, համաձայն Աւետարանի...<sup>22</sup> ժողովրդի հետ յարաբերութիւնների մասին միասիննարը ասում է. «Պէտք է շնորհակալութեամբ չիշել, որ վերջին փարիների ընթացքում մեծ փոփոխութիւններ եղան ժողովրդի յարաբերութեան մէջ մեզ հետ. նոքա համակրում են մեզ և մեր գործին: Ի հարկէ, շեռ չի հասել ժամանակը, երբ կարելի լինէր յանձնել երեխաների կրթութիւնը լուսաւորչական հոգևորականութեանը և հայ ուսուցիչներին, եթէ կամենում ենք, որ ազատ ողորմածութեան մասին վարդապետութիւնը նոքա ըմբռնեն և բարի գործքերը նկատեն ոչ որպէս փըրկութեան աղբիւր, այլ որպէս նորա հեգեանք (wenn wir wollen, dass sie die Lehre von der freien Gnade erfassen und gute Werke nicht als eine Quelle der Erlösung ansehen, sondern als deren Frucht) \*:

Այդ պատճառով շատ ծանր կը լինէր ինձ համար յանձնել հայերին երեխաների շատփարակութիւնը, որոնց ես այնպէս սիրեցի<sup>23</sup>. Հեպաքքեր է այս նամակի պատասխանը, որը գրեց Ելզաս-Լոթրինդիայի կոմիտէի գործաւարը: Ընդ ցանկանումէք իմանալ, գրում է նա Դր. Ռայնուլդին, «Եթէ ինչ ենք մտածում մե՛ք այդ խեղճ երեխաների շատփարակութեան մասին: Թէպէտ ես շեռ ևս չեմ հարցրած մեր (Կոմիտէի) կառավարչական արեանից, բայց առաջուց կարող եմ ասել, որ մենք լիովին ընդունում ենք ձեր գործունէութեան գինը: Ձեր սիրելի կնոջ հետ շուք թողիք ամեն բան, նպատակ ունենալով որոնել Փրկչի համար այն թանկագին մարգարիպները, որոնք մի ժամանակ պիտի փայլեն նորա թաղի վերայ. և երբ այն ցոյց է տալիս նա ձեզ այս խեղճ փոքրիկների միջոցով, պիտի մենք ձեզ խորհուրդ տանք արդեօք յանձ-

<sup>22</sup> Տես ծանօթ. 10, էջ 25.:

\* Հալաստանեաց եկեղեցիքն, որպէս և բողոքականը, նոյնպէս չի ընդունում բարի գործքերը որպէս փրկութեան աղբիւր: Օրինակ, այդ ոգով է գրած Մելքիսեդէկ եպ. Մուրադեանցի «Պատմութիւն Քրիստոնէական եկեղեցւոյ» (օրինակ, էջ 140), թէև պարտաւոր ենք աւելցնելու, որ հալ եկեղեցականների մէջ մենք չենք նկատած որոգորւածութիւնն այդ մեծ վարդապետութեամբ:

ՄԱՆ. ՄՈՒՐՃԻ ԽՄԲ.:

<sup>23</sup> Տես ծանօթ. 10, էջ 5.:

նեղ նոցա լուսա որչական քահանաներին: Այ մի ժամանակ Եւթէ ուրիշ միջոցներով աւելի կարելի լինէր անել երեխաների նութեական բարօրութեան համար (Թէպէտ ևս շատ կասկածում եմ), աչնուամենայնիւ ևս կարող եմ ձեզ միայն ասել՝ պարմեցէք նոցա, երկրային անգթութեան այդ խեղճ զոհերին, հին-հին առակը Քրիստոսի սիրոյ մասին: Որովհետև այսպեղ, այս երկրում (=Էլզասում) մենք չենք կարող փնտնել նոցա, ուստի մենք ցանկանում ենք այնպեղ, վերեւ, հանդիպել սիրելի փոքրիկներին, երբ Տէրը մեզ կը կանչէ: Միայն վարահ եղէք! Այսպեղ աղօթում ենք ձեզ և ձերոնց համար, և ամենը, ինչ որ շուք այդպեղ անում էք մաքուր խըղճով յանուն Աստուծոյ, մեր կողմից ճիշդ կը համարուի. . . »<sup>22</sup>: Մենք շիրմամբ առաջ բերինք նամակի այն սողերը, ուր հեղինակը խօսում է երեխաների հետ այն աշխարհում հանդիպելու մասին: Հիլիսթունցի գրեածքները բոլորը լինն այդպիսի խօսքերով, պարկերներով և զգացմունքներով, և սա, մեր ցանկութեան համար՝ Հիլիսթունցի կրօնական հարցը պարզելու՝ շատ նշանաւոր կէտ է:

Շատ բնորոշ է Էլզասեան Կոմիտէի համար, երբ սա զեռ չէր պարկանում Ֆրանկֆուրտի կենտրոնին, առաջին նիստի արձանագրութիւնը: Այս նիստի մէջ նոյեմբերի 13, 1896 թ. վճռեց մի հրաւէր (Aufruf) հրատարակել, որի մէջ պիտի նկարագրէր հայ որբերի անբախտ դրութիւնը և պարզէր նոցա օգնելու անհրաժեշտութիւնը: Գորա համաձայն՝ Կոմիտէի զործունէութեան առաջին քայլերը պիտի լինեն՝ հաւաքած փողերով բերել Թիւրքիայից հայ որբեր և փեղաւորել նոցա գերմանական ընտանիքներում: Արձանագրութեան 4-րդ կէտը ասում է. «Կոմիտէի զործունէութիւնը չի լինելու կրօնազուրկ (interkonfessionell), այլ նա պիտի լինի անտարանակալան (ստորագծումը բնագրինն է): Ժողովը պարզ արտայայտում է նոյնպէս, որ նա հեռու է պահում իրան որ և է քաղաքական յետին նպատակներից: Նա ցանկանում է միայն քրիստոնէական ս'ր մատուցանել խեղճ որբերին և անբախտներին: Գործունէութեան միջոցին, Կոմիտէն ստիպեց մի քանի փոփոխութիւններ անել իւր շիրմաորութիւնների մէջ: Նոցա մասին կարգում ենք. «Մեծ շուարութիւնները, որոնք կապեւմ են երեխաների (Կերմանիա) բերելու հետ, վրանգը—զրկել նոցա իրենց ազգութիւնից,

բայց և նոցանից եւրոպացի չը շինելով... վերջապէս այն համոզմունքը, որ այդ երեխաները ամենից լաւ կը շաստարակեն իրենց սեփական երկրում և սորա օգտին, ստիպեց... և այլն: Այս կոմիտէի որբանոցի մասին (Վանում, շեկավարողը—Գր. Ռայնոլդս) կարգում ենք ուրիշ տեղ՝ Վերեխաները այնտեղ բոլորն էլ շաստարակում են աւետարանական հաւաքի մէջ: Եւ շեռ 1897 թ. Էլզասի կոմիտէի գործավարը, խօսելով այդ որբանոցի համար մի գերմանական ուսուցիչ ուղարկելու մասին, գրում էր. «... այսպիսով գուցէ կարելի կը լինի հիմք շինել Էլզասեան առաքելութեանը Արևելքում»<sup>24</sup>:

Պ. Ռոուբալը ինձ ասում էր, որ ինչպէս Գր. Ռայնոլդս, այնպէս և Էլզաս Լոթրինգի ճիւղ-կոմիտէն ամբողջ Հիլֆսբունդի մէջ կարող են ամենաբողոքականամտիւ համարել (և ես կաւելացնեմ առհասարակ Ֆրանկֆուրտի կենտրոնը, համեմատաբար Բերլինի կենտրոնի հետ): Պ. Ռոուբալը կարծես թէ իրաւացի է. գոնէ այքի է ընկնում այն երևոյթը, որ շաւանութեան վերաբերեալ կշռադատութիւնները զգոնում ենք մենք զլիաւորապէս Էլզաս-Լոթրինգի ճիւղ-կոմիտէի հրատարակութիւնների մէջ: Վերջինիս շաւանական շիրքը ստիպեց մեզ առանձին ուղարկութիւն շարձել նորա կարծիքների վրայ: Ինչ վերաբերում է Գր. Ռայնոլդսին, մենք օգուտեցինք ամենից շատ նորա գրաւածքներից. և շորա համար ունէինք երկու պատճառ. առաջին նա գրում է շաւանական հարցի մասին աւելի մանրամասն քան ուրիշները, և երկրորդ նորա համոզմունքները այս կէտի վերաբերեալ շահեկան են, որպէս ամերիկական միսիոնարի. իսկ սոքա աւելի բողոքական կրոնամօլ են համարւում, քան գերմանական բողոքական միսիոնարները: Այս հանդամանքները փոքր ինչ նոր լոյս են զցում մեզ հետաքրքրող հարցի վրայ:

Ի նկատի ունենալով այդ, կարծում եմ, որ աւելորդ չէ նաև առաջ բերել Թիւրքիայի ամերիկական առաքելութեանը, (Western Turkey Mission-ի), 1897 թ., յուլիս 3 կապացրած որոշումները: Գլխաւոր կէտերը սոքա են. «Փրկութիւնը Յիսուս Քրիստոսի միջոցով միակ հիմքն է ճշմարիտ կեանքի և ճշմարիտ մրաճողութեան համար: Այդ նպատակի համար օգուում ենք մենք

<sup>24</sup> Տես ծանօթ. 10, էջ 27-27-29.:

Աւերարանից, որը բոլոր քրիստոնեաների համար ընդհանուր հեղինակութիւն է կազմում, առանց հեյլեւելու որ եւ է առանձին շաւանութեան կրօնական ուսումին, զգուշապէս խուսափելով այնպիսի հարցեր արծարծել, որոնք կարող են եկեղեցու մէջ բաժանումներ յառաջ բերել: Դէպի հայ լուսաւորչական եկեղեցին զգում ենք մենք ջերմ քրիստոնէական և սրբապաշտ համակրութիւն, և ցանկանում ենք նորան ամեն բարգաւաճում: Այդ պատճառով մենք կարծում ենք որ հարկաւոր է ամենամեծ հոգս քաշել, որ հայ որբերը, որոնք թեպէս և տեղաւորուած են որբանոցներում բողոքական հրակողութեան տակ, այնուամենայնիւ հայեր մնան—լեզուի, սիրոյ մէջ Դէպի իրենց ժողովուրդը, անմիջական պատրաստութեան մէջ օգտուելու լինելու այն հասարակութեան, որին նոքա պատկանում են:

Քննարկապէս պիտի անկարելի համարել<sup>25</sup>, որ կրօնական շաստութիւնը որբանոցներում կատարել լուսաւորչական եկեղեցականների միջոցով եւ մեր հսկողութեան տակ: Դորա փոխարէն թոյլ է տրուած այն երեխաներին, որոնց ազգականները այդ ցանկանում են, այցելել կիւրակի առաւօփները լուսաւորչական եկեղեցին, և չարակ Դէպքերում նաև հասարակ օրերը: Այդ եկեղեցու մէջ երեխաները կարող են անել այն, ինչ որ ցանկանում են իրենց քահանաները, և ոչ ոք չէ արգելում նոցա ոչ խոստովանութիւնը, ոչ էլ հաշորդութիւնը: Որբանոցների հսկողութեան գործում որ եւ է բաժանում կամ միացում առաքելութեան (միաստի) և լուսաւորչական եկեղեցականների հետ, այժմ ոչ ցանկալի է, ոչ էլ հնարաւոր:»:

Ամերիկական առաքելութեան (Western Turkey Mission) այդ որոշումը ընդունակ է, կարծես, փոքր ինչ ցրել ընթերցողի կասկածները գերմանական բողոքականների վերաբերեալ ճաճկաստանում, մանաւանդ որ ամերիկական առաքելութիւնը, կրկնում ենք, աւելի կրօնամոլ է համարուում, քան գերմանականը Արևելքում: Եւ քիչ է մնում որ ընթերցողը այն եզրակացութեան գայ թէ ռուզէ և ճիշտ է, որ Հիլֆսբուրգը չի շեղակարուում իր գործունէութեան մէջ յետին բողոքական նպատակներով, արդէն

<sup>25</sup> Վերջին բոլոր քաղաքները,—տես ծանօթ. 10. էջ 30.:

յաջորդ փոշերը նորից ցրում են այդ կարծաբան մոլորութիւնը և նորից շնունւմ են նորան հին տեսակէտի վերայ: «W. T. Mission-ի բերած որոշումների վերաբերեալ Ռ. ր. Ռուբախը ասում է. «ես կարծում եմ, սոքա այն սկզբունքներն են, որոնց ի նկատի ունենալը երաշխաւորում է արդասաւոր յաջողութիւն որպէս անտարանայցման գործում, այնպէս էլ հայկական եկեղեցու համար մասնաւորապէս»<sup>26</sup>: Բայց նոյն Ռ. ր. Ռուբախը, մի յօդուածում, խորագրած «Ենչ պիտի ի նկատի ունենանք մենք հայերի համար գործունէութեան մէջ», և փոյազրած Christliche Welt շաբաթաթերթում, ասում է. «բողոքական առաքելութիւնը հայերի մէջ, ինքն ըստ ինքեան սխալ ձեռնարկութիւն է» (ist an sich ein verfehltes Unternehmen)<sup>26</sup>:

Այսպիսի հակասութիւններով լի են Հիլֆսբունդի (= Գերմանական ընկերութեան) կամ նորան համակող գերմանացիների կըշուատարութիւնները «դերմանական բողոքական միսսիօնի» յարաբերութեան մասին յէպի հայ լուսաւորչական եկեղեցին և մենք աշխատել ենք այս հարցի վերաբերեալ առաջ բերել այն քաղաքները, որոնք հակասում են միմեանց: Այդ է պարսաւոր, որ այնքան շուտ է սկզբից որոշ կարծիք կազմել, թէ որոնք են Հիլֆսբունդի ըողոր ձգտումները: Բայց հէնց այդ հակասութիւնների վերաբերմամբ կարելի է երկու ենթադրութիւններ անել, կամ Հիլֆսբունդը ինքը չըզիպէ հաստատ թէ ո՞ր փոսակի են նորա ձգտումները հայկական եկեղեցու վերաբերեալ, և այդ պարսաւորով նորա գործիչների կարծիքները ամեն քայլափոխում հակասում են միմեանց, և կամ՝ այդ հակասութիւնները լոկ երկուութեան են և այդպէս թւում են միայն կողմնակի մարտուն, որը չի ըմբռնած Հիլֆսբունդի գործիչների իսկական միտքը: Եթէ առաջի ենթադրութեան հետազօտութիւնից յետոյ զանք բացասական պարասխանի, այսինքն, որ գերման ընկերութիւնը ինքը պարզ չէ ըմբռնում իր նպատակները (որ շուտ երեւակայելի բան է), այն ժամանակ այդպիսի քննութիւնը գրեթէ ասարդիւն է շտանում, որովհետեւ այդպիսի եզրակացութիւն մեզ համար ոչ մի շահեկանութիւն չի կարող

<sup>26</sup> Խօսքը, ի հարկէ, ամերիկական որբանոցների մասին է աշտել:

ներկայացնել. այսօր-վաղը Հիլֆբուրնի՝ կարող է պարզել իւր ճշգրտութիւնը: Իսկ եթէ մենք հասնենք Դրական պատասխանի, թէ «Օգնութեան միութիւնը» ընդհակառակը ունի շատ օրոշ և պարզ նպատակներ իւր գործի մէջ, ապա պիտի ընդունել որ նկատած հակասութիւնները երևութական են: Այդ պատճառով, մեր ցանկութեան մէջ լուծել, այսպէս ասած, Հիլֆբուրնի՝ եղանակական պրոբլէմը, մենք կ'փորձենք քննել այս հարցը անմիջապէս երկրորդ ենթադրութեան տեսակէտից. կ'փորձենք ներշնչակից այդ հակասութիւնները մի աւելի ընդհանուր գաղափարի տակ: Սա—յաջորդ անգամ, ուր սկզբից ցոյց կ'տանք թէ որ կողմից և ինչ յարձակումներ են եղել Հիլֆբուրնի՝ վրայ և ինչպէս է նա պատասխանել:

(Շարունակելի)

## Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՏՐՊԵՏ.—Քոռ-Եղիկ. Վէպ. Թիֆլիս 1898.

ՆՈՅՆԸ.—Շինոց. պատկեր 1898:

ՆՈՅՆԸ.—Ժառանգներ. պատկեր 1899:

ՆՈՅՆԸ.—Բերսայի Առաքելը—Վէպ. 1899:

ՆՈՅՆԸ.—Թուլումբաջիներ. պատկեր. 1899, (Վերջին չորսը տըպուած են Նոր-Նախիջևանում):

Պր. Ատրպետը հաշ ընթերցողներին ծանօթ է իւր մի քանի հեղինակութիւններով: Բացի վերոյիշեալներից նա գրել է նաև և երկու մեծ վէպ՝ Խեւ կարայետ (արտարուած Մուրճից Թիֆլիս 1889) և Ալմաստ (որպաժ Մոսկուա, 1891). և երկու թարերական բաներ՝ Սարրաֆ ոչբերգութիւն (Թիֆլիս, 1893) և Շուշան, օպերայի համար (Ս. Պետերբուրգ 1890 թ.): Նրա զրուածքների նիւթը վերցրած է Տաճկաստանի հաւոց կեանքից, որին նա բաւական մանրամասն ծանօթ է երևում. Նրա բոլոր զրուածքներում աչքի է ընկնում աչն բանը, որ նա չի զանազանում վէպը իրականութեան մէջ տեղի ունեցած անցքի մի քիչ ընդարձակ և զարդարուն նկարագրութիւնից, ուր մտնում են նաև խօսակցութիւններ և բնութեան տեսա-

րանների նկարագրութիւններ. Վէպը մի գեղարեստական ստեղծագործութիւն է: Վէպ գրելու համար հեղինակը պիտի զէպքերը, անձերը, երեւոյթները և առհասարակ կեանքում պատահած բաները իւր գրելիքի առարկայ շարձնելուց առաջ գեղարեստութեն վերարտադրէ: Վէպը որքան իրականութեան մօտ պիտի լինի, այնուամենայնիւ նա իրականութիւն չպիտի լինի: Որովհետև վէպը պատկերացնում է կեանքի այս կամ այն կողմը, ուստի նրանում կատարւած գործողութիւնները կարիք ունին անձնաւորութիւնների: Այդ անձնաւորութիւնները պիտի լինին տիպեր, իսկ տիպը իրական անձնաւորութիւն չէ, այլ նոյնանման մարդկանց ընդհանուր չտրկութիւնների ամփոփում: Գեղարեստական երկը ստեղծագործութեան ծնունդ.

է: Ստեղծագործածը կը լինի վէպ, գեղարւեստական երկ, իսկ տեսածը կամ լսածը նկարագրել չի լինի երկ, գեղարւեստական մի բան, որովհետեւ նրանում պօէզիա, ստեղծագործութիւն չըկայ: Դա կը լինի... ինչ ուզում էք անւանեցէք, բայց ոչ թէ վէպ, պատկեր, կամ մի այլ գեղարւեստական երկ: Նրկը երկուսքի հետեանք է, նրան հոգեպէս կրկնելով պիտի առաջ շերել:

Այս տեսակէտից պ. Արարկեոյ գրածքները չի կարելի գեղարւեստական երկեր անւանել. Դրանք համարեա բոլորն էլ իրական շէպքերի և անձնաւորութիւնների նկարագրութիւններ են առանց ստեղծագործութեան: Ար իւր գրածքները իրական կեանքից են վերցրած, հեղինակը մի առանձին պարծանքով է լիւում: Նրա գրքերից շատերի ճակատին Դրոշմւած է՝ այս ինչ կամ այն ինչ տեղի «իրական կեանքից»: Ալմաստի ճակատին գրած է. «վէպ Բարձր Հալոց իրական կեանքից»: Իսկ «Սև Կարպետի» սկզբում Դրած «Նրկու խօսք»-ի մէջ հեղինակը ասում է, որ վէպի գլխաւոր անցքերին ակնհայտ է եղել մօտը ունի շար պայտուցներ, գործող անձնաւորութիւններից ումանք էլ Դեռ կենդանի են և ալլն, և աւելացնում է. «Մենք աշխատել ենք, որքան կարելի է, խօս տալ երեակալութիւններից և միայն հետեւ իրականութեան, որը անցաւոր աշխարհի բնութիւնական պարկերն է»: Նրկի հեղինակը սրանք լիւում է, որ աւելի խոր տպաւորութիւն անի ընթերցողի վրայ, որ հաւատան իր գրածներին: Միթէ վէ-

պով որեէ գալափար արտապայտելու համար անհրաժեշտ է ալլալիս խոստովանութիւններ մէջ բերել: Աւելի լաւ չէր լինի, ունեցած Դոկումէնտներով և ալլ ապացուցների նկարագրութիւններով մի պարմութիւն կամ ուսումնասիրութիւն գրել: միթէ Դա պակաս համոզի: կը լինէր «մէզուկորներին» պակասաւոր կոյմերը պարկերայցնելու համար: Կամ թէ հալ ընթերցողներին շարերին ծանօթ «Քալտիք ինկիլիցիոյ» գիրքը, որի նմանը, կարծես, ուղեցել է հալ հասարակութեան տալ պ. Արարկեոյ, առանց նրա ասած երեակալութիւններից խօս տալու, կամ առանց «միայն իրականութեան» հետեւելու, պակաս զգւանք է առաջ բերում շէպի ինկիլիցիոյները: Կամ հէնց մեր նորագոյն գրականութեան մէջ ելած բացասական երեակալութիւնի նկարագրութիւնը, որպիսիք ունին Բաֆֆին, Նիրանդադէն և ուրիշները, միթէ «երեակալութիւնից» խօս տւած կամ «միայն իրականութեան հետեւած բաներ են, որ ալլնքան տպաւորիչ են: Բանը նրանում չէ, ի հարկէ, թէ հեղինակը կեանքում պարտահաձ մի զգւելի շէպք կը նկարագրի, թէ նոյնանման, իւր մէջ աւելի շար ընդհանուր շարկութիւններ պարունակողը երեակալութեամբ կը լրացնի և աւելի տիպալին Դարձրած կը պարկերացնի: Բանը նրանումն է, որ առաջին շէպքում Դուրս կը գալ մի շէպքի, թէկուզ հանձարել, նկարագրութիւն, իսկ երկրորդ շէպքում մենք կ'ունենանք գեղարւեստիկ վերարտաբրած իրականութիւն: Ասա մենք կ'անւանենք—պարկեր:

պատմութեամբ, վէպիկ կամ վէպ, նաչելով գործողութիւնների քանակութեան, ճոխութեան, պարզութեան կամ բարդութեան, ալիսինքն գրական արեղծագործութիւն, որը ընթերցողին նաև գեղարուեստական բաւականութիւն կը պատճառի: Ի նարկէ իրական շէպի նկարագրութիւնն էլ կարող է արժէք ունենալ և բաւականութիւն պատճառել, եթէ լաւ է կարարած: Բայց շարունակ միայն շրանցով գրաւորին մեծք չենք անւանիլ վիպասան:

Պ. Աորպետը իւր գրածքները անւանում է վէպ կամ պատկեր: Բայց, ինչպէս պարզ երևում է, շրանք ոչ վէպ են, ոչ էլ պատկեր, ալ մարդկանց զարշարուն կենսագրութիւններ և զանազան անցքերի նկարագրութիւններ: Նա Թուրումբալիները անւանում է պատկեր: Իս ոչ ալ ինչ է, եթէ ոչ Պոլսի երկութարդերում գոյութիւն ունեցած թուրումբալիական (հրէջների) երկութարների կազմակերպութեան և գործունէութեան նկարագիր: Միթէ, եթէ փոխանակ գրելու, թէ կաշ Մ.թոն նրեհւած մշեցի գաշթականներին շուտ օգնութեան չըհասաւ, ալ պատճառով էլ նրանց բնակարանը բոլորովին ալրեց,—եթէ փոխանակ ալսպէս պատմելու, ալս օգնութիւն խնդրելը և մերժելը շրուած են խօսակցութեան ձևով, իսկ մշեցիների բերում շրուած են «քիւլֆաթ» և «ձժեր» բառերը—շրանով «Թուրումբալիները» պատկեր կըշառնալ: Արպէս էլ նրա միւս գրածքները: Ալմաստը—Ոսկանի և Ալմաստի չարարերութիւնների մանրամասն

նկարագրութիւն է (երևի իրական անձնաւորութիւններ): Ալս վէպւած բաւական շնդարձակ տեղ է բունել «Բարձր Հալոց թատերասերների ընկերութեան» նկարագիրը: Ամենայն բարիխղճութեամբ և մանրամասնութեամբ նկարագրած է ընկերութեան առաջ գալը, գործունէութիւնը, խաղացած պիեսները, ալցետները, վարչութեան անշամների անունները, մինչև անգամ հասոյթների քանակութիւնը: Ապա շատարանի զանազան նախագահներ և քարտուշարներ նշանակելու և նոցա պաշտօնանկ լինելու արկածալի պատմութիւնները և նոյնանման շատ բաներ: Ինչու համար, ի նարկէ գոյութիւն ունեցող մի հիմնարկութիւն վէպի մէջ կարող է տեղ բռնել հերոսների գործունէութեան ուղղութիւնը, բնաւորութիւնը և ուրիշ հանգամանքներ աւելի կենսական շարձնելու համար: Բայց գրաւել ալ հիմնարկութեան մանրամասն նկարագրութիւնով, շա վէպի սահմաններից շուտ է. շա քաշաքակըրթութեան պատմութեան գործն է: Խու կարպետի մասին արդէն մէջ բերինք հէնց հելինակի իւր իսկ խօսքերը: Իրամատրիկական գլւածքների պօէզիայի մասին որ խօսք չի կարող լինել: Իբրև շրամատրիկական գրւածքներ էլ արժէք չունին: Շուշանի շէպքը արդէն չարքնի է. իսկ Սարաֆի բովանդակութեան մասին աւած է «պատմական կեանքից», ուրեմն աւելի ևս իրական: Բոտ-Նշիկի աւագակութիւնների մասին մինչև հիմա էլ պատմում են, կսկ Շիմոցը, Բէրսայի Առաքելը և Ժառանգները երևի

իրական շէպքեր են: (Վուցէ Ժառանգներում միքիչ շեր խաղացած լինի ևրևակաութիւնը): Վուցէ շափերին հեղաքրքրի լինի կարգալ Ալմաստի գոհաբերութիւնները Ասկանի համար, Ոսկանի խիտը վարմունքը կոստանցալի հետ, Տէր-Նարապետի և Դաւթի խաչագողութիւններ, Շուշանի բէգի գլխին խաղացած օլինը, Քոռ-Նշիկի, Առաքելի և Արտաշէսի (Ժառանգներ) վրէժխընդրութիւնները, կաշ-Նաղարի գործունէութիւնը (Թուլումբաջիներ), Վարդեան ախպոր հպարտութիւնը և մարաբալութիւնից խոյս տալը (Շըխնոց), Թօսունի ուրական ձեանալլ (Սարրաֆ), զանազան մարդկանց արկածները, քաջագործութիւնները, առաքինի վարք ու բարքը, անձնագոհութիւնը, անսաման սէրը և այլն. բայց թէ նրանք մեր կեանքի առանձնաչափութիւնները չեն, ոչ էլ գեղարեստական կտորներ, կամ բանաստեղծական ստեղծագործութիւն: Կէհ, խօսմ մենք մի նոր Վարք-Սրբոցի կարօթութիւն չունինք: Մեզ հարկաւոր են մեր կեանքի երևոյթները որոշ կերպով լուսաբանւած, մի հիմնական գաղափարի շուրջը համախմբւած. մեզ հարկաւոր են փապեր որոնց մասին կարգալիս կարողանանք ասել—անա, սա այս փեսակ մարդկանց ներկայացուցիչ է, սնւած այս ինչ հողի վրայ, այս ինչ երևոյթների ազդեցութեան տակ: Մեզ հարկաւոր են փապեր, որոնց մասին կարողանանք ասել—սա մի մարդ է, որ մեր կեանքի այս ինչ պարմական, հասարակական, քրքրական, ժառանգական երևոյթ-

ների արդիւնք է: Մի խօսքով վէպում մեզ հարկաւոր է ունենալ կեանքի ուսումնասիրութիւն, նրա այս կամ այն երևոյթի փոխալին պարկերով:

Բաւական չէ Շիրակեցի մի Քոռ-Նշիկի պատմութիւնն անել և վրան գրել՝ «վէպ շիրակեցիների պատմական կեանքից»: կամ կարծում պատահած անցք նկարագրել և վրան գրել՝ «վէպ Բարձր Հայոց իրական կեանքից»: Միթէ Քոռ-Նշիկի նման մի հարստահարւած որբ չէր կարող ծնւել մի ուրիշ տեղ, կամ «Ալիստ» ում նկարագրւած շէպքերը չէին կարող պատահել Տաճկաստանի մի ալլ քաղաքում: Նթէ ասենք, որովհետեւ գործողութիւնները մեծ մասով կարարւում են կարիւնում կամ Շիրակում, դա էլ ճիշտ չի լինի, որովհետեւ Քոռ-Նշիկի մասին աւելի չ. որ է պարմած, երբ նա գործում էր Շիրակի սահմաններից դուրս, իսկ Ալմաստում նկարագրւած անցքերը մի խոշոր մասով տեղի են ունենում Կ. Պոլսում կամ այլ տեղ: Բայց եթէ ընդունենք անգամ, որ շէպքերը պատահում են մեծ մասով Շիրակում կամ Բարձր Հայքի սահմաններում, այնուամենայնիւ չենք կարող ասել, թէ դրանք Շիրակի կամ Բարձր Հայքի կեանքից վէպեր են, որովհետեւ չկան այդ տեղերի մասին առանձնաչափութիւններ, որոնք միմիայն դրանց չափուկ լինին, որ կարելի չըլինի ասել, թէ այդ երևոյթները ամեն տեղ էլ կարող են լինել: Նթէ Քոռ-Նշիկում ներառւած անցքերը ամբողջովին փոխադրենք Արարան, Փամբակ կամ

Լոտի, միթէլ չէնք կարող նոյն իրա-  
տւածքով ասել՝ վէպ Արարանի, Փամ-  
բակի կամ Լոտու կեանքից: Միթէ  
նոյնպիսի համիաներ, որոնք հովւին  
չեն ուզում աղջիկ տալ, չըկան ալ  
տեւեր, կամ որք հովւի աշխատանքը  
հարտահարտներ չըկան ալ տեղի-  
րում բացի Շիրակից: Իսկ բարբառի  
մի քանի առանձնապարկութիւններ  
կամ Խլի-Ղարաքիլիստ անունը չեն  
կարող աչք վէպը (եթէ 7ա վէպ հա-  
մարենք) «վէպ շիրակեցիների կեան-  
քից» 7ուրս բերել: ալ պէտք էր  
ասել պէպքը պատահել է 40-ական  
թւականներին Շիրակում, կամ, ինչ-  
պէս արեւմտցիք են անում՝ «մարտու-  
մը պատմութիւն»:



Աչք զանազան կեանքերից վեր-  
ցրած, երբեմն իրական, պատմու-  
թիւնների հերոսները լրար աչնքան  
նման են, որ համարձակ կարելի է  
մինը միւսի տեղ շնել: Կրանց խո-  
սակէութեան ոճը բոլորովին նոյնն  
է. բիշկն էլ, անկիրթ գիւղացին էլ,  
խոհարարն էլ միակերպ, երկար պար-  
բերութիւններով, ոճի միևնոյն  
առանձնապարկութիւններով են խո-  
սում: Բոլոր հերոսներն ու հերոսու-  
հիններն էլ երեւի պատրոնոմներ են.  
երբ ուրեւու առիթ է լինում, ուտում  
են շար մեծ ախորժակով ասիական  
կերակուրների ամենաընտիր տեսակ-  
ները: Երբեմն միացն, այն էլ հերո-  
սուհիների, արտաքին նկարագրու-  
թեամբ է զբաղում հեղինակը. և խո-  
կապէս ապացուցանում է, որ «երևա-  
կալութիւնից խոյ է տալիս»: Զե-  
ղինակը երեւի առաջ ունի գե-  
ղեցկութեան մի տիպար, և նրա բո-

լոր հերոսուհիներն էլ արտաքին  
պատկերով 7րան են նման:

Խե կարողեսում Տիրուհու մա-  
սին ասած է. «Տիրուհին մի տան  
և չորս տարեկան աղջիկ էր, ոչ շար  
բարձր հասակով, բարակ կազմաւ-  
քով, սե-սե աչքերով և թուխ մա-  
զերով, որոնք փալում էին սև սաթի  
նման: Մի քիչ թուխ էր մորթը,  
բայց ոչ սև ու 7եղին, ալ ճիշտ աչն  
գոնով, որին մեր ժողովուրդը ցորե-  
նագոն է անւանում: Բայց չքնաղ  
էր նրա 7էմքի գծադրութիւնը, ի-  
րար կցած բարակ և երկար նուրբ  
ունքերը, խոշոր աչքերը՝ բամբակի  
նման սպիտակուցներով, երկար թեր-  
թիկները, ողորկ, նուրբ և բութալը  
քիթը, վարդագոն թշերը, կարմիր  
ու բարակիկ պոնկները—աչս ամենը  
նրան տեսնող երիտառար7ի սիրտն  
էր կորադում, ոյին թոցնում, ուշքը  
տանում» և ալն: (Խե կարողես 66)  
Բէգի կնոջ մասին ասած է. «...և  
մի վսեմափալ, բարձրահասակ և  
բարեկազմ տիկին ներս մտաւ: Բամ-  
բակի նման սպիտակ 7էմքի վրա  
թէն տարիները իրանց խորչերն ու  
ակոսները թոշէլ էին, բայց Ֆինջա-  
նի նման խոշոր կեռ աչքերը (? երե-  
ւի տպագրական սխալ է) սև ու եր-  
կաչն թերթիւնքներով, բարակ ու  
նուրբ ունքերը և վար7ի պէս կար-  
միր աչտերը կարծես բնութեան հեղ-  
կուում էին ու պահպանում նաճա-  
պետական խաթունի առաջութիւնը:  
Արծւի սրածալը ունքը, վարդագոն  
բարակիկ չրթունքները և կզակի վրա  
գնդիկ խալը ապացուցանում էին  
բնութեան աչն առաջ պարզները,  
որոնցով զար7արած է եղել լեռ-

Ների ԴՂԽՈՆՏԻՆ և ծալիկների ԴՈՒՍՊ-  
 րը իւր գարնան փորիներումս վե-  
 հապանծ լալն ճակատը զարդարած  
 էր» և այլն: (Խն Կարապետ 126):  
 Ալմաստի հերոսուհիներից Կոստան-  
 ցալի մասին ասւած է, որ նա «ա-  
 ոռչ և գեղեցիկ կազմւած» ունէր.  
 (Ալմաստ 21). Ալմաստի աշկազ, Գո-  
 հարիկի մասին ասւած է, որ նրա  
 «գեղեցկութեան փալ»: ամենքի ուշ-  
 քըն էր գրաւում: Սե-սե մագերը,  
 խոշոր աչքերը, երկազն թերթեւունք-  
 ները, նուրբ ու խիտ ունքերը, փոք-  
 րիկ շրթունքները, սպիտակ մորթը,  
 վարդագոյն աչտերը խոստանում էին,  
 որ նա լինելու է ժամանակին Ար-  
 զըրումի ամենագեղեցիկներից գերա-  
 զանցը»: (Ալմաստ 67). իսկ Ալմաս-  
 տի մասին նոյն երեսում՝ «Գեղեցիկ  
 էր ճէնց ինքը Ալմաստն էլ, սիրուն  
 ու ասորով, և այնքան փալւազ նե-  
 շութիւններն ու կակիծները փեսնե-  
 լուց զիտու գեռ պահպանել էր իւր  
 թարմութիւնը, քնքշութիւնը ու ե-  
 րեսի փալը: Խոշոր ու հրացալտ սե  
 աչքերը, թաւ թաւ ունքերը, և լալն  
 ճակատը փալում էին անմեղութեան  
 Դրօշմով, արևից ալրւած ցորենագոյն  
 Դէմքի մորթը և վառվառն աչտերի  
 ցլաւցմունքը Դեռ չէին թառամել և  
 շրթունքների կարմիր գոյնը Դեռ  
 մըցում էր շատ օրիորդների հետ:  
 Քարծր հասակը, վալեւուչ կազմած-  
 քը, լալն կուրծքը և թիկունքը, բա-  
 րակ մէջքը և գեղեցիկ քալերը նրա  
 կին կամ մայր եղած լինելը կասկա-  
 ծեցնում էին»: Շուշանի մասին աս-  
 ւած է՝ «Շուշան էր անունը, նման  
 ալն սպիտակ ու քնքշիկ ծաղկին,  
 որ աճում է հովիտների ձորերի լա-

տակում: Սպիտակ էր մորթով Շու-  
 շանը՝ շուշանի նման, աչտերը վառ-  
 վըռուն՝ վարդածաղկի նման, խոշոր  
 ու սե աչքերը՝ սե սաթի նման, կա-  
 մար ու խիտ ունքերը՝ թաւլի նման,  
 նուրբ ու սլորիկ քիթը՝ նկարւած  
 պատկերի նման, բարալիկ ու փոք-  
 րիկ շրթունքները՝ նուան հատիկների  
 նման, սպիտակ ադամները՝ մար-  
 գարտի նման, լալն ու թափանցիկ  
 ճակատը՝ հալելու նման, սե մագերը՝  
 երկար, խիտ փալուն մեղաքսի նման  
 երկար վիզը՝ չլկած փղոսկրի նման,  
 բարձր բուլը, չինարի նման, լալն  
 կուրծքը՝ խորանի նման, ուռած,  
 ցցւած սրինքները՝ հասած զեղծի  
 նման, Դիւրախօթ բազուկները՝ եղ-  
 ջնուռի փոփոկների նման, փոքրիկ,  
 կակիլիկ ձեռքերը՝ կոկոն ծաղկի նման  
 և համեստ քալերը թագուհու նման»:  
 (Ալմաստ 101). էն է պակաս, որ  
 ասի՝ «կոտուցը սուր՝ մեր Արշա-  
 կի քթի նման, բարուլը խուճուճ՝  
 թեկերը Տիգրանի մագերի նման,  
 փափիլիկ՝ Շարլիկի կունքի նման», և  
 Դուրս կը գալ «Տէքիաթ, հէքիաթ  
 պապս» և ոչ թէ «վէպ Քարձր Հալոց  
 իրական կեանքից»: Բալց աւելի լաւ  
 է շարունակենք: Ալմաստում մի կոչը  
 Մարօ կալ. Դրա մասին էլ ասւած է.  
 «կնոջ (Մարօի) բարձր չինարի նման  
 հասակը, առոշ լկազմւածքը, երկար  
 բարակ ունքերը, նուրբ քիթը, բա-  
 րակ և վարդագոյն շրթունքները ա-  
 պացոյց էին, որ նա եղել է ժամա-  
 նակին գեղեցկուհիների ԴՂԽՈՆՏԻՆ»:  
 (Ալմաստ, 493). Ապա Զաւալիք Մուլ-  
 իւանէի մասին՝ «ճրա հասակը, ձեւը,  
 շարմածքը և կազմւածքը Դիցուհու  
 միայն լատուկ էր: Բամբակի նման

սպիրտակ շէմքով, խոշոր ու սև սև աչքերով, կեռ կեռ բարակ ունքերով, երկար թերթեխներով, բաց վարդազույն աչտերով, կարմիր շրթունքներով, բարձր վզով, երկար, թաւ ու սաթի նման փալուն սև մազերով, լաչն թիկունքով, գունդ գունդ ծիծիկներով, բարակ մէջքով նման էր աչն անմահներին, որոնք...» և աչն (Ալմաստ, 524): Միւս գըրւածքներից՝ Քոռ-Նդիկի հերոսուհու «հրացալո աչքերը» մտնել էին» (Ք. Նշնիկ, 29): Շինոցի Մարգարիտը «հասած էր կարմրած խնձորի նման, սպիրտակ ձեռներն ու մորթը չէր կարելի զանազանել հազնւած (?) սպիրտակազույն չիթ դարիալից: Բազմահիւս մազերը, որ շարքով սլուած էր թիկունքի վրայ, փալում էին սև սաթի նման: Խոշոր աչքերը ցոլում էին և բոցեր արձակում շուրջը, իսկ աչտերը մալիսի վարդից էլ վարդազույն և էլ հրապուրիչ» (Շինոց 8): Ժառանգներից իմանում ենք, որ Բէգի համար փախցրած «հրեշտականման գեղանի օրիորդների անմեղ տիպար... գոհը շար անգամ նւաղած էր լինում, դուռից կախ քցած, սև ունքերի տակ երկար սև սև թերթեխներով աչքերը փակւած, շէմքը սպիրտակ մարմնի նման, տխուր և անշարժ: Նրկար և սաթի նման փալուն մազերը սփռւած սաւանի վրայ, իսկ կիսով չափ բաց, փղակրի նման ուշորկ և փալուն կուրծքը հազիւ նկատուելու չափ բարձրանում և իջնում էր (ժառ. 51) Աննամանը ամենից կատարեալն է. «Աննամանը՝ փոքրիկ հովուէին, արդէն մտել էր իւր տասնևհինգերորդ գարունը: Նա

փոթել էր շեռահաս վարդի կոկոնի նման, բարձրացել էր... նոճիների նման, թէև հարաւի հաստալ հոլմերը և կիզիչ արեւը նրա ձիւնի նման սպիրտակ մորթի վրայ հովուական տարիներում թողել էին իրենց կնիքը, բաց Աննամանը տնական կեանքում աւելի զեղեցկացել էր, ընդունելով Շիրակի ցորենի զարթաշէմ գոչնը: Նրա մինչև կրնկները համոռ սաթի նման սև մազերը, նրա լաչն ճակատը, կամար ունքերը, խոշոր աչքերը իրենց երկար թերթեխներով, վարդից էլ կարմիր աչտերն ու շրթունքները թովում էին շիրտը մահկանացուների աչքերը և զրաւում սիրտն ու հոգին: Նրա հետ շրջելը, նրա հետ հառաչելը, նրա ամբոսական բուրմունքը ծծելը, նրա հետ զրկախառնելը կարող էր ամենաթշուառ արարածին թեք տալ և սերովբէական թուխքներով երկինք բարձրացնել: (ժառ. 61): Խորհուրդ ենք տալ ս ծանր մեղքերով մեղուցեալներին շտապել շէպի Քլի գաւառը—աչտերից հեշտութեամբ կարելի է «սերովբէական թուխքներով երկինք բարձրանալ»: Այս նկարագրութիւնները կարդալիս մարդակամաչ կասկածում է, երևի Թիւրքաց Հալաստանում չէկ աշխիկներ չըկան, կամ թէ չէկերը աչտեր երևի արկածների չեն պատահում: գոնէ աչտէս են ցուց տալիս «իրական կեանքից» վերցրած այս վէպերն ու պատկերները: Բէրսայի Առաքելում լիւած է մի զեղեցկուէի՝ Հլլէն խանումը, իսկ Թուրքացիներում կիւն չըկայ որ նկարագրէր: Եւ շանում և Սարրաֆում, գրւածքների թափերական

լինելու պատճառով հերոսուհիները արտաքինի նկարագրութիւն չկալ— եթէ ոչ սրանք էլ անշուշտ կունենալին բարձր չինարի հասակ, սև սաթի նման երկաչն մազեր, սպիտակ կամ ցորենի գոյն մորթ, խոշոր աչքեր երկաչն թերթեխներով, լաչն ճակատ, շեղծի նման ծիծիկներ, նուրբ և ուշորի քիթ փափակ ծալորով:

Յուսով ենք, որ ընթերցողը կը ների մեզ այս երկար արտագրութիւնների համար: Արանով մենք ուզում էինք մի փոքրիկ նմուշ տալ թէ ինչպէս է Պ. Ատրպետը գրում իւր «Իրական կեանքից» վէպերն ու պատկերները, և թէ ինչ տեսակ խնամքով է նա ուսումնասիրում իւր պատկերացնելիք տիպեր:

1898 և 99 թւերին պ. Ատրպետի լուս ընծայած գրքոյկներն էլ գերծ չեն նոյն ընդհանուր պակասութիւններից: Սրանք կամ հերոսների պատմութիւններ են (Բէրսապի Առաքելը, Ժառանգներ, Քոռ-Նշիկ) կամ պատահարների նկարագրութիւն: Բէրսապի Առաքելը մի գաւառացի է, որ Կ. Պոլսում խոհարարութեամբ վաստակած գումարով անգրանք է գնում հայրենիքում վաճառելու համար, բայց մինչև որ խանութից ապրանքի հակերը շուրս կը բերէր, վաճառականը իրեն սնանկ է հրատարակում, և Առաքելի ապրանքը գնում է մեծամեծ պարտքեր լրացնելու: Իսկ Առաքելը վրէժխնդրութեամբ վառւած սպանում է վաճառականին և նրա կնոջ սիրեկան բէլին, որը շատարանի նախագահ լինելով մերժել էր Առաքելի պահանջը: Քոռ-Նշիկը Շիրակի ԽլիՂա-

բաքլիոս գիւղի հովիւն է, որը գիւղի համլաների գէմ կառուած է, որովհետև նրա առճիկը կորում են և նրա աշխատանքը հարստանալու: Նա էլ աւաղակ շարձած սար ու քար ընկած կողոպտում է հարուստներին և աղքատներին օգնում: Նշիկի և նրա ընկերոջ հրացանները շարունակ ցրում են թշնամիների ուղեղը, բայց վերջիններիս գնդակները Նշիկի մօտովն են անցնում: Վերջում Նշիկը փախցնում է և նշանածին, որը հարկադրւած պսակել էր իւր չըսիրած մինի հետ և հարստանեկան թափորի մէջ եկեղեցուց տուն էր վերադառնում: Նշիկին հեղինակը շատ միջոցներ ունէր մի գեղարեստական պատկեր շուրս բերելու: Գրքի սկզբի տողերից մարդ լուսադրում է սպասելու մի լուրջ ուսումնասիրւած տիպ, որովհետև վիշում է, որ Նշիկը հովիւ լինելով շարունակ հրացանաձգութեամբ էր զբաղւած, նրա հօրը գողութեան պատճառով կախել էին, ինքը մի նիհար, սգեղ կերպարանքով, փոքրահասակ և անմաղ երեսով մի մարդ էր: Եւ մարդ սպասում է, թէ անշարունակութեան մէջ կը դան աչն ժամանակաչ Շիրակի աւելի լուրջ ուսումնասիրւած պայմանները, և մեր առաջ կը պատկերանայ մի իսկական գեղարեստական տիպ, որ սուսկի նման բուսած չի լինի, այլ ուշակի հետևանք որոշ պատճառների: Բայց չորսը ի շերտ է ելնում և ստացում է մի պատմական անձնաւորութիւն, նրա զանազան արկածների և քաջագործութիւնների նկարագրութեամբ: Ժառանգների մէջ Արտաչէսը շարձակ-

ւում է իւր հօր կաշքերը չափոյտակած, իւր մօրը տիրացած և իրենց գիւշում հաստատուած քիւրդ բէգի սարալի վրայ, և նրա ապարանքը աչելով նրա և նրա որդու մահւան պատճառ է շառնում: Կեղեցիկ շէպքեր են, բայց թէ շրանք ոչ մեր երկրի համար ընդհանուր երևոյթներ են և ոչ էլ հոգեբանական նշանակութիւն ունեցող ճիշտ պատկերներ. ուրեմն ոչ տիպաչին են, ոչ դեղարեստական: Երևոյցում էլ պատմւած է Տաճկաստանում սովորական շարձած մի բան, կաշքերի չափոյտակութիւն վաշխառուների կողմից: Իսկ թուլումբաջիների մասին արդէն վերևը խօսեցինք: Երևոյցում մի հետաքրքրելի երևոյթ է մէջ բերւած. զա մարաշումիւնն է, աչսինքն հողազուրկ գիւղացի շասակարգ, որ ճորտական շրութեան մէջ է ընկել: Աւշ չափազանց հետաքրքրելի երևոյթի մասին աչնքան պակասաւոր, կցկորուր տեղեկութիւններ կան, աչնքան քիչ են պարզւած շրա հանգամանքները, որ ընթերցողը շատ քիչ կարող է գաշափար կազմել աւշ մասին. մինչդեռ

հեղինակը երևի հնարաւորութիւն ունէր աւելի մանրամասն պարկերացնելու մեզ աւշ երևոյթը և շրանից առաջացած չարիքները:

Եթէ յի ընդհանուր նորա ուզեանք գործել պ. Արրպետի հրատարակած վերջին գրքոյկներում, կը տեսնենք, որ նա զբաւում է հարստահարածների և զրկածների պատմութեամբ, և սրանց վիճակին ուրիշ ելք չի գտնում, բացի կատաղի վրէժխնդրութիւնից: Գոնէ աւշ հարստահարածների և զրկածների վիճակը, աւշ վիճակի առաջ գալու մանրամասն պատմաները ուսումնասիրէր և դուցէ մի աւելի նպատակաւարմար միջոց գործէր շրա առաջն առնելու համար: Գուցէ իւր Նկարագրած աւշ տեղերի կեանքը թող է տալիս այս կամ այն կազմակերպութիւնը, այս կամ այն ձևի գործունէութիւնը հասարակական, որնտեսական կամ մի ուրիշ ասպարէզում, աւշ բաների հետ մեզ ծանօթացնէր հեղինակը:

Մար. Յար.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԽՆԴԻՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Մի քանի տարիներից ի վեր Պարսկահայերի մէջ միտք է յշացել Պարսկաստանի հողի վրայ մի միջնակարգ Դպրոց հիմնելու: Եւ ոչ միայն միտքն է յշացել, այլ և խօսքից գործին անցնելու միտքով թէև շեռ ևս թողլ արդաշայտութիւններ են եղել Դրամական ֆոնդ կազմելու համար: Բայց և այնպէս խնդիրը շեռ ևս միայն յեղեղման շրջանի մէջ է, թէ Թաւրիզի հայոց առաջնորդարանում, թէ պարսկահայոց և թէ Կովկասեան մամուլի մէջ: Պիտի խոստովանենք որ մամուլի մէջ երևցած կարծիքների փոխանակութիւններին թէև հեպտաճ ենք, բայց նոցա մէջ չենք գտած իսկական հանդամանքների բացատրութիւնը:

Պարզը առայժմ այս է որ գոյութիւն ունեցող սկզբնական Դպրոցները թէև համարում են անհրաժեշտ, բայց նոքա շեռ ևս բաւարարութիւն չեն տալիս զգացող աւելի բարձր պահանջներին: Պէտք է զգացում սկզբնականից աւելի բարձր Դպրոցի:

Բայց սկզբնական Դպրոցից վեր կան բազմազան տիպի Դպրոցներ — հանրակրթական միջնակարգ Դպրոցներ և արհեստագիտական Դպրոցներ: Վճիռը յօգուտ այս կամ այն Դպրոցի կախած է երեք տեսակ պայմաններից. 1) նիւթական միջոցներից և 2) նպատակաշարմարութիւնից ընդհանուր ժողովրդի կարիքների համար:

Սեզ այնպէս է թւում թէ Պարսկաստանում ներկայումս բաւականաչափ պատրաստի հող չկայ մի միջնակարգ Դպրոցի համար: Կովկասեան թեմական Դպրոցների փորձը ցոյց է տւած, որ որքան և իցէ բաւարար չափով մի միջնակարգ Դպրոց պահելը արժենում է տարեկան շուրջ 40 հազար ռուբլի, որ ասել է թէ մօտ մի մի-

լիոն ուրբի գրամագլուխ Առանց այդ ապահովութեան — միջնակարգ Գպրոցի կանոնաւոր ընթացքը անհնարին է: Իսկ Պարսկաստանում կազմել մի միլիոն ուսուցիչ գրամագլուխ, այդ այնքան անհաւանական է, որ հեշտութեամբ կարող ենք անկարելիութեան սեղ ընդունել: Որպէս զի Քիֆլիսում Ներսիսեան Գպրոցի համար մի միլիոնի գրամագլուխ կազմէր, Գորա համար հարկաւոր է եղել մի Ներսէս Աշտարակեցու ամբողջ հեղինակութիւնն ու անձնական ջանքերը Քիֆլիսի պէս մի փոքրով, ուր ներկայ Գորումս կենդրոնացած են եղել թէ հայոց հարստութիւնը և թէ կրթած շատակարգը, և բացառիկ կարգադրութիւններ մի համեմատապէս հարուստ թեմի աղբիւրների համար յօգուտ չիշեալ Գպրոցի, և վերջապէս հողերի ու շինութիւնների վարձագների բարձրանալը՝ համեմատ Քիֆլիսի ընդհանուր յառաջդիմութեան, յընթացս մի ըանի փասնեակ փոփոխների: Երբէք չենք կարող հաւատալ թէ մի Քաւրիզ կարող լինի գլուխ բերել այն, ինչ Քիֆլիսը հաղիւ է գլուխ բերել այսքան ձիգ փարիներում: Իսկ եթէ Արարկապատկանի Գպրոցը այն է սալու, ինչ ցայժմ ընծայել են մի Երևանի կամ նոյն իսկ Շուշայ Գպրոցները, — ապա շնորհակալ ենք:

Իրամական խնդիրը մի միջնակարգ Գպրոցի համար մենք ամեն բանից առաջ քննեցինք միմիւսն այն պարտաւորով որ մեր արած շիտոշութիւնը կարական է և բացասող ամեն առարկութիւն: Բայց միմիայն գրամականը չէ որ պիտի պայմանաւորէր Արարկապատկանի համար մի բարձր Գպրոցի փոխարը որոշելիս: Ուզում ենք ասել որ նոյն իսկ եթէ կարելի լինէր մի միլիոն ուսուցիչ գրամագլուխ ստեղծել — մենք խորհուրդ կ'ուսայինք այն գործադրել ոչ մեզնում գոյութիւն ունեցող Գպրոցների նման միջնակարգ Գպրոց հիմնելու համար Արարկապատկանում:

Ի՞նչ է Պարսկահայ ժողովուրդը: Մի քանի փասնեակ հազար հոգու ազգաբնակութիւն, բաժանուած երկու իրարից կաութելապէս անջատ ու շատ հեռու թեմերի՝ Արարկապատկանի, որի մէջն է Քաւրիզը, և Իսպահանի կամ Նոր-Չուշայի, որի մէջն է և Քահրանը: Բայց բոլոր բուն իմաստով հայ ժողովուրդը, ազգի մի իսկական հարուած, Հայաստանի պարտական հողի վրայ նստած հայ ժողովուրդ, ներկայացնում է միմիայն Արարկապատկանը. իսկ Իսպահանի թեմի

հայութիւնը, սակաւթիւ լինելուց զատ, զաղթական բեկորներ է ներկայացնում: Պարսկաստանի հայութեան համար որ և է կենտրոնական դպրոց միւր կ'ունենար ուրեմն միայն Արարատականի հողի վրայ:

Իէ՛հ հիմա տեսնենք թէ ինչ է Արարատականի հայութիւնը. շաթաւրիզն է իւր 3 մօտակազ գիւղերով, Մաքուն 3 գիւղերով, Խոյը 7 գիւղերով, Սալմաստ գաւառն է 30 գիւղերով, Ուրմի քաղաքը 27 գիւղերով, Բարանդուզ գաւառամասը 10 գիւղերով, Սուլշուզը 9 գիւղերով, Սովուճ Բուլաղը 4, Միանդուաբ և գիւղերը 4, Մարաշան և մօտակազ 2 գիւղը և վերջսուկս Ղարաշաղը իւր գաւառակներովը՝ Իհզմար, Մէշափարա, Մնճվան և Քէջվան—իրենց 27 հայաբնակ գիւղերով:

Քաղով ազգաբնակութեան, թաւրիզի շրջանում հայերի թիւը պիտի ընդունել շուրջ 3.800, Մաքւայ շրջանում՝ 1.200, Խոյի շրջանում 1.800, Սալմաստի շրջանում՝ 9.400, Ուրմիոյ շրջանում՝ 4.300, Բարանդուզի՝ 1.200, Սուլշուզի՝ 700, Սովուճ-Բուլաղինը՝ 300, Միանդուաբինը՝ 300, Մարաշայինը՝ 900 և Ղարաշաղի շրջանում 5.800 հաջ, արականն ու իզականը միասին:

Ամբողջ Արարատականի հայոց թիւն է, հաշւած նաև մի կէս հազար հողի Արշաբիլում և այլ, վերը չընչուած տեղերում, ընդամէնը 30.392 ըստ վիճակագրութեան Արարատականի հայոց առաջնորդի, 1898 թ. տարեկից:

Որպէս տեսնում է ընթերցողը, Արարատականի հայոց ընդարձակ տարածութեան վրայ հաջ ժողովրդի թիւը այնքան է, որքան Քիֆլիս քաղաքի հայութեան հազիւ կէսը: Խղճուկ բան է, այնպէս չէ՛: Հարկաւ, բարեբախտութիւն է որ այդքան քիչ ժողովուրդ կուտակւած չէ մի քաղաքի մէջ, այլ ընդարձակ տեղ է բռնում, ցրւած լինելով 132 տեղերում: Հէնց այդ հանգամանքն է որ Արարատականի հայութիւնը, իւր այնքան չնչին թւով, որքան և իցէ քաղաքական կարևորութիւն է ներկայացնում, մինչդեռ եթէ մի տեղ կուտակւած լինէր—նա առեւ քաղաքական կարևորութիւնից զուրկ կը լինէր:

Բայց Ֆաբրը մնում է Ֆաբր: Մի միջնակարգ Դպրոց (6-7 հիմնական դասարաններով, և 2-3 նախապարտադրականներով), իւր գոյու-

Թիւնը արդարացնելու համար, սովորական պայմաններում, պէտք է ունենայ գոնէ շուրջ 500 աշակերտ: Իսկ ամբողջ Արրպատականում չկայ մի կենտրոն, ուր հայութիւնը ներկայացնում լինի գէթ այնքան ժողովուրդ, որը կարողանայ միմիայն ինքը ապահովել չիշեալ Թւի 2/3-ականը, որպէս զի միւս երրորդի համար կարելի լինէր թեմի այլ մասերին Դիմել:

Նոյն իսկ Ռուսիայի պէս մի համեմատապէս առաջացած երկրում միջնակարգ Դպրոց անկարելի է համարուում աշակերտներով ապահովել այն քաղաքներում, որոնք միայն 3.800 բնակիչ ունին, այսինքն այնքան, որքան ունին Քաւրիզի հայկական մասերը:

Ուրեմն, Քաւրիզում և առհասարակ Արրպատականում ու ամբողջ Պարսկաստանում միջնակարգ Դպրոց հիմնելու խնդիրը մենք համարում ենք, երկու շար կարևոր պոսակէտներից, բոլորովին անգործնական, չլսուած արդէն այն հանգամանքի մասին, որ հասարակական խոշոր Դրամագլուխների պահպանութեան համար Պարսկաստանի պէս երկրում չկայ ոչ մի լուրջ երաշխաւորութիւն:

Պէտք է նաև Դպրոցական խնդրի մէջ ժողովրդի իսկական պէտքերը և Դրական հանգամանքները աչքի առաջ ունենալ: Մենք շար աւելի ուրախ ենք, որ Արրպատականում զիւշական ազգաբնակութիւնը ձիւղող գերազանցութիւն ունի և ոչ թէ կուրակած է մի-երկու կենտրոնում: Հիպոտոպէս նաև սկզբնականից վեր Դպրոցի համար յանցանք է շեկավարել Քաւրիզի մի բուռն վաճառականների շահերով ու աչքաթող անել մնացած ամբողջութիւնը: Այլգրեւականից վեր Արրպատականին հարկաւոր են մի կամ զուցէ նաև մի քանի աւելի բարձր Դպրոցներ, բայց միայն այնպիսիներ, որոնք կարող լինեն ծառայել ոչ թէ մի բուռն վաճառականների շահերին, այլ զիւշական ազգաբնակութեան: Եւ այդ խնդրին մենք երբ և իցէ կ'վիրաշառնանք:

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

## Պ. ՎԷԼԻՉԿՕՆ ԵՒ ՀԱՅԱՏԵՑՈՒԹԻՒՆԸ

### I

«Վելիչկոն չկայ»... այսպէր էր նոր սարուայ այն կարևոր նորութիւն-շնորհաւորութիւնը, որ սալիս էին միմեանց ոչ միայն հայերը, որոնք Կովկասեան գրական Արախչէեւը գրական խժոժութիւնների առարկայ էր ընտրել, այլ և ուրիշ ազգութիւններից անձեր, որոնք անկեղծաբար թանկ են համարում ոուսաց կուլուրայի յաջողութիւնները Կովկասում և որոնք մեր «խստասիրտ շարումն չեն կորցրել մարդկայնութեան և եղբայրական համերաշխութեան զգացմունքները:—Պէտք էր այս վերջին երեք տարիները (1897—1899) ապրած լինել Կովկասում, պէտք էր պ. Վելիչկոն խմբագրած կիսապաշտօնական «КАВКАЗ»-ի ընթերցումից ամեն օրուայ փանջանքն զգացած լինել՝ հասկանալու համար այն հոգեկան թեթևութիւնը, որ պիտի զգան տեղացիները, տեսնելով Կովկասեան գրական հորիզոնը ազատւած այդ չարագուշակ ասուպից: Զարախնդութիւնը և Ֆաբրերի տշաւաղումը, ամենայարգելի զգացմունքների վիրաւորումը, սխտիւթ գարձրած սուրն ու գրպարութիւնը հայերի դէմ—սկսած պատմական արձանագրութիւնները կեղծելու մեղադրանքից և վերջացնելով ուղղակի մատնութիւններով նոցա նւաճողական և թշնամական ձգտումների վրայ Ռուսաստանի դէմ—այսպէս էին երեքամեայ գրգուման ամենօրեայ թեմաները արտաքին հեղինակութիւնից ոչ-զուրկ «КАВКАЗ»-ի կողմից: Առաջնորդողը և Ֆելիէտոնը, պրոզան և ուրանաւորը, ժողովրդական աղէտը կամ ընդհանուր ուրախ ցնծութիւնը—ամեն ձև ու առիթ տեղին էին համարում օր-օրի վրայ գանազան Բինոկլների, Զիգիտների և այլ այդպիսի յարգելի արշաւողների գրչով ապացուցելու համար թէ

հայերը կային և մնում են աշխարհի ամենասպոր և վնասակար ազգը, — շարժիների ազգ, որին Ռուսաստանը եթէ չոչնչացնէ էլ, դոնէ պիտի շուրս քէն Կովկասից, իսկ մինչև այդ՝ փակէ նոցա Դպրոցները, ոչնչացնէ այն ուսւ լրագիրները, որոնք յանդգնում են ուսաց փռուերով ծառայել ոչ ուսական զործին (?), այսինքն յանդգնում են վիճել պ. Վէլիչկօի հետ, պաշտօնեաների գեղծումները մերկացնել և այլն: Անհնարին է մի առ մի թւել «КАВКАЗ»-ի բոլոր արարքները, սրը հասաւ նոյն իսկ այն մեղադրանքին թէ հայերը կազմակերպում են Կովկասեան աւազակութիւնը, — որից, ասենք ի Դէպ, ամենից շատ իրենք են վնասուում, — անկարելի է թւել գործ Դրած բոլոր անարժան միջոցները. բայց մէկը, որ ամենից շատ տմարշին է, չի կարելի չըլիչել առանձնապէս:

Ինչպէս յայտնի է, անցած երեք-չորս տարիները ամենաթըշուտն էին հայերի առանց այդ էլ սարսափներով հարուստ պատմութեան համար: Անլուր զազանութիւնները, որ կատարեցին թիւրքերը հայերի վրայ, բնական կարեկցութիւն զարթեցրին Կովկասեան հայերի մէջ: Եթէ բոլորովին օտար մարդիկ ցնցուում էին կարգալով մարտիրոսազրութեան նկարագրութիւնը, այդ անօրինակ կործանումի, որի նմանը, ինչպէս ասում է Լըրուա-Տոլիէ, չի չիւում պատմութիւնը, — հապա ինչ պիտի զգային Կովկասեան հայերը, որոնք երեւոց աչքով փնտնում էին փմարդի գազանութիւնների հրաշքով ողջ մնացած Դժբաղդ զոհերին, այդ սոված, փանջուած փախստականների խմբերը՝ կրած փանջանքների նշաններով:

Հայերից ամենաաղքատները և ամենաքարասիրտները շրայում էին անհատապէս և հաւաքական կերպով թեթևացնել փանջուոյնների վիճակը: Եւ ճակատագրի ջախջախածների Դէմ՝ բարձրացաւ պ. Վէլիչկօի ձեռքը! Եւ հէնց այդ վայրկեանը Վաւկազ լրագիրը ամենաչարմարը համարեց, որպէս զի ամեն օր բոլոր հայերի գլխին մեղադրանքներ թափէ սեպարատիզմի, Կովկասը հարստահարելու և ամեն տեսակ փորձանքների համար: Պ. Վէլիչկօի և մալրաքաղաքային մամուլի մէջ նորա համախոհների ջանքերը ապարդիւն չանցան: Նոցա տարածած մատախուղը այժմ՝ անհաւատալի թւացող հեփեանքներ ունեցաւ, այն է՝ խղճուկ հայ գիւղացիները մի ժամանակ հալածանքի էին ենթարկուում քիւրդերի Դանակից

գիսխած հայերին օգնութիւն հասցնելու համար<sup>1</sup>: Եւ այդ սխտեմական վիրաւորանքը, որ նա հասցնում էր, ի շէմս հայերի, մարդկային հոգու շարժումներից ամենանւիրականին՝ անշահասէր սէրին շէպի մերձաւորը՝ շարունակում էր «Կաւկազ»-ը, կարելի է ասել, մինչև այ. Վելիչկոյի հրատարակատեսական «Ժառայութեան» վերջին օրը: Դեռ նոյեմբերին նա բարձրաձայն յայտարարում էր, ի գոհունակութիւն «Моск. Вѣд.» լրագրի, որ Թիւրքիան վաղուց խաղաղացած է, և որ ցուցմունքները հայերի թշուառութեան վրայ «հնարում են հայ թշտակիցները... Այդպէս վիրաւորել և ջիգրացնել, հայրենասիրական անխոցելիութեան հովանու տակ, երեք տարի անընդհատ... Ի՞նչ նպատակ կարող էր լինել այդտեղ: Թող հայերը չարափնաս ժողովուրդ լինեն: Բայց որ խելացի քաղաքագետը, վարչական անձը կամ հրատարակատեսակը խորհուրդ կը տայ կուել նոցա շէմ քիսաքիս անելու, ամենօրեայ վիրաւորանքի և նեարդերի գրգռման միջոցով:

Ճշմարիտ, կարելի է անհիմն համարել մի քանիսնների գուշակութիւնը այն բանի մասին, թէ «Կաւկազ» լրագրի խմբագրի նպատակն էր առթել բռնութեան որ և է անմիտ գործողութիւն որ և է տաքզուլս երիտասարդ հայի կողմից և շորա վրայ ամրացնել իր համար հայրենիքը փրկողի պատւանդանը:

Բայց, բարեբաղդաբար, այդպիսի անմտութիւն տեղի չունեցաւ: Բանաստեղծ-հրատարակատեսակը հեռանում է «Кавказъ»-ի խմբագրութիւնից ողջ առողջ, Ֆիզիկապէս: Բայց որպիսի փոփոխութիւն երեք տարւայ մէջ ուրիշ կողմերից: Պ. Վելիչկոն ոչ միայն բանաստեղծութեան մէջն է այրում «քաղաքացիական մտիւնները», այլ և հրատարակատեսական ծրագրի մէջ փոխում է Ֆրոնտը: Շափունց է արդեօք, որ, սկսելով «Кавказъ» լրագրի խմբագրութիւնը 1896 թւին, նա հաւաքում էր աշխատակիցներ լրագիրը արտաբուրութեան և Ռուսաստանը բնակող ժողովուրդների եղբայրական համերաշխութեան ոգով վարելու համար: Եւ ի՞նչ: Բաւական էր մայրաքաղաքային մամուլի Շէշկովսկիների կողմից մի թեթեւ ձայն, որ նա, «Кавказъ» լրագիրը վարելու երկրորդ ամսից արդէն իւրացնէր

<sup>1</sup> Տես «Спб. Вѣд.» 1897 թ. № 203:

նոցա մարդասրբեցական ծրագիրը և հասցնէր այն մինչև կապազութեան վերջին աստիճանը: Հայերը, ինչպէս և ամեն ուրիշ ժողովուրդ, ունին իրենց արժանաւորութիւնները և իրենց պակասութիւնները: Փոշ մինչև անգամ վերջինները աւելի շար լինեն նոցա մէջ: Մարդ խօսարարութեան սրտիսի աստիճանին հասած պէտք է լինի, որ, երևակայական և իրական պակասութիւնները մերկացնելու համար, ամենօրեայ անդադրում գրգռման համար իբր վայրկեան ընտրէ հէնց ընդհանուր ազգային վշտի ցնցոլ ժամանակը, որի միջոցին, թէ անհարական և թէ հաւաքական անձնաւորութեան համար՝ բարի խօսքը մանաւանդ մտիթարական է, իսկ պարսաւանքը, չըխօսելով արդէն զրպարարութեան մասին, մանաւանդ վիրաւորական է և շտուն: Համարեա ամեն մի համարում պահանջելով վունդել Ռուսիայից պարառտորուն փախտական հայերին, պ. Վէլիչկօն իւր գրիչը այնպէս հասցրեց, որ աշխարհում էր խել շրժբաղդ որբերի բերանից մի կտոր չոր հացը, եղբայրական օգնութեան մաքուր և սուրբ գործը հրատարակելով փնասակար Վերջապէս և ամենավերջինը, բնական շժբաղդութիւնը Ախալքալակի դաւառում, որ թաղեց հայաբնակ հինգ գիւղերի աւերակների մէջ մի քանի հարիւր մարդ և մուրացիկ շարձրեց մի քանի հազար աշխատաւորներ, նոյն իսկ այս սարսեցնող աղէպը, որ փելի ունեցաւ Քիֆլիսից երկու քաչլ հեռու, չըմեղմացրեց «Кавказъ»-ի չարութիւնը: Ընդհակառակն, այդ աղէպը սոխթ փուեց պ. Վէլիչկօին սրբապղծաբար խառնել իւր հին հայտրեցութեան հետ և... նոյն իսկ Նախախնամութեան ձեռքը!! Սա արդէն լցրեց բաժակը և իսկական լոյսը դցեց խմբաղիր պ. Վէլիչկօի հրատարակախօսական շէմքի վրայ, որը ներկայացաւ իւր զազանօցած մարդասրբութեան ամբողջ մերկութիւնովը (= in naturalibus):

## II

Պ. Վէլիչկօն անհարացաւ կովկասեան հորիզոնից, բայց հեւքերը կամ աւելի ճիշդը, վէրքերը, որ նա թողել է, շեռ գոյութիւն ունին: Անվստահութեան, զրգուածութեան, ցեղական թշնամութեան և փոխադարձ նախապաշարմունքի սերմերը փնային: Սակայն, պէտք է յուսայ, որ նոքա երկարաբաւ չեն լինիլ: Չարութիւնք

երկարակիաց չէ: Մի փոքր բարի կամքով էլ շատ հեշտ կարելի է բուժել և ուշշել բոլորը, ինչ փճացած է պ. Վելիչկոյի սգով, հակառակ ուսաց պարմութեան շարաւոր աւանդութիւններին: Հարկաւոր է միայն մի փոքր առողջ միտք, գիտութիւն հայերի պարմութեան և բնաւորութեան՝ որպէս զի կարելի լինի պարզաճաւոր կերպով գնահատել նոցա թշնամիների և թիւրքաց քաղաքական գործակալների տարածած այն առասպելը՝ թէ հայերը ուզում են վերականգնել Մեծ Հայաստանը և կռիւ մշել Ռուսաստանի դէմ: Ինչ ոչ որ չի ուրացել, որ հայերը գործնական խելք ունին, և այդ պարմաւորով ծիծաղելի է մեղադրել նոցա թէ նոքա թշնամական պլաններ ունին Ռուսաստանի դէմ և թէ ձգտում են ձեռք բերել քաղաքական զօրութիւն, որ նոքա չեն ունեցել ամենահին ժամանակներն անգամ, և մանաւանդ չըկայ այժմ, երբ կազմակերպւում են վիթխարի կայսրութիւններ, որոնց հետ համեմատելով այսպէս անւանւած Մեծ Հայաստանը, որպէս Մեծ Յունաստանը, ոչ այլ ինչ է, և թէ ոչ պիգմէջ:

Կորցրած անկախութիւնը վերականգնելու միտքը շեռ կարող է երերւել այն ազգութիւնների մէջ, որոնք այն նոր են կորցրել, բայց ոչ թէ հայերի մէջ, որոնք համարեա հազար սարուց առաջ են կորցրել իրենց քաղաքական կեանքը: Ասել թէ՛ սաք պիտի պարանի-երևակայողներին ոմանց մէջ յորա նման մի ֆանտիզի չի ծագում, — ի հարկէ, չի կարելի: Բայց ենթադրել, թէ մի այդպիսի ցնորք կարող է գրաւել լուրջ հայերին, որոնք որ և է կշիռ ունին իրենց ցեղակիցների մէջ, — այդ նշանակում է ամենևին ծանօթ չըլինել հայերի մեծամասնութեան տրամադրութեանը: Այդ պարզ ճշմարտութեան անտես առնելն է հէնց արեղծում հայտնեցութիւնը, որ հասցնում է մի քանիսներին, ինչպէս պ. Վելիչկոյին և նորա համախոհներին, կարարեալ խելագարութեան, իսկ ուրիշներին — թշնամական կասկածաբանութեան, որ վնասակար է թէ հայերին և թէ ուսաց կուրսուրացին Արևելքում:

Ահգի և կրօնի, այդ աւելի քան սասն և հինգ շարի սրբութեան պահպանումը, — ահա հայկական ազգային գաղափարի ալֆան և օմէգան: Եւ մինչև այդ բանը չըհասկանան մեր քաղաքագէտները և գործող մարդիկ, անխուսափելի կը լինին մեքենայաբար ուս-

ասցնելու շեղապոմսով արած խոշոր սխալները, որոնց հետևանքները, ծանր լինելով հայերի համար, վնասակար կերպով են արտացոլում նաև ուսաց շահերի վրայ Արևելքում:

Ժամանակ է վերջապես հասկանալ վերջին տարիների սխալը, որովհետև անցքերը այժմ բաւական արագ են ընթանում: Պրոֆէսոր Գէրիէնն Վուսաստանի կոչումը Արևելքում վերնագրով իւր մի յօդուածի մէջ (պ. Братская Помощь գրքի երկ. հրատարակութիւնը) ակնհիշ ցոյց տւեց, թէ ինչպէս լաւ է հասկացել պրուսացի Ռոսբախը այն օգուտը, որ Ռուսաստանը ստացաւ հայերից, որոնք Պերրոս Մեծի ժամանակից ընտելացել էին ուսաց կուլտուրան առաջ քանոյնների շերին Արևելքում, Պարսկաստանի և Միջին Ասիայի վրայ ներգործելու միջոցով: Միևնոյն գիպնական ճանապարհորդը ոչ պակաս պարզութեամբ հասկացաւ այն շերքը, որ վիճակւած է խաղալ հայերին Փոքր-Ասիայի առաջիկայ նւածման ժամանակ: Այդ հարցին նա նորերս մի առանձին յօդուած նւիրեց «Preussische Jahrbücher» յալտնի ամսագրի մայիսեան գրքի մէջ: Մարնացոյց անելով այն խոշոր անտեսական շահերի վրայ, որ գերմանական արդիւնաբերութիւնը և առեւտուրը շուտով պէտք է ձեռք բերեն Փոքր-Ասիայում, պ. Ռոսբախ աւերացնում է, որ գերմանացիների և տեղական թիւրք ազգաբնակչութեան մէջ բնական և անխուսափելի միջնորդները հայերն են լինելու: «Ինչ շար ջուր կ'անցնի Եփրատի միջով» — գրում է նա, — նախ քան թիւրքը վաճառական և արդիւնաբերող կը դառնայ. իսկ մինչև այդ ժամանակ, խելացի, փորձւած, կրթւած հայերը, գիտենալով գերմանական և ուրիշ լեզուներ, անխուսափելի կերպով պէտք է միջնորդներ դառնան Եւրոպայի և Փոքր-Ասիայի մէջ: Ի նկատի ունենալով այդ, պ. Ռոսբախը առաջարկում է Գերմանիային օգուտ քաղել թէ հայ որբերի համար հիմնւած ապաստարաններից և թէ ուրիշ հիմնարկութիւններից, որպէս զի հայերից պարրասպուն գերմանական կուլտուրայի անփոխադրելի տարածողները<sup>1</sup>: Sapienti sat...

<sup>1</sup> Յիշուած պ. Ռոսբախը նոյն անձն է, որի անունը այնքան լաճախ տրուում է Մուրճ'ում այժմ տպուղ «Գերմանական օգնութիւնը Տաճկան-հայերին» յօդուածում:

Աւելորդ չի լինիլ մեր կուրացած հայակերների համար, — եթէ ոչ արդարութեան զգացմունքից, գոնէ Ռուսաստանի շահերի տեսակետից — աւելի հանգիստ և խելացի կերպով քննութեան առնել հայերի դրութիւնը և դերը Կովկասում և Անդրկովկասում: Այդպէս մինչև անգամ զիւր անելու հարկ չըկայ: Այն բանի վրայ, ինչին նոր միայն ձգտում է Գերմանիան, վաղուց արդէն ընկել է Պետրոս Վեժի արձուագին հայեացքը, որը լաւ էր հասկացել, թէ անկարելի է իրագործել Ռուսաստանի համաշխարհային կուրորական միսսիան Արևելքում, նայելով իրերի վրայ «Պոսկովեան բացառիկութեան և անհամբերողութեան» նեղ ճեղքով: Մահմեդական աշխարհի դէմ կուելու համար նա, որպէս բնական դաշնակիցների, հրաւիրեց Արևելքի միակ քրիստոնեաներին — պարսկահայերին, որոնք առաջինն էին, որ առևտուր սկսեցին Կասպից մահմեդական ծովափի վրայ: Նոյն բանն արաւ և Կասպրինէ II-ը Սև ծովի մահմեդական ծովափի վերաբերմամբ, ուր հրաւիրեցին երկրագործներ և վաճառականներ թիւրքաց Հայաստանից: Մի խօսքով, թէ աւելի հեռաւոր, և թէ մերձաւոր պայմութիւնը ցոյց է տալիս, որ Ռուսաստանը ցանկացած ժամանակ կարողանում էր հայերից օգտակար և հաւատարիմ հարստակներ շինել և իւր ազդեցութեան պարածոյներ դարձնել Արևելքում: Եթէ նոքա միևնոյն ժամանակ պահպանեցին իրենց կրօնը և մասամբ լեզուն, դրա մէջ միայն չար և կուրացած միջացելային անհամբերողութիւնը կարող է ինչ-որ վնասակար և մինչև անգամ Ռուսաստանի համար վրանգաւոր մի բան տեսնել... Ինչ վերաբերում է ուսաց լեզուի նշանակութեանը, չխօսելով արդէն ունեւոր դասակարգերի մասին, որոնցով լցւած են բոլոր դպրոցները Կովկասի քաղաքներում, հայերի մինչև անգամ վերջին սերունդների սպորին դասակարգերը բոլորը մի կերպ խօսում են ուսերէն:

Փիւղերում, դպրոցների պահպանութեան պայմանով, ուսաց լեզուն աւելի քիչ է պարածւած, իսկ այժմ հայոց ծխական դպրոցների փակելուց յետոյ 1896 թւին, որպէս ընդհանուր առմամբ 20,000-ից աւելի երկու սեռից աշակերտներ հեռացւեցին, ուսաց լեզուի պարածումը, ի հարկէ, պէտք է ընկնողանայ, և ոչ թէ արագանայ յանկիշճ ցաւ հայերի: Կովկասը լաւ ձանաչոյններից մէկը հաւատացնում էր, որ

եթէ մինչև անգամ հայերին արգելէին ոռոսաց լեզուն ուսանել, նոքա գաղտնի կերպով կը սովորէին, այնքան զօրեղ է նոցա մէջ պետական լեզուն գիտնալու անհրաժեշտութեան և օգուտի համոզմունքը: Եւ ահա այդպիսի արթուն գործնական-հայերին կովկասի նորայայտ ճանաչողները համարում են ոռոսաց լեզուն սովորելուց խուսափողներ՝ միայն այն պարճառով, որ գիւղական աղգարնակութեան զանգաճը (ինչպէս յայտնի է, կովկասում հայոց աղգարնակութեան 80 տոկոսից աւելին գիւղացիներ են) չգիտէ ոռոսերէն, որովհետև ինչքան էլ նա ցանկանայ, տեղ չունի սովորելու, Դպրոցների բացակայութեան պարճառով:

Ժամանակ է, ժամանակ աղգարնակութեան համար պարզել վերջին ժամանակների թիւրիմացութիւնները, որոնց եթէ չեն արեղծել, զոնէ սաստկացրել են կարճատև ոռուրինէօր-պաշտօնեաները և պ. Վելիչիօի նման հայտարար հրատարակախօսները, որոնք քիչ փնաս և վիշտ չեն պարճառել հայերին... և ոչինչ օգուտ Ռուսաստանին: Այդ չարափնաս մտախտուղի ցրելը պահանջում են թէ արդարութիւնը և լի է Ռուսիայի օգուտը:

ԳՐ. Ա. ՄԻՐՈՎ

„С. Петербургскія Вѣдомости“.

1900, № 17.

## ԱՄԱԼՔԱԼԱԿԻ ԳԱՆՈՒԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ ԵՒ ՕԳՆՈՒ- ԹԻՒՆԸ ԱՐԿԱԾԵԱԼՆԵՐԻՆ

Ախալքալակի գաւառի զիւղերին շեկք. 19-ի մեծ երկրաշար-  
ժով հասցրած աղէքը աւելի էլ ծանրացաւ չաճախ կրկնուշ երկրա-  
շարժներով, որոնցից ամենազգալին եղան յունւարի 2-ին և ապա  
նաև յունւարի 22-ին, Յունւարի 12-ին 26 և 29-ին Քիֆլիսում,  
նահանգապետի նախագահութեամբ կազմուած զլիսուոր կոմիտէի մէջ  
կարգացուած զեկուցումներից չայսնուց հետևեալը.

Վնասուած զիւղերի թիւը . . . . . 21

որից 19-ը Ախալքալակի, 2-ը Գորւայ գա-  
ւառում:

Սպանւածների թիւը . . . . . 241

Վիրաւորների թիւը . . . . . 55

Հիւանդացածների թիւը . . . . . 195

Կորուսուած եղջիւրաւոր անասունների թիւը . . . . . 2.570

(որից խոշոր փաւար 921, այժ ու ոչխար 1.649)

Կործանուած զիւղերում ողջ մնացածների և կա-  
րօպետալների թիւն է շուրջ . . . . . 4.500

Գրամական նէրներ ց26 Յունւարի ժողով-  
ւած էր մօտ . . . . . 140.000 ո.

Այդ զումարից 5.000 ո. չարկացրած է վարձարութեան՝  
սպանւած անասունները փլափակներից հանելու և թաշելու—օշի  
վարակման ղէմն առնելու համար: Պարսպարւածներին փրուում է  
ամեն հոգուն 3 ուրբի ամսական: Վիրաւորեալներին և հիւանդ-  
ներին հասցնում է բժշկական օգնութիւն:

Վնասուած զիւղերից բոլորովին կործանուած են՝

Մերենիա (130 փուն), Մեծ Սամար (47 փ.), Փոքր-Սամար (50 փ.), Իլուրիլլա (70 փ.) և Բեթանո (122 փ.). Իսկ մնացեալներում Բաշինո, Կաջօ, Բուշաշէն, Օլովերփ, Մաջաշիս, Ալագովա, Ղալքիլիսա, Տըրկնա, Մոլիսփա և այլն, շատ փներ ճաքել և մասամբ միայն փլուկ են. այս վերջիններում մի քանի մարդկանց միայն զոհ է եղել, մի քանի փամնեակ էլ անասուն է կոտորուել:

Երկրաշարժի փեղերը կառավարութիւնը շրկեց երկրաբան Վէբէրին, փեղի երկրաբանական յարկութիւնները ուսումնասիրելու համար. այդ կապուած էր այն գործնական նպատակի հետ, թէ կարելի է արդեօք աշէփի փեղերում վերաբնակել, թէ անհրաժեշտ է արկածեալներին այլ փեղ բնակեցնել: Ձիւների պատմառով հետազօտութիւնը կարելի չէ եղել կատարել, նաև Տաբացիուր լճի շուրջը, բայց կարծիք է յայտնուել որ փների աւելի լաւ շինեաձքով վերաբնակութիւնը կարելի է. մանաւանդ կոտորների ձեւը, որով նոքա 1½ արշին հասարութիւն ունին, պէտք է փոխարինել թեթև կոտորներով:

Ախալքալակի դուռտի աշէփը ամբողջ Կովկասի բացառիկ ցաւակցութիւնը շարժեց և արթնացրեց ժողովրդի մէջ օգնութեան դալու զգացմունքը: Արկածեալները գրեթէ բացառապէս հայեր լինելով՝ նաև նւիրաբերութիւնների մէջ Կովկասի հայութիւնը մի առանձին զգայնութիւն ցոյց տուեց, ու ժողովրդի կողմից նւիրաբերութիւնները անհամեմատ մասով հայերի կողմից եղան: Նւէրների համար մասնակցութիւնը հայաբնակ փեղերում գրեթէ ընդհանուր էր. անհաստներ և փնփեսական մարմին կազմող կազմակերպութիւններ—իրար անցան օգնութեան ձեռք մեկնելու: Եւ, շնայած առ երևոյթ ամենուրեք ցոյց տուած զգայնութեան, եզրակացութիւնը բաւականին անմտիթարական է գոնէ հարուստ շասակարգի վերաբերմամբ: Արկածեալներին օգնելու համար, գլխաւոր կոմիտէի հաշուով՝ պահանջուում է 3—400.000 ռուբլի. մինչդեռ մինչև ներկայ չունւարի վերջը ժողովուած է ընդամէնը մօտ 140.000 ռուբլի, որի մէջ է Թագաւոր-Կայսեր 50 հազար ռուբլի նւէրը, այլ և Կայսերական Բարձրութիւնների 1.500, Կաթողիկոսի 1000 ու Կաթողիկոսի հրամանով տրուած մի քանի հազար ռուբլի եկեղեցական գումարները, որպէս և երկրիս Կառավարչապետի 3.000 նւէրները:

աջնպէս որ ժողովրդական նւէրները կազմում են ինչոր 75.000 ա. միայն, պահանջածի հազիւ  $\frac{1}{5}$ — $\frac{1}{4}$  մասը: Այս հաշւի մէջ չէ Բաքուցիները առանձին ժողովարարութիւնը, որի մասին ստույգ ոչ մի տեղեկութիւն չաչարարուած չէ. այնպէղի ժողովարարութեան նախաձեռնողները, ըստ երևութիւն, աւելի յաջող գործ կատարած կը լինէին, եթէ էն սկզբից կաշկանդած չըլինէին իրենց ձեռնարկութիւնը որքանոց հիմնելու կանխագաղափարով. և աւելի ևս յաջող ելք կ'ունենար գործը, եթէ ժողովարարութեան համար նախաձեռնողներ բնաւ չըլինէին և ամեն ոք հերկէր ընդհանուր հասանքին:

Գալ անգամ, երբ բոլոր ժողովարարութիւնները աւելի յաչարարուած կը լինեն նւիրարուների անուններով, մենք կը ներկայացնենք բոլոր կարևորագոյն նւէրների ցանկը:

Ա.

# Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

## Հ Ա Ր Ա Ն - Ա Փ Ր Ի Ն Կ Ա Յ Ո Ւ Մ

(Անցքերը նույնների սկզբներից մինչև շեկոծմբ. վերջը)

Անգլիան պաշարման շրջափուլին չափարարեց Կոլսբերգի, Սոլեյնսթերգի, Ալբերգի, Ալիուալ—Նորտի, Ուէյհաուզի, Գլենգրէյի, Նաև Քւինստունի, Կաթկարտի շրջաններում. նաև չափարարութիւն եղաւ, որպէս զի ոչ մի ուշադրութիւն չշարձնւի Օրանժեան հանրապետութեան չափարարութեան վրայ, որը Կապի մի քանի հողերը աչգ հանրապետութեան հետ միացրած է չափարարել:

Կոլսբերգ քաղաքը 1.500 բուրեր գրուեցին:

Լէյփմիթի մօտ երկարատև կուռ ելաւ, կորուստներով բուրերի կոշմից:

Օրանժեան բուրերը գրուեցին Բէրկլի, Վէստ-Գուգլաս և Գրիկլիփաուն և հաստատեցին աջտեղ իրենց վարչութիւնը:

6-ին նու. հեռագրական հաւորակցութիւնը Ջեմստունի հետ կորուց:

Նու. 9-ին բոլոր բրիտանական հպարակները, բացի մի քանի կանանցից, թողին Լէյփ-Գրէյ և մեծ մասամբ գնացին բազուրների երկիրը: Խանութները ու ազարակները (==Ֆերմաներ) Օրանժեան բուրերի ձեռքում են: Սպասում էին որ բուրերը պիտի գան Հերչէլ, ուստից պատգամաւորութիւն գնաց բուրերի պետ Օլիւիէի մօտ, որը պատասխանեց թէ մտաբեր չէ Հերչէլ մտնել, բայց մի ջոկատ կը շրկի Բարկլի-Խոտ՝ վարչութիւն հաստատելու համար:

Պաշարած Կիմբրլէյ քաղաքից նու. 4-ին անգլիական խուզարկու մի ջոկատ առաջին փորձն արաւ շուրս գալու, բայց բուրերի հարածներից ստիպւեց ետ դառնալու մի քանի մարդ կորցնելով. Կիմբրլէյում սկզբից մինչև աչգ որը կորցրել են ընդամենը 9 հոգի: Նու. 5-ին փորձը կրկնուեց, բայց անաջող. կապիտան Բոդլի վերջ ստացաւ:

Անգլիան նու. 11-ին հրաման արեց միլիցիայի 8 նոր վաշտ կազմակերպելու, որ 29-ին նու. պատրաստ լինեն ճամբալ ընկնելու:

Միլնէր իընչհ. նահանգապետը Կապի երկրի և Նարալի) 10 նու. տեղեկացրեց մինխորը Ջեմբերլէնին որ բուրերը աշխատում են բազուրների պետեր իրնտանին և Ջոէլին իրենց կողմը գրաւելու. յոցանից առա-

Ջրինք հաւար սրիւմ է մնում, իսկ երկրորդը չարձակում կարարեց Նրնորանի  
 եւրոր վրայ և նորա մօր 3 մարդ սպանեց: Օրանմեան հանրապետութիւնը  
 խոտրացիւ է Նրնորանին, որ բազումների երկիրը ընթացիւ իրենց կը պար-  
 կանի, եթէ նոքա ալմից միանան բուրբի նոյ. ալդ բանը չուզումը է  
 առաջացում տեղացիների մէջ, բայց սոքա իրենց բաւարար են պահում:  
 Բիւմնորի մօտ տեղի ունեցաւ կռիւ, ուր անգլիացիք բուրբիին բռն-  
 նած տեղից դուրս վանեցին:

Էտրքորտից անգլիական մի վաշտ փորձարաւ քաշաքից դուրս գալու:  
 Չախնր են պտտում թէ Արլեզէրը խաշաութիւն է առաջարկում:  
 որանսլաւեան ներկայացուցիչը Ներսպալում՝ Աէլթա՝ (որ նիւտ ունի  
 Հաագում) ներքում է ալդ, աւելացնելով որ կապըտաթ խաշալութեան  
 առաջարկով եկած Նրիգորովսկից, որ Տրանսվաալի նորագուն Դարաւորն է,  
 չի շրկած Արլեզէրից և գործում է իւր սեփական նախաձեռնութեամբ:

Անգ. գեներալ լորդ Մէտուէն՝ը նոյ. 11-ին չարձակում գործեց Բել-  
 մանորի մօտ ամուր Դիրք բռնուլ բուրբի վրայ, և ապա նեռագրեց պարե-  
 րազմ. մինխտրին թէ չալթութիւն փարաւ, գերի վերցնելով 40 բուր,  
 ձեռք գցելով շատ ձի և փաւար, և ոչնչացնելով պատերազմական շատ  
 մթերք: Անգլիացիների կորուստն էր՝ 3 սպալ և 55 զինուոր սպանւած,  
 21 սպալ և 128 զինուոր վիրաւորւած, 18-ր անպար կորած. վիրաւորւած-  
 ների մէջ էր բրիգադի զօրավարը, Բուրբր 3500 հոգի էին:

Կապի երկրի տեղական ցեղերի զխաւորները վճիռ կաւացրին, որով  
 առաջարկում են թշնամու Դէմ կուելով ապացուցանել իրենց նւիրւածու-  
 թիւնը թագուհուն, ոչ մի անկարգութիւն չԴրել և խոտրանում են շիրակ  
 մնալ:

Մէֆկինգում, թարմ Ջրի պակասութիւնից, տենդ է փարածոււմ:  
 Բուրբրը քանի գ. ում՝ այնքան աւելի են մօտեցնում քաշաքին իրենց  
 պատեհները. Մէֆկինգում զօրքը ստիպւած է գեորնալարկ տեղերում  
 մնալ, որ առողջութեան վրայ վատ է ազդում:

Մօօ գետի վրայ անգլ. գեն. Բարտոնը 2.000 հոգով կանգնած է մի  
 քանի թնդանօթներով: Բուրբրը, 1-ն նոյ. սկսեցին գրանափոխար արձակել  
 նոցա վրայ, բայց առանց վնաս փալու էտրքորտի մօտ ևս կանգնած է  
 գեն. Գիլդհարդը 2.000 հոգով, երկուսն էլ շրջապարւած բուրբից և  
 կորւած այն լեծակէտից, ուր գեներալ Ալէրի ժողովում է նոր եկած զօր-  
 քերը:

Անգլիալում նոյ. 12-ից ամեն պատրաստութիւններ փեսնւած էին  
 Հարաւ-Աֆրիկա 6-րդ զօրաբաժին (Դիւիզիա) շրկելու համար, Ալ-  
 Դերչոտում արէն հրաման էր ստացւած շարժի Դնել հեծելազօր բրիգադի  
 և արտիլերիալի մի զօրաբաժին:

Կեն. Տրէնչ Նաուպորտից խուզարկութիւն կարարեց Դէպի Կոլէս-  
 բէրգ, բայց եր նաճանջեց կորցնելով 3 մարդ:

«Թալմա» լրագրի թշխմանը Լորենցո-Մարքեզե քաշաքում (պորտուգալական նաւահանգիստ հարաւ արեւելեան Աֆրիկայում, ուստից երկաթուղի է գնում Պրետորիա) խօսակցութիւն ունեցաւ տրանսվալեան ծալրագուն Դարաւոր Գրիգորովսկու և Տրանսվալի ազգային խորհրդարանի անշամ Գեպերնիկի հետ. սոքա հրատարակութիւն չապրանքին որ ոչ մի պետութիւն օգնութեան չեկաւ բուրերին, խոստովանեցին որ վերջ ի վերջօ՛ւ անգլիացիների թւի շարութիւնը իւր ներգործութիւնը կունենայ, չոչս չապրանքին թէ բուրերի քաջութիւնը կը գնահատի, որպէս և աչն, որ բուրերը լաւ են վարում անգլիական գերիների հետ, ու վերջը համակիր եղան խաղաղութեան մասին բանակցելու համար:

Միլնէրը կապի երկրի բնակիչներին շիմեց չապարարութեամբ, թէ բուրերի կողմից արւած կոչումները նպատակ ունէին համոզում զոչացնելու, թէ բրիտանական կառավարութիւնը կամենում է հողանշարներին նեւել և որ սոքա պիտի զրկեն սահմանադրական իրաւունքներից: Այդ լուրերը սուր են: Բրիտ. կառավարութիւնը կամենում է որ հողանշարիք և անգլիացիք ամենաաւազն ազարութիւն և ինքնավարութիւն վազելն և առաջան պէս պահպանում է հաւասար ազարութիւն բոլոր հաւատարիմ հպարակ կոտնիստների համար:

Բուրերը գրաւած են Բէլմոնտ, կաֆիրստան և հարեան բլուրները: Ժուբէրը կորում է Էստրորթի անգլ. զօրքերին շէպի Պիտէրմարից, բուրք եր գնալու ճանապարհը և նոցա վանեց շէպի Տուպեյա զեղը:

Մեֆիկինգի մօտ նոյ. 10-ի մօտերքը կառաղի կուլու եղաւ, առանց հերեանքի:

Նոյ. 9-ին կապարտար են հասնում Անգլիայից շրկած 3,500 մարդ, բազմաթիւ մթերքներով և 3,000 ջորիներով:

Աֆրիկանդէրների պարագլուխ Լոֆմալէրի նախաձեռնութեամբ՝ կապի հասարակաց աշխատանքների միեխորք Զաուէր ուղեսուեց հիսիս, շրշելու որ իւր ընտրողները Նորտում իրենց չեզօք պահեն, և բանակցի պնդեղ գորնուղ Օրանժեան բուրերի պարագլուխ Լոֆմանի հետ ու քաջ անւի զինադադար առաջարկելու:

Լորդ Մէտուէնի զօրաբաժինը հասնում է Վիտրէպուտսա:

Նոյ. 11-ին լորդ Մէտուէնը Բելտոնտի մօտ պարտութիւն է կրում:

Նոյ. սկիզբները Տրանսվալեան մալրքաշաք Պրետորիալում հաշւում Էին 52 անգլիական սպա և 1400 սորտին զինուոր գերիներ:

1000 անգլիացի Ալքրէխտի հրամանատարութեամբ շուրս եկան Բուլուվալթի վրա՛ չարձակելու համար:

12 նոյ. կուլու Էստրորթի մօտ, Վիլլա-Գրէնջի ներքու, անգլիացիք (գեն. Գիլդեար) սորպուեցան նահանջել, կորցնելով 3 սպանւած, 44 վիրաւոր:

400 աֆրիկանդէրներ կապի գաղութում, նոցա մէջ և Բարկլի-Իսթրի քաղաքապետութիւնը միացան բուրերի հետ, որոնք գրաւեցին ալտ-քաղաքը:— (հեռագիր 13 նու.):

Լէշի-Նրէշ քաղաքը ընկաւ Օրանժեան բուրերի ձեռքը. բրիտանական հպարակները, բացի մի քանի կանանցից, հեռացան.

Կիմբերլէնց անգլիացիք անաջող փորձ են անում շուրս գալու (նու. 11 հեռ.):

Անգլիացում, պատ. մինիստրը հրաման է տալիս որ մինչև 29 նու. շարժի շուրս ևս 8 բաղալիս միլիցիայի:

Գեներալ ժուբէր (բուրերի) մի նամակում, որ տպւեց Deutsche Zeitung թերթում, հաշիւ է անում, որ անգլիացիք սորիպւած լինելով բազմաթիւ զօրք բանեցնել Նաթալում և կապում, էտապալին կէտերում, կարող են պատերազմական գործողութիւնների համար միայն 35.000 մարդ ունենալ, որ շատ քիչ է 700 կիլոմէտր ունեցող պատերազմական գծի համար, մինչդեռ բուրերի էտապալին կէտերը իրենց հայրենի հողի վրայ են և կը պահանջեն միայն 500 հոգի. բուրերի էտապալին կէտերի միջև լաւ ճանապարհներ կան. և բուրերը այժմ ունին 50.000 զօրք. Նիթէ բուրերին վիճակի պաշտպանողական շիրք ընդունել—ալտ աւելի ևս նպաստաւոր կը լինի բուրերի համար և նոքա կը վարեն մի ալնպիսի պարտիզանական կռիւ, որին անգլիացիք չեն կարող մի քանի ամսից աւելի շիմանալ:

Բուրերը մտքեցում են Սորոմբէրգին. (հեռ. 16 նու.):

Գեն. Բուլէր հասնում է Պիտերմարիցբուրգ 14 (26) նու. և վերահանգնում է հեռագրաթիւր Էստքորթի հետ:

Անգլիացիք շարժեցին Ղէպի Ֆրէր. երկաթուղային կամուրջները բուրերը քանդած էին:

Մեծ կռիւ Լենսինի մօտ (ալտպէս է պաշտօնապէս կոչում կռիւը Գրուսպաօի մօտ), ուր անգլիացիք կորցնում են 199 հոգի (ըստ հեռագրի 17 նու.):

Բուրերի զօրքերը կենտրոնացած են արևելեան շաշուում (գլխ. հրամանատարը գեն. ժուբէր), Լէշիսմիթի մօտ, Տուգէլա գետի վրայ և երկրորդը Պիտերմարիցբուրգ-Էստքորթի գծից արևելք, որպէս զի անգլիացոց ետ նահանջելու հնարաւորութիւնը կտրւի. արևմտեան շաշուում (գլխ. Կրոնիէ) նույն կերպ գործում է Կիմբերլէնցի մօտ, Մոդդէր գետի վրայ և լորդ Մէտուէնի ետից:

Անգլիացում մինիստր Բալֆուր ճառ է արտասանում (17 նու.) ուր բողոքում է եւրոպական մամուլի աչն հաջեացքի Ղէմ, թէ իբր Անգլիան պատերազմ է վարում Տրանսալալի ոսկու հանքերը ձեռք գցելու համար. նա ասաց որ անա հարիւր տարի է ինչ Անգլիան իւր գաղութներում հարկեր չունի մալր երկրի օգտին:

Կախ Մոզդէր-Ռիւէր գետի վրայ, ուր լորդ Մէտուէն Չախչախիչ պարտութիւն կրեց. 1800 հոգի սպանւած կամ վիրաւորւած, այսինքն 20% կուսի մէջ մասնակցող անգլիացիականները: Ծովային բրիգադի բոլոր օֆիցէրները սպանւած, բացի երկուսից. մի քանի գարդիական գնդեր կորցրին սպաների կէսից աւելին:

(Չէմբերլէն, Լէյստէրում. 19 նոյ. ճառ է արտասանում, ուր այս միտքն է չարնում թէ Գերմանիայի «Դաշնակցութիւնը» անգլո-սաքսոնական երկու մեծ ճիւղերի՝ Անգլիայի և Հիւս. Ամերիկայի Միաց. Նահանգների հետ, ամենից մեծ զբաղակաւները կարող են լինել համաշխարհային խաղաղութեան: Նա գործածեց «Դաշնակցութիւն» խօսքը, թէ և այդ կարող է լինել միայն քաղաքական անձերի մտքերի մէջ: Միաժամանակ չարձակողական էր ճառը Ֆրանսիայի նկատմամբ: Նաուր մեծ աշմուկ է գցում թէ Եւրոպա և թէ Ամերիկա, մեծ մասամբ չարձակողական գոնով Չէմբերլէնի շէմ. Ամերիկական շեսպանը Լոնդոնում ճառ խօսեց, ջերմագին ողջունելով Գերմանիայի, Անգլիայի և Ամերիկայի համերաշխ գործողութիւնը):

Անգլիայում չարժի է շնուում 2-րդ կորպուսի մի զօրաբաժինն ևս:

Կիմբերլէի հետ հաշորդակցութեան համար Մոդէր գետի մօտ սարքում է հեղիողրաֆ. (մօտ նոյմբ. 20):

Լէյֆսմիթի մօտ բուրբրի թիւը հաշուում էին 10.000 մարդ, Կոլլէնզօրի մօտ՝ 15.000, և ամուր շիրքերում 15 թնդանիթ:

Լէյֆսմիթի մօտ նոյեմբ. 18-ին բուրբրը ումբակոծեցին քաղաքը պաշարումից շէս ամենաառտրիկ կերպով. այդ շարունակեց նաև 19-ին, իսկ կանոնաւոր կերպով 20-ին. քաղաքի շուրջը բուրբրի դրած թնդանիթները հաշուում էին 32:

Անգլ. գեներալ Կլէրի գալիս է Ֆրէրի մօտ կանգնած բանակը և հրամանատարութիւնը իւր վրայ վերցնում:

Կիմբերլէի մօտ կռիւնոյեմբ., ուր անգլիացիք կորցրին 2 սպառ սպանւած և 4 վիրաւոր, սպորին ղինւորներ սպանւած 20, վիրաւոր 28:

Բուրբրը մտնում են Գորդրէխտ նոյեմբերի 20 (2 շէկտ.):

Բուրբրը չարթութիւններ փանելով հանդերձ՝ երբէք աչքաթող չեն անում նաև այն շէպքը, երբ անգլիացիք կ'սկսեն չարձակողականը և բուրբրը սրիպած կ'լինեն ևր շառնալ և իրենց հայրենիքի հողի վրայ կուսել. այդ մտքով նոքա միշտ զբաղւած են նաև Պրետորիան ամբացնելով և մեծաքանակ մթերքներ պատրաստելով:

Անգլ. գեներալ Հաթէկր իւր զօրքերը կենդրոնացնում է Մոլտնո:

Տրանսպալի կառավարութիւնը ինքն է այժմ բանեցնում ոսկի հանքերը Յոհաննէսբուրգում. նոյեմբերի 25-ի հեռագրով 12.000 ունցի էր սրացւած Ռոբինզօնի, Բունանցի, Ֆրէրիի հանքերում. դրամի պալատը ամսեկան այժմ կորում է 100.000 ֆունտ սրերլինդ:

Արադողում ամբողջականությունը երկու ընկերությունները վճարեցին, որ իրենք, իբրև անգլոսպարսկներ, չպիտի մասնակցեն պատերազմին, որին նորա չեն համակրում. երկու գեղեգատ շրկեցին բուրերի հրամանագրարին աչք մասին տեղեկացնելու:

Բուրերը հաւաքուում են Սպէտֆոնտէնի մօտ, բլուրների վրա և ամրանում:

Անգլիացում հրաման է արուում (25 նույ.) որ թագաւորական ձիաւոր արտիլերիալի երկու բաժանել անմիջապէս ուղևորեն Ասպ:

Արմբերլէյց անգլիացիք փորձում են չարձակել բուրերի վրա (16 նույնմբեր) արևմտեան կողմից, բայց անաջող. կորցնում են՝ Սկոտ-Տուրնէր հրամանագրարին և 24 մարդ սպանւած, 26 վիրաւոր:

Լորդ Մէտուէն, որ վիրաւորւած էր, 23 նույնմբեր նորից իւր վրա է առնում հրամանագրարութիւնը և գիշերները Արմբերլէյի հետ հաշտութեամբ է հետևողաբար միջոցով իսկ Լէյլամիթի հետ անգլիացիք հաշտութեամբ են ելէքորական լուսի միջոցով:

Բուրերը միացնում են Տրանսպալի հետ Գրեկուաբանը՝ Գրեկուալանդ երկրում. հողանոցացիք, որոնք մինչ աչք ապստամբել էին անգլիացիք շէմ, ջերմութեամբ ընդունում են բուրերին:

Գեներալ Բուլլէր 23-ին նույնմբեր իւր շտաբով գնում է Ֆուէր:

Դորդրէխտը միացում է Օրանթեան հանրապետութեան հետ:

Տուգելա գետի վրա կամուրջը բուրերը բոլորովին կործանում են նույնմբերի 25-ին:

Նադալից 3000 բուրեր նույնմբ. 25 եկան գեն. Արոնիէի օգնութեան:

Գրաստուոնի մօտ բուրերը խորտակում են բոլոր երկաթուղային շրջութիւնները և կորում հեռագրաթիւր (նույ. 27):

Լէյլամիթում նույ. 19-ից մինչև 27-ը սպանւած են 5 սպայ, և 26 զինւոր, վիրաւոր՝ 15 սպայ և 130 զինւոր:

Կապի հողանոցացիք ապստամբութիւնը աճում է և չեզոքացնում գեն. Ֆրէնչի և Հադէկրի զորաբաժինները:

Գեն. Հատէկր 4.000 (ըստ այլ աղբիւրի 2.700) մարդով, երկու բաժնուարէլով գնաց Սորմբերգի վրա, ուր բուրերը բռնած էին չափ ամուր Դիրք. բուրերը սկսեցին կրակը աչք բողբոջել, երբ անգլիացիք կանգնած էին Դիրքի ստորոտը. կռիւր տեղեց 3 ժամ. անգլիացիք մեծ պարտութիւն կրեցին: Աչք մասին Հադէկր հեռագրեց պատերազմ. մինիստրին. «Ցաւում եմ, որ պիտի լաչոնեմ ձեզ, որ այս առաւօտ կադարած չարձակումը Սրտրոմբէրգի վրա մեծ կորուստներով ետ մղեց: Թշնամու Դիրքի մասին մենք սխալեցանք առաջնորդներին. բացի աչք՝ տեղը անպէտք Դուրս եկաւ»: (28 նույ. = 10 գեկտ.) Հադէկրը կորցրել էր 8 սպայ վիրաւոր, 9-ը կորած, 2 սպանւած. սորերին զինւորներ՝ 17 վիրաւոր, 672-ը գերի ընկան:

Ամենից շատ փնասեցան իրլանդեան գունդը և նորորհումբէրլանդեան հրացանաձիգները:

Անգլիացոց այս պարտութիւնը ամենաաղետալիներիցն էր պատերազմի սկզբից ի վեր:

Սորոմբէրգից շէպ հիւսիս ամբողջ երկիրը պատամբում է. աչդ փեշի և բազուրոսների երկրի բնիկները կորցնում են հաւատը յէպի անգլիացիք:

(Ամերիկայում, 30 նու. սենտորը Մէտոն սենտում երկար ճառ է արտասանում համակրալից բուրբրի համար):

Գեկտեմբերի 11-ին Լեդիսթից գեներալ Ուալտը շրկեց Մետկէլիէր'ին 1.500 հոգով, որ գրաւի Սիւրպրիզոլ բլուրը և ոչնչացնի ալնտեշ Դրած գաութիցները. վերադարձին բուրբը ճամբան կորել էին և անգլիացիք պիտի սւիններով անցնէին, կորցնելով սպանւած 1 սպայ, 10 զինւոր, վիրաւոր՝ 3 սպայ և 40 զինւոր. բուրբրի կորուստը իր թէ աւելի մեծ է եղած:

Անգլ. գեներալ Բերտոնի բրիգադը շիրք է բռնում Կոլէնզոի մօտ 3 մլոն հեռու:

Նուեմբերի 30-ին կռիւ Մոդդեր գետի վրայ, որ փնեց մինչև երեկու. ժամ 9<sup>1</sup>/<sub>2</sub>. շէկո. 1-ին կռիւը նորոգւեց. Անգլիացիք (գեներալ Մէտուէն) մեծ պարտութիւն կրեցին. կորուստը մեծ էր՝ սպանւած, վիրաւոր և կորած 817 հոգի. սպանւածների մէջ էր մաջօր մարքիղ Վինչէստր:

Բուրբրի կորուստը անգլիացիք հաշուում են առնւազն 800 հոգի:

Լորդ Մէտուէնի աչդ մեծ պարտութիւնը Դրդում է անգլ. մինիստրին շարժի շինել 7-րդ զօրաբաժինը, ունենալով պահեստի մէջ 8-րդը: (Լորդ Արաս, Անգլիա, ճառ. իստեց, թէ, չնաւած Դժբախտ շէպքերին, անգլիական ազատութեան գործը պիտի չաշխանակի: Պատերազմից վտոջ երբէք Տրանսլաալին չպիտի թող տրւի սպառնալ Անգլիալին, ինչպէս նա արել է անցեալում):

Գլխաւոր հրամանապար Բուլլէրի մեծ պարտութիւնը: Հազիւ լորդ Մէտուէնի պարտութեան լուրն էր վրդովեցնում Անգլիային, լուր հասաւ ինքը Բուլլէրի պարտութեան մասին, որ եղաւ Տուզելա գետի մօտ, ուր Բուլլէրը կորցրեց 1.097 մարդ, Դոցա մէջ 66 սպայ. սպանւած են 82, Դոցա մէջ 6 սպայ. վիրաւոր 667, որոնց մէջ 42 սպայ, անչաչոր կորած (գերի) 248, (ծ-ը սպայ). գերիների մէջ 15 սպայ:

Աչդ լուրերի վրայ անգլ. կառավարութիւնը, չաչրնելով թէ հանդամանքները ալնպէս են, որ պահանջուում է Բուլլէրի ներկայութիւնը և ամբողջ ուշադրութիւնը, վճռեց գլխաւոր հրամանատար Հարաւ-Աֆրիկայում նշա-

Նակել Ֆէլդմարշալ Ռոզէրտսին և իբր շտաբի պետ՝ լորդ Կիչնէր'ին (նա որ նորերս Սուդանը վերստին նւաճեց):

Գեն. Հատէկր Պուրէրսկրաալ'ից իւր բանակը փոխադրում է Ստէրկորոմ, գեն. Ֆրէնչը՝ Արուսդէլ:

Անգլիայից շրկուում է 7-րդ զօրաբաժինը և արտիլլէրիան ուժեղացնելու համար գառութիցի մի բաժարէլ, և անուժ են նաև ալ կարգադրութիւններ:

(Չէմբէրլէնը, այս պատերազմի գլխաւոր հելինակը, Դեկտ. 6-ին (18) Գուրլին հրաւիրւած լինելով՝ համալսարանից ստանում է իրաւագիրութեան Դոքտորի պատուաւոր կոչումը և ուսանողների գոչումներին պատասխանում է, թէ Ղրիմի և Հնդկաստանի ապստամբութեան ժամանակ Անգլիան աւելի մեծ չարիքներ տեսաւ, և համոզւած է որ ալժմ էլ ազգը, որպէս այն ժամանակ, որի կը կանգնի):

Աւստրալիան վճռում է Դեկտ. 29-ին նորից 1500 հեծեալներ զրկել Աֆրիկա, Անգլիայի օգնութեան:

Կիչնէր, Դեկտ. 7-ին Դուրս է ելնում Օմդուրրանից՝ Կալիրէ և ապա Հարաւ- Աֆրիկա ուղևորելու համար:

Պ. Կորիստից լուր հաղորդեց Դեկտ. 6 (18)-ին թէ բուրբին միացան 900 կապլանդացիք Բարկոլի'ում, 2000 Բարկոլի-Խոթ'ում և 1.500—Բուրգերտօրպ'ում:

Մինչև Դեկտ. 6 (18) անգլիացոց կորուստը անգլիական լրագիրները հաշուում էին 7.630 մարդ՝ սպայ, հնթ-սպայ, սորտին զինւորների թէ վիրաւորւած, թէ գերի ընկած և թէ սպանւած:

(Մինիստր Գոչնը 6 Դեկտ. ներկաչ եղաւ կամաւորներին պրեմիաներ բաժանելու և լալտնեց, որ ցանկութիւններ են լալտնուում որ ծովային զինւորները մասնակցեն Հար. Աֆրիկային պատերազմին. բալց, ասաց նա, մեր աչքերը պիտի ուշլւած լինեն նաև ամբողջ աշխարհային Դրութեան ու մեզ շրջապատող ամեն կարելիութիւնների վրալ. առանց աշմուկ բարձրացնելու ցանկութիւնն ունենալու եւ ալնու ամենաչնիւ վճռում եմ պնդել որ մենք պէտք է ինչ էլ որ լինի մեծամեծ զոհաբերութիւններ անենք որպէս զի մեր ամեն մի նաւին վերա պահենք նորա մարտիկը լիակատարութեամբ):

(Հնդկաստանի գլխաւոր հրամանատար Լոկկարթը պատերազմակ. մինիստրի հարցին պատասխանեց թէ չորս գունդ և մի արտիլլէրիական բրիգադ պատրաստ են Հար. Աֆրիկա մեկնելու համար: Հնդկաստանում անգլ. զօրքը բաշկացած է 65-66.000 մարդուց և 20—30.000 կամաւորներից):

(Կլմպրէլ-Բաններման'ը, լիբերալների պարագլուխը համալնքների ժողովի մէջ, էրերդինում խօսած ճառի մէջ լալտնեց որ Դրութիւնը լուրջ

է, յայց կասկած չկալ որ լաջողութիւնը ապահոված է. նա պախարակեց գեներալներին վրայ կատարած քննադատական շարձակումները, նոքա արիարար կուտում են թշնամու ղէմ, և սասց որ պատերազմը պիտի արիարար և հուարով շարունակել):

Անգլիացում, Լոնդոնի հարուստ Սիտի քաղաքամասի կորպորացիան ժողով է ունենում ղեկոյ. 9 (21)-ին, Լոնդոնի լորդ-մէրի նախագահութեամբ. ժողովում հաշորդուում է թէ Սիտի'ն (Լոնդոնի հարուստ մասը) կազմակերպում է 1.000 կամաւորների գունդ. Հարաւ-Աֆրիկա շրկելու և հանդանակութեամբ շորա համար հաւաքած է 25.000 Փունդ (250 հազար ռուբլի) և որ Ռոթշիլդը ստորագրեց 5 հազար Փունդ: Լորդ գեներալ-Ֆէլքմարշալ Ուոլտէլը ընդունեց կորպորացիայի այդ առաջարկը. շուրջ Մալթոն, պարլամէնտի անդամներ լորդ Վալիստի, սըր Էլեոտ Լիւ և վիպասան Կոնան Գոլլ կամաւոր զինուոր գրեցին. Հարաւ Աֆր. գնալու համար:

Կաշմիրի, Կիսորի և Իոջպուրի կառավարիչները առաջարկեցին անգլ. կառավարութեան ձիեր և զօրք. կառավարութիւնը վճռեց ամեն առաջարկուից ընդունել որոշ թւով ձիեր Հարաւ. Աֆրիկա շրկելու համար:

Գերմանական «Բունդեսռայթ» նաւը արեւելեան Աֆրիկայում բռնեց անգլիացիներին՝ խուզարկելու համար: Գէպքը, որ առաջին անգամը չէր պատահում, առիթ ուեց բանակցութիւնների Գերմանիայի և Անգլիայի միջև, և ապա գերմ. մինիստր Բիւլովին՝ Անգլիայի ղէմ ուղղած ճառը արտասանելու ռալիստագում՝ ծովային իրաւունքի անորոշութեան և այդ իրաւունքը աւելի որոշ կացուցանելու անհրաժեշտութեան մասին:

(Սխալ լուրեր են սրացում, թէ իբր գեն. Յրենչ, չաղթութիւն դանելով, գրաւում է Կոլէսքէրգ քաղաքը):

(Հնդկաստանի ըստը տեղացի կառավարիչները առաջարկում են Անգլիային ձիեր՝ Հարաւ. Աֆրիկա շրկելու: Մալթասի մահարաջան պատերազմական հիւանալի ձի ընծայեց լորդ Ռոբերտսին):

Գնդապետ Պէտրէր Բեյմոնտի մօտ, Լոնդոնի կշտին փոքրիկ կուլմէջ 40 հոգի գերի է վերցնում բուրերից. ապա գրաւեց 'Կուզաս'ը առանց ընդգրկումութիւն գործելու:

Անգլ. կառավարութիւնը վճռեց (21 ղեկոյ.— 3 լուսն.) թագաւորութեան սահմաններից շուրս 12 բաղալիտն միլիցիա կազմել կամաւորներից, որից 7-ը Հարաւ. Աֆրիկա շրկելու համար:

Կոլէսքէրգ քաղաքը բուրերի ձեռքումն է. մօտակալ բլուրներ վրայ շարունակ կռիւներ են տեղի ունենում:

(Թագուհու հրամանով շարժի է ղեւում 16 բաղալիտն միլիցիա, ղեկոյ. վերջերքը):

Գնդապետ Պիլէէրը, չկարողանալով ամրանալ Կուզասում— Անգլիա-

լին հաւարարիմ մնացած բնակիչների հետ հեռանում է, շեկոյ. վերջերքը: Դեկտ. 23-ին Մեֆկիւնգից Դուրս գալու անաջող փորձ արին անգլլիացիք, կորցնելով 21 սպանւած և 23 վիրաւոր:

25 շեկոյ. գնն. Ալէրի'ի զօրաբաժինը առանց հեղեանքի չարձակումն արաւ բուրերի ձեռքում գործուղ Աուլէնգօի վրայ:

Աուլէնգօյում շեկոյ. վերջը, Ժուբէրի ներկայութեամբ եղաւ բուրերի պատերազմական խորհուրդ՝ ապագայի գործողութիւնների ծրագիրը որոշելու համար:

(Մանչէստրում, մինիստր Բալֆուր շեկոյ. 27-ին ճառ խօսեց. ասաց որ, Նալաձ Տրանսվաալի հետ ունեցած շեւարութիւններին, ոչ ոք, (?) և ի հարկէ նաև կառավարութիւնը, պատերազմը չէր համարում անխուսափելի և ոչ նոյն իսկ շար հաւանական կառավարութիւնը չէր բոլորքում Տրանսվաալի զինատուճների շէմ, որովհետև Ձեմտոնի խուժելը Տրանսվաալ (1895-ին) կառավարութեան բերանը փակեց. Տրանսվաալը միշտ կարող էր պատասխանել թէ զինատուճում է ոչ Անգլլիայի, այլ աւաղակների շէմ. Անգլլիան, ալշպիտով, պատերազմը սկսեց առանց պատրաստւած լինելու: Բալֆուրը խոստովանում է որ բուրերի պատերազմ. ընդունակութիւնները բաւականաչափ գնահատւած չէին, այլ և լէգիսմիթի կիրճերը ամենեկին հաշի չէին առնւած. բայց, ասաց նա, բուրերի խուժումը անգլլիական հողի վրայ աչնպէս չէ, որ վախեցնի նոյն իսկ ամենավախկոտներին. Բալֆուրը ասաց, որ, ընդհանուր առմամբ, զենեքալներին որւած է գործելու ազատութիւն. ճառախօսը ծաղիկից արտասահմանեան դուշակութիւնները թէ իբր սկսւած է Բրիտանական կայսրութեան անկումը):

### Տեղեկութիւններ Հարաւ-Աֆրիկայի ցեղերի մասին:

Տեղացիներից գլխաւոր ցեղերն են՝ Բուլմէնները, Հոփփենդոփները և Կաֆրները:

Բուլմէնները ստորին ցեղի են. նոցա բոլն է  $1\frac{1}{2}$  արշին, կանաչք  $1\frac{1}{2}$  արշին: Բնակուում էին Օրանժ և Վաալ գետերի ափերին, բայց հոլանդացիք (բուրեր) նոցա ետ են սղել շար շէպի հիւսիս: Առանդուն են և շեմոկրատ, և չեն ընդունում սպիրտակների (եւրոպացիների) հասարակութեան մէջ: Իբրև ստորին ցեղ՝ նոքա նւազել են և երևի ջնջւելու են, Համարել գիտեն միաչն մի քանի միււրորներ:

Հատենատոները, տեղական անունով հօլ-հօլ, աւելի կարիւր են. բուլները միջին եւրոպացու չափի է—2 արշին 8 վերջով \*) ջրուր են և տոկուն. խաչնարածներ են, գիտեն և շարքնութիւն. թունաւոր ծաղրուչներ են, բայց և քնքալ ամուսիններ. գիտեն հաշել փասնակները. քաջ են, կրօնը անորոշ է, և չունին փաճարներ և հոգևորականութիւն. մի քանի սնապաչ-

\*)  $1\frac{1}{2}$  արշինը=1 մէտր. արշինը ունի 16 վերջով:

տութեան ձէսեր ունին որ կտրարում են գերդաստանների աւագները։  
 Կոֆրները սեւերի մէջ ամենից մեծ ցեղն են հարաւ-Աֆրիկայում և  
 ամենից քաջն են. հպարակում են եւրոպացիներին. քրիստոնէութիւնը,  
 մանաւանդ բողոքական եկեղեցին, նոցա մէջ լաջողութիւն է գորել. մի ժա-  
 մանակ նոցա մի մասը մահմեդական էր։ Այդ նոցա մի ցեղն էր՝ զու-  
 լուաներ՝ որ սպանեցին պրինց Նապոլէօնին։ Ժամանակով ահալի էին պոր-  
 տուգալցիներին, այլ նաև անգլիացիք սորիւած են զզուշութեամբ վարել  
 հեղները։ Բուրերին, որոնք նոցանից շատ հողեր են խլել, չեն սիրում։  
 Կաֆրները, ազգազրական տեսակէտով, բաժանում են բնուում, բազուտոս  
 և մտաբելի ցեղերի։

Սպիտակ ցեղը Հարաւային Աֆրիկայում։ Սպիտակ ցեղը աւտոել եկած  
 է Եւրոպայից—հոլլանդացիք, Անգլիացիք, Գերմանացիք, որոնք ծնւած են  
 հարաւ-Աֆրիկայում, իսկ մասամբ միաջն ծնունդով եւրոպացիք են։ Աֆ-  
 րիկա ծնւածները կազմում են Աֆրիկանդէր'ներ. զուտ անգլիական տարրը  
 կազմում են ուիլքինդներ, հոլլանդական ծագում ունեցողները՝ Բուրեր  
 (Բուր, կամ Բոէր=boer=գիւղացիք)։ Բուրերը միաջն 1800 թւականնե-  
 րին Կապից (Աֆրիկայի հարաւային ծայրը) անգլիացիներից քշեցին աւե-  
 լի Դէպի հիւսիս, ուր նոքա կազմեցին Տրանսվալի և Օրանժեան հանրա-  
 պետութիւնները, որոնց անգլիացիք թողին կտրարեալ ինքնավարութիւն,  
 բայց ոչ միջազգային դաշինքներ կապելու իրաւունք։ Բուրերի երկիր-  
 ները անգլիական դարձնելու համար անգլիական մեծ զործիչ Աէսիլ Ռոդս  
 անգլիական տարրը՝ ուիլքինդներին ներս քշեց բուրերի մէջ։ Բուրերը,  
 անկախ լինելու համար, ձգտում էին Դէպի ովկիանոսը. բայց Անգլիան  
 նոցա երկիրները ովկիանոսից հեռու պահելու համար՝ ստեղծեց Նատալ  
 կալւածքը՝ Գուրբան, Պիտերմարիցբուրգ, Լէշիսմիտ քաղաքներով։ Ընդ-  
 հանրապէս կարելի է ասել որ աֆրիկանդէրները իրենց համակրութիւն-  
 ներով բուրերի կողմն են։

Մարդահամար. Կապի երկրում 1891-ի մարդահամարով կալ 1.527.224  
 հոգի, որի մէջ սպիտակ ցեղի՝ 376.987 հոգի, (որոնցից 27.667-ը բուն  
 Անգլիացից, 6.646-ը Շոտլանդիացից, 4.184-ը Իրլանդիացից, 6.540-ը գեր-  
 մանացի. իսկ մնացած ամենամեծ մասը—աֆրիկանդէրներ, աւսիւնքն նախ-  
 կին եւրոպացիների սերունդներ, որոնց մէջ հոլլանդական տարրը գերիշխող  
 է)։—Նատալում եւրոպական ցեղից կան 47.000 հոգի, կաֆրեր 456.000,  
 հնդկացիք 42.000. վերջիններս եկած են Հնդկաստանից, զխաւորապէս  
 իբր առևտրականներ։

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆԻԷՐՆԵՐ ՄՈՒՐՃԻ ՊԱՐՏՔԵՐԸ ՀԱՆԳՑՆԵԼՈՒ համար՝ Ստացանք Բաքւից Կրկին Ս. Ա.-ից (պրն. Յակոբ Տէր-Գէորգեանի ձեռքով) 15 ուռլի: Այդ նպատակով ցարդ ստացած գումարը կազմում է 1.743 ո. 50 կ.: ՊՐՆ. Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԷՅՕԶԵԱՆԻ «Գերմանական օգնութիւնը Տաճկա-Հայերին» լօղածի սկիզբը, որ տպւեց անցեալ տարւոյ վերջին Ռե-ում, արտադրութեամբ չրկւում է Մուրճի այս տարւոյ նոր բաժանորդ-ներին:

ՄՈՒՐՃԻՅ ԱՐՏԱՏՊԱՄ հրատարակութիւնների թիւը, ինչպէս ընթերցողը կ'տեսնի չափարարութիւնների մէջ տպած ցուցակից, անցնում է արդէն 50-ը և կազմում 51 զիրք: Այդքան զիրք արտադրւած է Մուրճից 11 տարւոյ. տարւոյ վրայ, ուրեմն, ընկնում է 4<sup>1</sup>/<sub>2</sub>-ից անլիւ Այդ 51 գրքերի գները կազմում են 21 ո. 31 կոպ.: Ընդհա-նուր թւից 35-ը՝ գեղեցիկ զրականութիւնից են, 16-ը զրականու-թեան ալ ճիւղերից (բնագիտական, ճամբորդական, կենսաբանական և այլն): Բոլոր 51 գրքերի օրինակների թիւը կազմում է 33.100:— 51 գրքերից Մուրճից արտադրւած են խմբագրութեան հաշուով 47-ը (որոնց գների գումարն է 19 ո. 20 կ.), հեղինակների հաշուով 4-ը (որոնց գների գումարն 2 ո. 10 կոպէկ):

Այդ 51 գրքերի տպագրութիւնը, մօտաւորական հաշուով, նստել է 7.000 ուռլի, որից 6.000 ուռլի Մուրճի խմբագրութեան հաշիւ: ՇՈՐՈՎ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ԱԽԱԼՔԱԼԱԿԻ արկածեալներին: Անցեալ անգամ ծանուցինք որ Մուրճի խմբագրատունը ընդունած չորեղէններից 5 հակ (246 կոտր) շրկեց Ախալքալակի քաղաքագլխին Դեկտ. 27-ին: Ունէինք մօտեմբս ևս 213 կոտր և յրամով 51 ո.: Այդ իրեղէնները և յրամները ստացած էինք 43 անձից, Գորանից 7էս ստացել ենք՝ Թէոփորոս Սարգսեան Հախնազարեանից 5 ո., 45-րդ՝ Նիշան Թա-թիկեանից 1 ո., 46-րդ՝ Տիկ. Շահմուրադեանից 17 կոտր չորեղէն, 47-րդ՝ Տիկ. Հոսիսիսիէ Մնայականեանից 53 կոտր չորեղէն: Ըն-դամենը ստացած ենք 529 կոտր չոր և 57 ո.: Մեզ մօտ գործւածներից շրկեցինք ևս 6 հակ (213 կոտր) Ախալքալակի քաղաքագլխին, Արր.

Բորակչեանի գրասենեակի միջոցով (ըստ հաշւի 10-ից չունարի 1900 թ. № 9):

#### ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

—Երկրագ. և պետ. հողերի մինիստրի օգնական նշանակւած է Ա. Խ. Սփէւէն, որը Նորին Մեծութեան կարինէտի հողալին-գործարանու-կան բաժանմունքի կառավարիչն էր: Նա չալտնի գործիչ է եղած Սիմֆերոպոլի նահանգի և գաւառի զեմստուծներում:

—Պետական կոնորոլետոր Տ. Ի. Փիլիպպովի մահուան հետևանքով պետ. կոնորոլետոր նշանակւած է պետ. խորհրդի անդամ Պաւէլ Լեո-վիչ Լոբկո: Վերջինս սորացել է զինւորական կրթութիւն, երկար տարիներ եղած է պրոֆէսոր զինւորական վարչութեան գիտութիւն-ների. ի միջի ալոց նա զինւորական վարչութեան Դաստիարակ է եղել Թագաւոր-կալստի Նիկոլայ II-ին՝ Թագաժառանգ եղած ժամանակ:

**ՀԱՅՈՑ ԳՊՐՈՑՆԵՐ.** Թիֆլիսի Յովնանեան-Մարիամեան օրիորդաց Դըպ-րոցը, որ հաւասար միւս ծխական Դպրոցների փակեց 1896 թւին, վերաբացելու է նորերս հաստատուած առանձին կանոնադրութեամբ: Մանրամասնութիւնները Դեռ չալտնի չեն, բայց միայն այսքանն չալտնի է մեզ, որ Դպրոցի տեսչի պաշտօնի համար հոգաբարձու-թիւնը Դեռ անցեալ աշնան հրաւիրել էր Գէորգեան ձեմարանի ուսուցիչներից պ. Յովհաննէս Յովհաննիսեանին, որ և ընդունել էր առաջարկը:

**ՆՈՐ-ԲԱՅԱՋԷՒԻ ԳԱԻԱՌՈՒ.** 20 զիւղերին, որոնք վաղ հունձ էին ունեցած, երկրիս բարձր կառավարութիւնը վճռել է որպէս աչք զիւղերի շրե-մարանական դումարները 4.393 ու. 70 կ. և խնդրած է ներքին գործ. մինիստրութիւնից նոցա որպէս պետական փոխաբու-թիւն 60. 518 ու. 80 կ.:

**ՌՈՒՍԱՅ ԳԱՎԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ.** Մալրաքաշաքի թերթերը հաշորդում են որ ներկայ 1900 թ. Հրտ. կովկասում և Անդրկովկասում գործելու են պաշտօնեաների խմբեր ուսու դաշթական զիւղեր կազմելու հա-մար Պաշտօնեաների մէջ լինելու են հո. աշափներ և ամբողջ գործին շեկավարող անձեր: Խմբերի համար վարձատրութիւն 1900 թ. հա-մար նշանակւած է 50 հազար ուրբլի, 1901-ին դումարը աւելի է լինելու. Գաշթականները ստանալու են հողաբաժիններ:

Վորոնէժի նահանգից 15 ընդամնիք նորերս անցան Վլադի-կաւկազով մեր երկրում հաստատուելու համար. մեզ Դեռ ևս չալտնի չէ թէ ուր պիտի հաստատուին:

**ԳՐԱՄԱԿԱՆ ԿՐԻՋԻՍԸ.** Բարձրագոյն համաձայնութեամբ ֆինանսական մի-նիստրը սեփական բանկի կանոնադրութիւնից շեղւելով թուլարեց

(19 նոյ. 1899) որ պիտո. բանկը փոխադրուած լին տալ և վարկ բաց անի բոլորովին հաստատ բաց ոչ երաշխաւորած ցողոտարեր ի՛րը- թերի յիմաց, բաց միայն աքցիաների արժեքի 60% և օբլիգացիա- ների 75%:

**ՓԱՆՏԱԽՏԱՍՏՐԱԽԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ:** Հակաժանտախոյի չանձնատու- շուլը, նոյ. 2-ին 1899 իւր անդամների մեծամասնութեամբ եկաւ աչն եզրակացութեան, թէ Աստրախ. Նախնդի Կոլորովկա զիւրում եղած սուր-վարակիչ հիւանդութիւնը անկասկած ժանտախոյ էր, իսկ փոք- րամասնութիւնը աչն կարծիքն էր չալորնել թէ աչն հիւանդութիւնը շատ նման է ժանտախոյին պնեւմոնիական ձեւով:

**ՆԻԷՐՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ:**

Ազրի Ժողեֆինա Լալայեան (չուսոր Արեւմանոս Նաղարեանցի) նւիրեց 4000 ոսբլի, որպէս զի գումարը վարկալին հաստատութիւն- ներից մինում շահացնելով՝ կազմի հարկաւոր գումարը, որի տոկո- սիքով իւր հանգուցեալ ամուսին Յակոբի անւան մի մահձակալ աւել- ցըրի Թիֆլիսի Միրալէկեան հիւանդանոցի խելագարների բաժան- մունքի մէջ:

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:**

Իսնձակ, Շուշի և Նուխի քաղաքներում, ուր այդ քաղաքների օգտին նոցա հրապարակներում կանդնուլ սալերի, արբաների, անա- սունների բռններից տուրք էր վերցում, երկրիս բարձր իշխանու- թեան հրահանգի համաձայն՝ այդ տուրքը ալ ևս ժողովելու չէ:

Նուշըր տուրքը նաև ալ քաղաքներում (նաև Թիֆլիսում) վե- րացում է:

**ԻԻՐԻՅ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒ** հալոց գրականութեանը նւիրած 10-ամեալ բեւոյճ- նաւոր գործունէութեան առթիւ Մոսկւայի մի խումբ հալեր նորա պատրին ներկալ Յունւարի 22-ին մի հաճատ հանդէս կադարեցին: Կարգադիր չանձնատոլովի անդամներից պ. Ալ. Մարնուրեանին մինք շրկեցինք հերեհալ չնորհաւորական հեռագիրը:

«Տօտախմբուլ իւրից վեսելովսկուն ջերմաղին մալթում ենք եր- կար տարիներ գործունէութիւն՝ հաւատար անցեալ տանամեակին: Յանձին նորա ուսուց գրագէտը շառնում է հարազատ հալին, որը կարող է պարծնեալ այդպիսի բարեխիղճ և տաշանդաւոր ներկալա- ցուցչով: Պատրաստ ենք մեր ամսագրի էջերը ծառակցնելու ստո- րագրութեան՝ չարգելի ու հարազատ վեսելովսկու գրածները հալոց գրականութեան վերաբերեալ ամրոյջալան հարորներով հրադարա- կելու համար»:

Իւրի: Վեսելովսկի մի բացուիկ եցելութ է ուսուց գրականու- թեան մէջ հալոց գրականութեան վերաբերմամբ: Այդ նոնս դերը

Գերմանացոց համար կատարում է Արթուր Լալսո գերմանացին, ֆրանսիացոց համար՝ Մինաս Չերազ և այժմ մանաւանդ Արշակ Չօպանեան: Ռուսիայում թերեւ կարելի չի՛նք լինել նաև Կիեւի համարսարանի պրիւոր-շոցէնտ Գրէնը, որը իւր ԱՅԻԱ խերթի մէջ նաև հաւոց նոր գրականութիւնը իւր ծրագրի մէջ ունի. բայց Անսկոլովսկու գործերը ընդիր են, բուն գրագէտի վաստակներ են:

Իւրիջ Անսկոլովսկու այդ ասպարէզի վրայ գործունէութիւնը լրջօրէն սկսում է 1892 թւականից («Արդիսգո») այժմ դադարած ամսաթերթի մէջ իւր հրատարակած ուսումնասիրութիւնով «Հաւոց բնի պարմութիւնից. Քիֆլիսի թատրոնը և վարքագրական կոմեդիան»: Աւելի լայրուն է նորա Մ. Բերբերեանի հետ միասին հրատարակած «Հաւոց բնլեորիտոներ» ժողովածուն, ուր մեր մի շարք լաւագոն նոր հեղինակներից (Արովեան, Պարկանեան, Պաօշեան, Բաֆֆի, Աղաեան, Շահազիզ) թարգմանւած են կարևոր կտորներ՝ հեղինակների կենսագրական տեղեկութիւններով և նոցա երկերի քննադատական գնահատումով: Ապա նա տեւել է մի շարք թարգմանութիւններ գլխաւորապէս Պարկանեանի, Շահազիզի, Մարտրեանի սրանաւորներից, մանր ուսումնասիրութիւններ Ադամեանի, Փեչիքթաչեանի, հաւոց գրականութեան, թատրոնի, հալ կնոջ վերաբերեալ և այլն. կենսագրական շօշափոխներ Սրիմեանի, Մխիթար արբալի, Պարսեանի, Պարկանեանի, Նալբանդեանի, Նազարեանի, Պաօշեանի և Բաֆֆու մասին: Բացի «Հալ բնլեորիտոներ» և Սոսնդուկեանցի «Պեպո»ի թարգմանութիւնը, որը (վերջինս) հրատարակել է նա Ալ. Մարտրեանի աշխատակցութեամբ, բոլոր մնացածները լոյս են տեսել ուսուց օրաթերթերում, ամսապարտներում, «Երջարական օրնութիւն» ժողովածուի և Բրոքհաուզի «Հանրագիտարան»ի ուսերէն հրատարակութեան մէջ:

ԲՐԻՒԼԼՈՎԻ 100 ԱՄՆԱԿԸ: Անցեալ գեկտ. 12-ին լրացաւ 100-ամեակը Կարլ Պաւլովիչ Բրիւլլովի ծննդեան: Բրիւլլովը, վախճանւած 1852-ին, ուսուց զեղարեստագէտների մէջ մեծերից մէկն է: Բրիւլլովի նախահայրերը ֆրանսիացի էին, որոնք բոլորքականութեան համար լալածեցան և Գերմանիա գաղթեցին. աչքերից 1773-ին քանդակագործ Գեորգ Բրիւլլովը, երկու որդիերանցով գաղթեց Ռուսիա. նորա որդին Պաւել Նոյնպէս քանդակագործ էր և ուսուցչապետ. Պաւլովի որդին Կարլը դառաւ արդէն հռչակաւոր: Ռուսիայում զեղարեստից ճեմարանը աւարտելուց լեռոջ նա պնաց Հոսով, ուր դասը դարի կեցաւ, և մի քանի հիւնալի նկարներ տեսց. 1832-ին նա նկարեց իւր նշանաւորագոն գործը՝ «Պոմպիլի վերջին օրը»: Ռուսիա վերադառնալով նա նշանակեց պատմական նկարչութեան պրոֆեսոր զեղարեստից ճեմարանում: Նա թալեց Հոսովում:

ՎՐԱՅ ԹԱՏՐՈՆԻ 50-ԱՄԵԱԿ: Յունւարի 2-ին Ազնւականաց թարրոնի սրահներում հանդիսաւոր կերպով կապացաւ վրաց թարրոնի 50-ամեակի առիթով վրաց Դրամարկական ընկերութեան ընդհ. ժողովը, նախագահութեամբ իշխանուհի Ի. Վ. Չելոկաւելի: Կարդացեց զեկուցումը ընկերութեան գործունէութեան մասին 1882 թւից (հիմնադրութեան տարւանից) սկսած և կարդացեց մի պատմական տեւեկատուութիւն վրաց թարրոնի 50-ամեալ գոյութեան մասին: Այգառչոյններ արրասանեցին ներկայացուցիչները Թիֆլիսի արքունական թարրոնի կողմից, Թիֆլիսի արտիստիկ ընկերութեան, Կալսերական երաժշտ. ընկերութեան Թիֆլիսի ճիւղի կողմից, վրաց զրագիրութիւն տարածող ընկերութեան, Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան կողմից և ժողովրդական ընթերցումների վրաց բաժանմունքի կողմից: Վերջը ժողովը ընտրեց ընկերութեան պատուաւոր անդամներ՝ Գաբր. Ն. Սունդուկեանցին և Ա. Յագարեւիին:

Լ. ՎԵԼԻՉԿՕՒՆ «Ալակազ» լրագրի խմբագրութիւնից հեռացնելը Աովկասի Կառավարչապետի հրամանով տեղիք է տւել մալրաքաղաքային թերթերին գնահատութիւն անել «Ալակազ»-ի նախկին խմբագրիկատարած շերին: Ինքը պ. Վելիչկո՛ն «Նոյոն Արեմիա» լրագրի մէջ տպագրեց իւր հեռացելու մասին, իտարանալով մալրաքաղաքում շարունակել աչն, ինչ անում էր «Ալակազ» խմբագիր եղած ժամանակ: Նոյոն Արեմիա, Մոսկովսկիցա Վէրոմոստի և Գրաժանին թերթերը իրենց պաշտպանութեան ներքոյ են աւել պ. Վելիչկո՛ն, մինչդեռ այլ մեծ թերթերը, և շոցա մէջ մանաւանդ Ս. Պետրբուրգսկիցա Վէրոմոստի՛ն տալիս են պ. Վելիչկո՛ն աչն, ինչին նա իրօք արժանի է: Այդ վերջին թերթի մէջ լուս տեսածների մէջ մանաւանդ ուշք է գրաւում Կր. Միրով սորագրութեամբ յօդածը, որ մենք աչք թերթից թարգմանելով առաջ ենք բերում Մուրճի ներկալ ՆՅ-ում: Չենք կարող ասել թէ աչք յօդածով պատասխան տրւած լինի աչն ամենին, ինչ պ. Վելիչկո՛ն լարուցել է աչս վերջին երեք տարիներում Աովկասեան ինդիւսերի մասին, և չենք էլ կարող կատարելապէս համաձայն լինել որ հաշերը միմիաչն և եթ նրանով պիտի գնահատելի լինեն, ինչպէս աչք ցոյց է տրւած պ. Միրովի յօդածի մէջ,—բայց որ պ. Վելիչկո՛ն միասակար ուղղութիւնը ընդհանուր առմամբ լաւ գծւած է,—աչք անուրանալի է:

ՄԻ ՀԱՅԵԱՅՔ «ՆՈՐ-ԴԱՐ» ԼՐԱԳՐՈՒՄ: Յիշեալ թերթի № 17-ում կարդում ենք աչս տողերը:

«Կօթի գիւղից մի նամակ կարդացի «Պետրոսեան» սորրապրութեամբ, ուր նկարագրւած էին Կօթի գիւղի վաշխառուներն աչնպէս, ինչպէս կան. և պ. խմբագրի կարծիքով, աչք Պետրոսեանի նման ոչ ոք չի գրել զիւլական կեանքից:

«Այեր կոշմից աչք տեսակ լօղւածներին անչ ժամանակ նշանակութիւն կը տանք, երբ նամակագիրը մատնացոյց արած կը լինի ճշտութեամբ անչ միջոցները, որոնցով կարելի էր վերացնել գիւղերի վաչխառութիւնը. մինչդեռ նամակագիրն աչք-պիտի բան չի արել, և շրջիտենք ինչի մէջ է աչք տեսակ նկարադրութեան նշանակութիւնը»:

Սրբ աչք տուրը գրու պ. Ագապեանք «Բեր կոշմից» աչք տեսակ» լօղւածներին նշանակութիւն չի տալիս,— գոցէ աչք հանգամանքը կարեորութիւն ներկայացնում է Նոր-Վար՛ի համար, բայց կարող ենք «Աեր կոշմից» ասել պ. Ագապեանին, որ իւր աչք վերարերմունքը շէպի Մուրճի հրատարակած ուսումնասիրութիւնը կարեկցութեան պէս մի զգացմունք է արթնեցնում շէպի աչքպիտի լաւտարարութիւն անուրը—Աթի գիւղը ուսումնասիրւած էր Մուրճի մէջ ոչ աչք գիւղի կարեորութեան պարծառով, այլ որովհետեւ մեր ցանկացած ձեռով գիւղական հանգամանքներ լանձն առնող մի հասկացող երիտասարդ ելաւ, որը ինքը կոթեցի էր. և մենք նոյն աչք ծրագրով գիւղական ցաւեր ուսումնասիրելը կառաջարկէինք ուրիշներին ևս. ու սիրով կը տեսնէինք աչք ձև ուսումնասիրութիւններ այլ հրատարակութիւնների մէջ. ապացոյց,—մենք նոյն իսկ արտապայինք Մուրճուս, երբ Մշակի՛ մէջ մէկը մեր լանձնարարած մեթոդով մի փոքրիկ ուսումնասիրութիւն հրատարակեց Ախալքալակի գաւառի վաչխառութեան մասին, թէ և մեթոդը աչքտեղ, Մշակուս, խտորէն չէր պահպանւած.—Եւ միայն վաչխառութիւնը չէր ուսումնասիրւած Աթի գիւղի նկարմամբ, այլ և տէրունական տուրքն ու հասարակական ծախքերը, յուրս բերելու համար թէ մեր գիւղը ինչ և որքան հասարակական ծախքեր ունի, նաև տէրունական հարկից յուրս. մի այլ անգամ առաջ էին բերւած վաչխառութեան մասին ֆաքտեր, մի երրորդ անգամ՝ անչափահասների ամուսնութեան շէպերը և ֆաքտեր ամուսնական կեանքից, այլ և ֆաքտեր գոլութիւնների մասին: Աչք ամենի մէջ նորութիւնը, մեր գրականութեան մէջ չեղածը աչք էր, որ յօշափւած խնդիրները ուսումնասիրւած են աչքտեղ ֆաքտորէն, շէպերը առաջ են բերւած լոխ և լակած է լանւանէ, խոս տալով րնգհանուր ֆրագներից: Ենք պնդում ենք որ աչք ուսումնասիրութիւնը թոյնում է ընթերցողի վրալ մի տպաւորութիւն, որի ստերի հետ անգամ չեն կարող համեմատել ընդհանուր ֆրագներով գիւղի մասին մեր թերթերի մէջ լոս տեսած գրւածքները և սոցա թ.ում նաև պ. Ագապեանինը, որինակ Նոր-Վար՛ի հէնց այս տարւալ լուսարի Ճ-ներում, թէ և պարտաւոր եւք զգում իսկութիւնը խտորովանել, որ պ. Ագապեանի աչք մասին ներկայումս տպաւոր լօղւածներին մենք աչքում ամենաչնիւ հետեւում ենք լարգանս:

քով և հետաքրքրութեամբ: Բայց ամօթ չէ, որ ալսքան փարի գիւղական կեանքը վէպով ու լօղածնեղով պարկերացնելուց չետոյ ալսօր պ. Պետրոսեանի կադարած եզակի ուսումնասիրութեան շինմաց պ. Ազապեանը կանդնում ու լայրարարում է թէ «չգիրքինք ինչի մէջ է ալք փնտակ նկարագրութեան նշանակութիւնը»...

ՄՇԵԿ՝ը ԵՒ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԺՈՒԹՔԸ: Իւր ընդարձակ լօղած, զրպարտութիւնների շինմաց, որոնցով ալսքան փարիներ կերակրել է Մշակ՝ը Մուրճի հաշուով, նա երբ Մուրճ՝ում մի էջ նկատողութիւն է գրում իւր նկատմամբ ալքնա ուղում է հրապարակի վրայ ծախել իբր «անունդ» Մուրճ՝ին: Եւ ինչքան էլ լաւ լիշում է, որ եղաւ մի ամիս, երբ մենք Մշակ՝ով «չընտեցինք»: Նա ուրախ էր յորանից, և ալք պարծառով նա իրեն արդէն ազատ էր համարում գաղտագոլի ինտիմուացիաներով պարսպել: Սակայն իսկութիւնը սա է, որ մենք միայն շառն պարտուարութիւններ ենք կատարել Մշակ՝ի նկատմամբ. մենք չենք կարող վնասակար բաները առանց ուշադրութեան թողնել:

Մեր անցեալ ամուսն կրկու էջ նկատողութիւնները Մշակ՝ի մասին ալք թեթեւ վերցրել ու համեմատել և Ախալքալակի ալքի մասին մեր գրածի քանակութեան հետ՝ տեսէք, ալքի մասին երկու էջ, Մշակ՝ի մասին՝ «որքան կամենաք», որ ասել է թէ շարձեալ երկու էջ: Անշուշտ Մշակ՝ը, Ախալքալակի անունը լիշելով, կամեցել է ընթերցողների աչքի առաջը շնել Մշակ՝ում դաւաճ նւիրադուրթիւնների երկար ցանկը: Բայց նւէրներ «ընդունել» ալ բան է, և ալ բան՝ հրապարակախօսութիւն անել ու գրական լաւ գործ կատարել: Ամենավնասակար թերթը նոյն իսկ կարող է նւէրներ ընդունելու ընդունակութիւններ ունենալ: Եւ երբ պ. Ալեքիզիօ՛ն լոկ իւր սեփական հեղինակութեամբ կարողացաւ 14-15 հազար ուրբլի ոչ միայն «ընդունել» ալ և հաւաքել Ռուսաստանի մտկեալների օգտին, ալք բնաւ չեկաւ որքան և իցէ բարձրացնելու իրեն ու իւր խմբագրած թերթի անունը. նա մնաց նոյն վնասակարը իւր հրապարակախօսական դերով, ինչ որ էր մինչև ալք նւէրներ հաւաքելը. և նոյն Ալեքիզիօ՛ն նոյն իսկ Ախալքալակի համար 2000 ուրբլուց աւելի էր հաւաքել մինչև «Ասակազ» թերթից հեռացելու օրը, երբ Մշակը շեռ ևս միայն իւր հարկերներին էր խօսում...

Գալ ուրեմն ու ժողովրդական ալքիտների անուններն էլ մէջ տել գցել զուր հրապարակախօսական վիճարանութիւնների ժամանակ, — ալք միայն տոր վարմունք է, և չենք կարծում թէ Մշակ՝ի ալք վիճարանական էթիկան իրեն աւելի օգտակար լինի, քան ինչ օգուտ րւեց պ. Ալեքիզիօ՛ն հրապարակախօսական համբաւին սարաշարունակական քիւրքիս անելը հալերի վրայ...

Սե ինչի էր հարկաւոր Մշակի՞ն աչդ մանեովը? Իբր թէ աս պարասխանն էր մեր աչն մերկացումին, որ կարարեցինք՝ իրար հանդէպ շնելով Մշակի՛ն երէկայ խողացած դերը Գուլամիրեանցին արատուորելու համար և նո՛ն Մշակի՛ն այսօրայ կոկորդիլոսեան արցունքները նո՛ն Գուլամիրեանցի մահւան առիթով:

Մշակ՛ը մեզ պարասխանում է թէ իւր երէկայ գրածի ու այսօրայ գրածի մէջ հակասութիւն չըկայ:

Ինչպէս թէ հակասութիւն չըկայ, քանի որ Դուք երէկ չաչտարարում էիք Արարս հանդէսը իբր — «մեռած արտադրութիւն» իսկ Գուլամիրեանցին իրեն, իբր մէկը, որը հրատարակում էր Արաքս՛ը—(չաւ կարդացէք!)

«կոյր փառասիրութեան, խմբագրի, հրատարակչի անւան տակ ծարպիկ կերպով ճրիակերութիւն, մուրացկանութիւն անելու համար» (տես Մշակ, 1896 № 221 և Դորանից քաւածք Մուրճ 1899 թ. № 11-12, էջ 1500-1501):

Մինչդեռ այժմ, Գուլամիրեանցի մահը Դուք ուրում էք, չաչտարարելով աչդ մահը իբր — Բողոք հասարակութեան անտարբերութեան դէմ: (տես Մշակ 1899 № 221):

Եւ Դորանից աւելի հակասական ինչ կարող է լինել աշխարհքիս երեսին: Բայց ո՛ւմն էք ասում. մի թերթի, որը նո՛ն իսկ Ախալքալակի ժողովրդական աշէրից աչօր մի ուկլամ է շինում...:

Բաւական չէ աչդ. Աչօր աչդ նո՛ն թերթը (№ 12), մեզ պարասխանելով և մի կերպ ուզելով գլուխը ծածկել, պնդում է թէ իւր երեք տարի առաջ սպասածի մէջ (որ սակաչն Գուլամիրեանցին էր վերաբերում) Մշակը իբր թէ միաչն պարճակեղ էր մեծապարիւ մուրացկանների վրայ:»

Սե Դուքս է գալիս, որ նա, ում մահը, Մշակի այժմեան կարծիքով—

«Բողոք է հասարակութեան անտարբերութեան դէմ» աչդ անձը եղել է ուրեմն ոչ այլ ինչ, բայց եթէ մի մեծապարիւ մուրացկան»:

Բաւական չէր, ուրեմն, մի հակասութիւն. Մշակ՛ը աչօր, իրեն մեր մտրակից ազատելու համար, ընկնում է մի երկրորդ շփոխալին հակասութեան մէջ, Դարձեալ մի նոր արագ կայցնելով իւր իսկ աղբացեալին... Իբր թէ Գուլամիրեանցը, Արաքս՛ի հրատարակչը մեծապարիւ մուրացկանի տիպար եղած լինէր...:

Սե ինչ կը կարծէր տաւանդաւոր երգիւարան Պարոնեանը, որ իւր «մեծապարիւ մուրացկան» խօսքը պիտի անպիտանների բերանով շարուէր աչնպիսի աշխարաւոր անձերի վրայ, որոնց բոլոր

թշուառութիւնը կապացած է եղել Մշակի՛ր պաշտած մամոնան մոռացած լինելու և անշահ գործին նւիրւած լինելու մէջ, ինչպիսի մի օրինակ էլ Գուլամիրւանցն է ներկայացրել իւր Արաքս՝ ուլ:

Նեմեզիդա՛ն թէև ամեն օր գալիս է պարծելու ձեզ, բայց այդ պարծի սոսկումը շուք կը զգաք աչ՛: ժամանակ, երբ շատ ուշ կը լինի... նո՛ւն իսկ զլջալը...:

**ՏԳԵՂ, ԳՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹ:** Ընթերցողները, ներկայ համարի «Նոր ստացւած գրքեր»-ի շարքում կը կարդան նաև «Մ. Շովրեան.—Հալերը մարդաբանական և աշխարհագրական տեսակէտից: Արտատպած Արաքսի ամսագրից: Վաշարչագատ, տպ. Մ. Աթ. Ս. Էջմիածնի, 1899»: Այս պիտի նշանակէր թէ Մ. Շովրեան գրել է մի աշխատութիւն լիջեալ խորագրով. աչնպէս չէ. Եւ սակայն, Մ. Շովրեանին սեփականը միմիայն գրքի գրքովի էրկու էջ նկատութիւնն է, որի մէջ նա չափոնում է թէ աչ աշխատութիւնը թարգմանութիւն է «Ս. Պետրոսըզի գիտութեանց ձեմարանի պրոֆ. Գ. Ն. Անուշինի» մի ջօղածի, որ տպւած է Գր. Ջանչեանի հրատարակած ուսանելն «Աշխարհական օգնութիւն Տաճկահայերին» չափնի ժողովածուի մէջ: Գրական էթիկայի զգացմունքից կտարեւապէս զուրկ պիտի լինի մէկը, որը մի բան թարգմանելով՝ իւր անունը դնում է հեղինակի անւան տել: Կէս դար գրական կեանք ունենալուց չետոյ պէտք էր կարծել որ այդպիսի երեւոյթների տգեղութիւնը ամենքին պիտի հատկանալի դառնար լինէր: Եւ դեռ «Շովրեան»ը մի փոքր ծանօթ անուններից է մեր մամուլի մէջ: Չըլինի թէ մեւքը Էջմիածնի տպարանինն է:

**Ֆէթվաճեթնի ՊԱՏԿԵՐԱԶԱՆԻԷՍԸ:** Թլֆլիսի զինուորական-պատմական թանգարանի սրահներից մէկում պ. Ֆէթվաճեթանը ի ցոյց էր դրել իւր իւշաներկ և ջրաներկ (աքւարէլ) նկարները: Պատկերաճանդէսը, որ պարունակում է մինչև չիսուն նկար, ընդհանրապէս շատ նպաստաւոր տպաւորութիւն է անում: Նկարչի տաշանդը կալանում է մանաւանդ իրերի դեկորացիական մասին, օրինակ զգեստներին, բնական գոյներ տալու մէջ: Նկարների մէջ առանձնապէս աչքի են ընկնում նոքա, որոնք ներկայացնում են Սուլթան Մանուէլի դամբարանը, թրքուհին մզկիթը մոնելիս, Ախալցխայի կիւնը, թրքաց պոսոր Փոքր-Ասիայում, մերկ մուրացկան ծերունին, գիւղական հալքահան Ս. Գիրքը կարդալիս: Կալ նկարների մէջ նաև մի Ֆրէսկո: Պր. Ֆէթվաճեթանը տրապիզոնցի է, ուսած Կ. Պոլսի կայերական գեղարեստից դպրոցում և ապա Հոտում ու Վիեննայում: Վերջին տարիները նա գործում է գլխաւորապէս Ս. Պետրոսըզի ի ցոյց դրած նկարները վերջին տասնեակ տարիներից են և ներկայացնում

են արդիւնքը այն ժամերի, որ նա կարողացել է տնտեսել պարտէրներով բռնւած զբաղմունքների միջոցին:

ՀՆԳԿԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎՂԸ. Ներկայ տարւոյ լուծարից սկսել է սովը Հրեղ-կաստանում, որի նմանը եղաւ 1897-ի սկզբներում: Անբերբութիւնը լառաջացել է 1899-ի աշունքուայ սովորական անձրևների բացա-կալութիւնից, իսկ ձմեռուայ անձրևները լուծարի կէսին նշան, երբ արդէն ուշ էր Բոմբէյի, Ռաջպուտանի և կենտրոնական նահանգների համար: Հնդկական կառավարութիւնը հաշուել է որ սովից տառապոլ երկրի տարածութիւնն է 150 հազար անգլ. քառակուսի մղոն անգլ-լիական նահանգներում, և 400 հազար քառ. մղոն բնիկների պետու-թիւններում: Վնասուած ժողովուրդը այդ տեղերում 49 միլլիոն հոգի է, որից 22 միլլիոնը անգլիական հողերում, 2<sup>7</sup> միլլիոնը բնիկների պետութիւններում: Անգլիական կառավարութիւնը սովադանջներին օգնում է միմիայն վարձատրող աշխատութիւն գալով. ներկայ լուծ-արին այդ աշխատողների թիւը հասաւ 3.563.000-ի (1897-ին նոյն ժամանակ 7-ոցա թիւն էր 2.026.000): Բացի այդ, Հնդկաստանի գանձարանը Կրամական փոխարութիւն է առում բնիկների պետու-թիւններին, որոնք չեն կարող Դրամ ճարել: Կարօրների թիւը աճե-լու է մինչև լուծիսը: Հնդկաստանի գանձարանին, որպէս ենթա-Դրում է կառավարութիւնը, մինչև 1 ապրիլ (նոր դոմար) սովեալ-ներին օգնելը նստելու է 30—40 միլլիոն ռուբլի (=2—2<sup>1</sup>/<sub>6</sub> միլլիոն ֆունտ սփերլինգ=20—26 միլլիոն ռուբլի: Բանող և կաթնատու անասունը, որպէս նախատեսուում է, աւելի է կորսուելու քան առաջները նման Դէպքերում, անպէս որ մասնաւոր ստորագրու-թեամբ հաւաքող զումարները գլխատրապէս պիտի դնան զիւշա-ցիների օգնութեան՝ տաւար գնելու: Լոնդոնի լորդ-մէրը (քաղաքա-զուլս) ստորագրութիւն է բացարեւ սովեալների օգտին:

### ՖԻՆԱՆՏԻԱ.

Դեկտ. 6-ին Հելսինգֆորսում, զլխաւոր շտաբի գնդապետ Ջելկ, զօրաց զլխաւոր հրամանատարի և ամբողջ տեղական զարնիզոնի առջև հաշտրտութիւն արաւ Ֆինլանդիայում կատարած զինւորական ռեֆորմի մասին: Նա պարզեց Բարձրագոյն առաջարկների մէջ սկզ-մից արած պահանջները և սենատի և զեմստուպին պաշտօնեաների եզրակացութիւնները, առանց չօչափելու խնդրի քաղաքական կողմը:

—Նրկրի բնդհանուր-նահանգապետ գեն. Բորրիկով Կրասնոս-Աե-լօլում նորան ուղղունող ֆինլանդացիներին ասաց՝ Յիշեցէք, որ Ֆին-լանդիան մասն է մեծ մալր-Ռուսիաւի, նորա հեռ լաւիտեան կապ-ւած: Խիստ կատարելով տեղական օրէնքները և կարգերը, ոչ ոք չի խանգարում միաժամ լինել սրբով ռուս:

—Նոր տարանից Հելսինգֆորում սկսեց հրատարակել կառավարչական թերթ ուստերէն լեզուով:

—Հելսինգֆորսի հիւրանոցների տէրերն մերժել են ընակարան և սնունդ տալ իրենց մօտ իջևանել ցանկացողներից ոմանց, որի պատճառով ընդհանուր-Նահանգապետ զհն. Բորրիկով առաջարկել է Հելսինգֆորսի Նահանգապետին վերաքննել ոստիկանական կանոնները և սոցյա համաձայնեցնել ներկալիս պահանջների հետ:

**ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՍԻԱ:** Պարսից կառավարութիւնը 22<sup>1</sup>/<sub>2</sub> միլիոն ուսուրու փոխառութիւն է արել Թեհրանի Ռուսական փոխադու բանկայից աջ պալմանով որ նթէ պարսից կառավարութիւնը կարողանալու չլինի փոխառութեան գումարի տարեկան տոկոսները և շիջուցման մասը վճարել՝ ապա պարսկական մաքսատների վրալ պիտի կատարել նոկողութիւն Ռուսիայի կողմից և այդ մաքսատների եկամուտներով ապահովել պարսքի կանոնաւոր վճարումը: Փոխառութիւնը կնքած է 40 տարով: Կարծուած է որ Բենդեր-Արասի մաքսատունը չի մրնում հաշւի մէջ: Փոխառութիւնը, իւր ունենալիք քալաքական հետեանքների համար, նկատուած է որպէս քալաքական խոշոր արքր և ուստաց Դիւանագիրութեան չաջողութիւն, նամանաւանդ, որ պալմանների մէջ կալ և ալս, որ մինչև պարսքը վճարել պարսից կառավարութիւնը իրաւունք չունի որ և է ալ պետութիւնից փոխառութիւն անել:

**ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ:** Նոյ. 24-ին Փրանսիական զրահակիր («Կոսմա») ծովագետ Ֆուրնիէի հետ՝ 25-ին հասաւ Սեաստոպոլ: Ֆուրնիէին ներկայացան նախ ուստաց շտաբի պետ ծովագետ Կուզմիչ և ալ իշխանաւոր անձեր, ապա Ֆուրնիէն ափ իջաւ և այցելութիւն արաւ զլիւսաւոր կոմանդիրին՝ Տըրքովին:

**ՖՐԱՆՍԻԱ:**

—Ֆրանսիական մինիստրական խորհուրդը Դեկտ. 17 (29)-ին որոշեց երկրի և զաղտիթների պաշտպանութեան համար ծախսել 120 միլիոն ֆրանկ, 2<sup>1</sup>/<sub>2</sub> տարում աւարտելով գործը, ծախսը ծածկելով սովորական բիւջէից:

Արտաքին ստուտոր 1899 թւին, մաքսային վարչութեան պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, եղած է հետեւեալը. ներմուծում՝ 4.217.150.000 ֆրանկի, արտածութիւն՝ 3.899.142.000 ֆրանկի. միասին՝ 8 միլիարդ 116 միլիոն ֆր.: Համեմատութեամբ 1898 թւականի հետ, ներմուծումը 1899-ին 255 միլիոն ֆրանկ պակաս է եղած, արտածութիւնը՝ 389 միլիոն ֆրանկ աւելի:

Ուրեմն 1899 թւին ներմուծում և արտածութիւն միասին կազմում են 8 միլիարդ 116 միլիոն 292 հազար ֆրանկ: Դեռ ևս 25

տարի առաջ 1876-ին Ֆրանսիայի արտաքին առուստուրը կազմում էր 9 միլլիարդ 456 միլլիոն ֆրանկ, իսկ սպէցիալ առուստուրը 7 միլլիարդ 564 միլլիոն ֆրանկ: Չգիտենք թէ 1899-ի համար հեռագրի հաշորդածը ընդհանուր թէ սպէցիալ առուստուրին է վերաբերում, եթէ ընդհանուրն է՝ ապա Ֆրանսիան այս քառորդ դարում 9.456 միլլիոնից իջել է 8.116 միլլիոնի, իսկ եթէ սպէցիալ առուստուրին է վերաբերում՝ այս քառորդ դարում 7.564 միլլիոնից բարձրացել է 9.456 միլլիոնի, այսինքն մօտ 2 միլլիարդ ֆրանկի աւելացել է նորա արտաքին առուստուրը:

—Դեհանելը նոր տարեշրջանի համար նորից ընտրուց նախագահ պապգամատորների ժողովի 308 ձայնով ընդդէմ Բրիտանիին տրուած 221 ձայնի:

—Յունարին կատարուցին սենատի անդամների մի երրորդ թւի ընտրութիւնը: Հանրապետականները գրեթէ միակ լաջողութիւն ունեցան, բայց ընտրուց նաև գեներալ Մերսիէ՝, որը աչնքան փխուր շեր կատարեց Գրէգֆուսի գործի մէջ:

—Կառավարութիւնը դատի կանչեց «Աստմպսիոն» կրօնական ընկերութիւնը, որը, աշքափների միաբանութեան շիմակով շիգել է անբաւ հարստութիւն, հրատարակում է թերթեր (որոնց մէջ գլխաւորը La Croix) և ամեն կերպ հարտահարում է միամիտների բարեպաշտութիւնը: Ընկերութիւնը ճանաչուց մեւաւոր և դատապարտուց 16 ֆրանկ տուգանքի, և ընկերութեան գործունէութիւնը արգելուց: Դէպքը շատ խօսել տուց իւր վրայ: Կառավարութիւնը դատի ենթարկելով աստմպսիոնիստներին՝ կամեցաւ նոցա գալտնի արարքները երեան հանել—և նպատակին հասաւ:

ԹիիՐԲԻԱ: Սուլթանի փեսայ Մահմուդ-փաշա իւր երկու որդկերանցով գրապիրով և հրապարակախօս խոնի-Դանիշի հետ փախաւ Կ. Պոլսից, ըստ ոմանց՝ իբր պատկանող Երիտասարդ-թիւրքիայի կուսակցութեան, ըստ ալոց՝ իբրև անաջող միջնորդ անգլիացոց Փինանսիստների Բաշ-Դաշի երկաթուղալին գծի նկատմամբ: Մահմուդը երկու որդիների հետ շեկտ. 9(21)-ին Մարսէլ հասաւ շոքենաւով:

—Նոյ. 14-ին ձերբակալուցին պետական խորհրդի իրաւագիրական բաժնի նախագահ Սաիդ-բէլ, պետ. խորհրդի քաղաքացիական բաժնի անդամ Ֆէրդի-բէլ և չէլի ուլ իսլամի խորհրդի անդամ մուլա Ջիա. նոքա տարուցան իշիդ-քէօչի, դատուցան արտակարգ դատարանում, որ կազմել էին զինւ. մինիստրը, արտաքին գործ. մինիստրը, ռմբաձիգների գրոսմէյտէրը, պետ. խորհրդի նախագահը և չէլի ուլ իսլամը, և դատապարտուցան աքսորի: Ըստ ոմանց՝ դատապարտածները բանակցութեան մէջ են ելած սուլթանի մեծ որ

դու հետ, որին սուլթանը չի սիրում, ըստ ուրիշների՝ գահաժառանգ Ռէշադի հետ, նպատակ ունենալով սուլթանին գահալէժ անել:

ԳԵՐՄԱՆԻԱ:

Արտաքին առուտուրը 1860 թւականից շէս բարձրացել է 2<sup>1</sup>/<sub>2</sub> միլլիարդից 8<sup>1</sup>/<sub>2</sub> միլլիարդ մարկի (ուրեմն 10<sup>1</sup>/<sub>2</sub> միլլիարդ ֆրանկից աւելի): Այսպիսով ուրեմն այժմ Գերմանիան իւր արտաքին առուտուրով (ներմուծութիւնը և արտածութիւնը միասին) Ֆրանսիայից անց է կացել և համալսարհային շուկայում Անգլիայից վերջ բռնում է երկրորդ տեղը:

ԻՐԱՆԳԻԱՅԻ Երկու կուսակցութիւնը միանալով՝ պարագլուխ ընտրեցին Ջոն Ռէշմոնդին: Վերջինս կոչ արաւ իրլանդական ազգին, չափոնելով որ բուրերի դէմ մշտն պատերազմի ձախուղութիւնները չարմար առիթ են դալիս իրլանդական պատգամաւորներին ստիպելու ալ կուսակցութիւններին որ իրլանդիային շնորհւի ինքն վարութիւն, լուծւի հողային խնդիրը և այլն:

ԱՆԳՆԻԱ: Համալսարնների ժողովը բացակց գահական ճառով, որին ի պատասխան որակիք ուղերձին Ֆիցմորիսը առաջարկեց չափոնել տմգոնութիւն կառավարութիւնից՝ Հարաւ-Աֆրիկայի պատերազմի առիթով, որ այնքան անպարտասօր՝ Անգլիան կուիւ շարուցեց և պարտութիւններ կրեց: Մի քանի օր վիճաբանելուց չևրջ ժողովը 352 ձայնով ընդդէմ 139-ի մերժեց Ֆիցմորիսի առաջարկը:

ՉԻՆԱՍՏԱՆ: Ալրի կայսրուհին, որը իւր ձեռքն է առել ամբողջ կառավարութիւնը, հեռացրել է երկրասարդ կայսրին և սորա տեղ կայսր է հրատարակել իւր ազգականներից մի անչափահասին: Կայսրուհին վճառական կերպով սէակցիւ է սկսել՝ ամեն եւրոպական մտքերի դէմ, հրամայելով որ պետական ծառայութիւն մտնողները կրթած լինեն հին գլականութեամբ՝ Կոնֆուցիոսի ուղղութեամբ: Հրաման է որւած երկու վերանորոգիչներին մեծ վարձա սրութեամբ կառավարութեանն շանձնել կամ կենդանի կամ սպանւած:

† ՄԵԱՍԿՈՎՍԿԻՅ, Աւգոստ, պրոֆեսոր քաղաքա յնդիսութեան Լաչպցիցի համալսարանում, վախճ. Նոյ. 9-ին.:

† ՄԵՐԵՅԵԼԻ, Գէորգի Եֆիմովիչ, վրացի հրատարակախօս և հասարակական գործիչ (ընչիթիւ բանաստեղծ իշխ. Ակակիչ Մերեթելու հետ), կարելի է ասել, որ գլխաւոր ներկայացուցիչն էր վրա-հակական համալսարնութեան, որ նա քարոզում էր գրչով և գործով: Երբ, օրինակ, 1897-ի քաղաքային ընտրութիւններին վրացիք, Վելիչիօի ու իշխ. ձաւճաւաճէի քարոզածին համեմատ՝ առաջին ընտրութիւններին չընտրւելով, ալ ևս չըկամեցան քւարկուել, աչգպիսով ցոյց անելով հայերի դէմ, Գէորգիչ Մերեթելին չհետեց իւր ազգայիններին: Հանգուցեալը վրաց պարբերական մամուլի հիմնադիրներին է:

Ծնեց 1842-ին Քութալիսի Նահանգի Շորապան գաւառի Գորիս գիւղում. 1863-ին Պետերբուրգի համալսարանի քննադատական բաժինը աւարտելուց լեռով եկաւ հայրենիք, հիմնեց Գրոէբա լրագիրը, որը վարեց մինչև 1868-ը, չանձնելով այն Ս. Մեսխիին. ինքը սկսեց հրատարակել «Վիւշահան լրագիր»ը, ապա կրեքուլի ամսագիրը, որ շուտով ապա ուրիշներին չանձնեց. 1893-ին իւր ամուսնու անունով հրատարակուող կաւլի թերթի գլխաւոր աշխատակիցն ու ուղղութիւն տւողն եղաւ. թաղմանը ներկայ էր մեծ բազմութիւն և երեք շիա-կառք գարշարւած էին հարկւրաւոր պատկանելով:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐՔԵՐ

(Ուր թական չլայ—ներկայ տարւանն է)

- 1) ՏԷՐ-ՄԻՐԱՔԵՍԵՆՑ, Յովհ.—Դեռահասաների ազատ ընթերցանութիւնը. 190 չանձնարարելի և մերթելի գրքերի ցուցակով. Արտատպած Մուրճ ամսագրից, Թիֆլիս, տպ. Տ. Ռօթինեանցի, 60 կոպէկ:
- 2) ՇԱՆԹ.—Դերասանուհին. (վէպ). Արտատպած Մուրճ ամսագրից, Թիֆլիս, տպ. Տ. Ռօթինեանցի, 40 կոպէկ:
- 3) ԹԱԴԵՈՍԵԱՆՑ Քրիստոփորի Բանաստեղծութիւնները, Հելինակի պատկերով և կենսագր. ակնարկով: Հրատարակութիւն Գոշթնի: 1899. Մոսկւա, տպ. Ք. Բարխուդարեանցի. 20 կոպէկ:
- 4) ՇՈՎՐԵԱՆ (?) Մ.— Հայերը մարդարտնական և աշխարհազրական սեռակէտից: Արտատպած Արարատ ամսագրից: 1899. Վաղարշապատ, տպ. Մ. Ա. Ս. Էջմիածնի:
- 5) ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ, Ղաղարոս.— Շէլլի Զաւադ. (պատկեր քրդական կեանքից: Նմանութիւն), Թիֆլի, տպ. Կ. Մարտիրոսեանցի: Աղբիւր-Տարաղի հրատարակութիւն: Թիֆլիս, 1899. գին ?
- 6) ՏԱՂԱԻԱՐԵԱՆ, Դոքթ. Ն.—Բառացուցակ արտանմանց ու շեշտէից չարկութեանց ֆրանսերենէ ի հայ: Կ. Պոլիս, տպ. Կ. Մարթէոսեան. 5 յրուշ:
- 7) ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, Յարութիւն.— Մելիք-Բեգլար (պատմական պոէմա) Թիֆլի, տպ. Վրաց Հրատ. Ընկ., 10 կոպէկ:
- 8) ՏՈՒՍՏՈՑ, Լեւ.—Մանկութիւն և Պատանեկութիւն: Թարգմ. Պ. Պ.: Հրատ. Թ. Հ. Հ. Ընկ.: Թիֆլի, տպ. ՄՆ. Մարտիրոսեան. 1 ուրլի:
- 9) ԲՈՒԳՈՒՂԵԱՆ, Ա., բժիշկ.—Ինչ է անառակութիւնը: Ս. Պետերբուրգի տպ. «Տրուդ» ընկ., 5 կոպէկ:
- 10) ՅԸՂԻԻ.—Փառանձեմ կոմիտիա չորս արարւածով և վեց սպառկերով: Թիֆլի. 1899. տպ. Մ. Վարդանեանց. 1 ուրլի:
- 11) ՇՁԵԴՂՈՎ՝ից փոխադր. Սարգարեան-Արեւշատեան, Ա. Դամ.—Դոքտոր

- Թաթոս, կաթակ-վոդըլի 1 արարւածով: Թիֆլիս, 1900 թ. տպար. Տ. Ռօրեանցի. 20 կողէկ:
- 12) (ԳՐԻՄՄԻՅ ?)—Նօթը ազուա. հեքիաթ: (Պարկերազարդ), Հրատ. Թ. Հ. Հր. Ընկ.,—Թիֆլ. տպ. . . . . 40 կող.:
- 13) ՅԱՏՐՈՆ, գրական և թարգմանական հանդէս, 3-րդ տարւալ (1899 թ.) № 2. Հրատ. Ա. Թարխանեանց: Թիֆլ., տպ. Կ. Մարտիրոսեանցի: Տարեկան 2 դրքի գինն է 3 ռ.:
- 14) ПАНТЮХОВЪ, И. И. д-ръ—Щаорская котловина и ея окрестности. (Общій взглядъ. Природа. Люди. заключение). Тифлисъ, тип. К. Казловск. №40 կողէկ:
- 15) ТОТЪМІАНЦЪ, В.—Мощь кооперации. С. Петерб., тип. Скороходова, 20 կող.:
- 16) BASMADJIAN, M. K. J.—Une nouvelle inscription arméniaque ou vannique.
- 17) ՆՈՅՆԸ.—Une nouvelle inscription byzantine.
- 18) ՎՄՍԻՔԻԱՆԻՅ, Մ.—Армянскій календарь 1900 г. Тифл., типогр. Козловск. 20 կողէկ:

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿ:

Պարսկաստանի բաժանորդներին չադրուած ենք, որ այսուհետև Մուրճի №-ները իրենց շրկելու ևն ապահովցրած բանդերը չեն բերա համար Մուրճի խմբագրութիւնը չի պահանջում լաւելւածական վճար (որ ամեն բաժանորդից կանէր 1 ռ.—1 ռ. 20 կող.): Իսկ եղած առաջարկներին՝ լաւելւածական վճար ստանալ՝ մենք հրաժարուած ենք: Արտիկերն, վերջ ի վերջու, խմբագրութիւնն է պարտական բաժանորդներին թերթը ոչ միայն շրկել, այլ և տեղ հասցնել: Անցած 1899 թւականին Պարսկաստանի բաժանորդներից մենք ստացել ենք շատ գանգատներ աշգ. մասին: Երեի պարսկական պոստը հասել է ծաւրաւել անկարգութեան:

Վ.Ի.ՊԱՎԿՆԵՐ, Մուրճ №1899 թ. № 11—12, Գրախօսականի մէջ, էջ 1471, երկու սիւնակների վերջին տողերը պիտի ջնջել և 7-րդ տեղը դնել բաց մնացած տողեր. այն է, ձախ սիւնակի վերջին տուր պիտի լինի՝ «այնքան կաշկանդել է Բոչկնին, որ նա մէկ որդի ունենալով» և այլն: Իսկ աջ սիւնակի վերջին տուր տեղը դնել՝ «այնքան կաշկանդել է Բոչկնին, որ նա մէկ որդի ունենալով» և այլն:

---

Խմբագիր-հրատարակիչ՝ Ա.Ի.ՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

---

# ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԱՐՏԱՏՊԻԱԾ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻՑ

	Բ.	Կ.
1. ՊՈՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ. — «ՑԵՑԵՐ» (վէպ) . . . . .	1	—
2. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ (ՂՂՄԱՐԳԻ)՝ «Մանուկների մարտադուլի. գործարանների հիւանդուլիւնների» —		05
3. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկե- ների կեանքից . . . . .	1	—
4. ԼԷՑ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ). . . . .	—	50
5. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ» —	—	40
6. ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ. — «ԱՅՑ ԹԻՒՐՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» —	—	60
7. ՊՈՕՇԵԱՆՑ, ՊԵՐՃ. — «ԲՂԴԷ», վէպ . . . . .	1	20
8. ՓԱՓԱԶԵԱՆՑ, Վ. — «ԽԱԹ-ՍԱԲԱ» (հայ բռնան. կեանքից —		15
9. ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԿԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը —		50
10. , , , , բ. մասը —		75
11. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ, Յ. — «ՍԵՒ-ԼԵՈՆՅԻՔ» (տոհմ. պատկ.) —		15
12. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԳՐ. — «ՀԱՐԵՒԱՆՆԵՐ» . . . . .	—	03
13. , , «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» . . . . .	—	03
14. , , «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ» . . . . .	—	03
15. , , «ԾԱՆՐ ՔԱՐԸ» . . . . .	—	03
16. , , «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ» . . . . .	—	03
17. , , «ՄԵՐ ԻՆԶԸ ԿԸ ՊԱԿՍԻ» . . . . .	—	05
18. ՔԻՇՄԻՇԵԱՆՑ, ԱԼ. — «ԲՈՅՍՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ» . . . . .	—	10
19. ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ. — «ՄԻԿՐՈՖՆԵՐԸ» . . . . .	—	13
20. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ. — «ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ» —	—	10
21. ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ» . . . . .	—	15
22. ՎՐՈՅՐ, Մ. — «ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ» . . . . .	—	20

23. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ. — «ՀԻՊԵՆՏԻՍՄ», Մասն ա. . . . .	— 50
24. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅՑ, ԼԵՒՈՆ. — «ՏԻԳՐԱՆՈՒՀԻ» (գրամա). . . . .	— 50
25. ՇԻՐՎԱՆՁԱԴԵ. — «ԱՐՍԷՆ ԳԻՄԱՔՍԵԱՆ» . . . . .	1 50
26. ՍԵՆԿԵԻԻՉ, ՀԵՆՐԻԿ. — «ԱՌԱՆՅ ԴԱԽԱՆԱՆՔԻ» . . . . .	1 50
27. ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶ. — «ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱԻՈՐ ԴԷՊՔԵՐԸ» . . . . .	— 75
28. «ԱԳԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԱՆԴՐՈՒՆ», յառաջաբանով և ընտրութեամբ ՎՐՈՅՐԻ . . . . .	— 20
29. ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺ. Վ. — «ՀԻՊԵՆՏԻՍՄ», մասն բ. . . . .	— 50
30. ՂԱՐԱՋԵԱՆ, ԳԷՈՐԳ. — «ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՅՈՒՄԸ Արևմտեան Ներդրացումը և Ինտիպացում» . . . . .	— 50
31. ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳ. — «ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿ. ԻՐԱԻ. ՀԻՆ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» . . . . .	— 40
32. ՓԱՓԱՋԵԱՆ, Վ. — «ՏՈՒՐԻՍՏԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՅ» (պատ- կերներ) . . . . .	— 40
33. ՄԻՐԻՄԱՆԵԱՆ, ՅԱՐ. — ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱԻԵԼՈՒ «ԸՆՁԵՆԱ- ԻՈՐԸ» արձակ պատմած, Կենսագրութիւնով . . . . .	— 15
34. ՇԱՆԹ. — «ԴՈՒՐՍԵՅԻՆԵՐ», ՎԷՍ. . . . .	— 50
35. » «ԵՐԱՋ ՕՐԵՐ». . . . .	— 40
36. ՏԵՐ-ՄՐԱՔԵԱՆՅ, Յ. — «ԺՈՂՈՎՐ. ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ» . . . . .	— 25
37. ՋԱՔԱՐԵԱՆ, ԹԱԴԷՈՍ ԲԺ. — «ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱ- ՊԱՀՈՒԹԻՒՆ» . . . . .	— 20
38. ԲԱԲԿԵՆՅ, Գ. — «ՆՈՐԵԿ» (ՎԷՍ) . . . . .	— 70
39. ՓԱՓԱՋԵԱՆՅ, Վ. — «ԱՆՅԱԳԸ» . . . . .	— 15
40. ՇԱՆԹ. — «ՎԵՐԺԻՆ» (ՎԷՍ) . . . . .	— 60
41. ՀԱՆՐԻ ՀԱՅՆԷ. — «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՔԵՐԹ- ԻԱԾՆԵՐ» . . . . .	— 40
42. ՆԻԿ. ՄԱՐ. — «ՀԱՅ-ՎՐԱՅՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՆՅԵԱԼՈՒՄ» . . . . .	— 20
43. ԱՂԱՅԵԱՆՅ, Ղ. — «ԺԱՄԱՆԿԱԿԻՅ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ» . . . . .	— 20
44. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔԸ» յառ- վէսով . . . . .	1 —
45. ՇԱՆԹ. — «ԴԱՐՁ» . . . . .	— 40
46. ԱԳԵԼԵԱՆ. — «ՍԿԵՍՈՒՐԸ» (պատմածք). . . . .	— 20
47. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ ԼԵՒՈՆ. — «ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ	

ՊՈՒՄԱՆԵՐ՝. Գ/րբ Ա. . . . . — 50

48. ԴԵՄԻՐՃԵԱՆ ԳԵՐԵՆԻԿ.—ՃԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝. . . — 30

49. ՅԱԿՈԲԵԱՆ ՅԱԿՈԲ.—ՃԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝. . . — 30

50. ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑ, ՅՈՎՀ.—ՃԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱԶԱՏ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ, 190 յանձնարարելի և մերժելի գրքերի ցուցակով . . . . . — 60

51. ՇԱՆԹ.—ՃԵՐԱՍՍԱՆՈՒՀԻՆ՝ (վէս) . . . . . — 40

Երգիչ պ. Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆԻ ձեռնարկութեամբ, Պարիզ սկըսած է հրատարակել՝

### „ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ“

Հաւաքածոն, 6 գրքով, ձայնագրւած և թարգմանւած Եւրոպական լիգունելով (բացի հայերէնից՝ ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն, ռուսերէն, իտալերէն)։

Արդէն լոյս է տեսած առաջին գիրքը։

Բաժանորդավճարն է՝ 6 գրքինը 32 ֆրանկ, (10 ո., որ կարելի է վճարել մաս-մաս՝ առաջին գիրքն ստանալիս 4 ո., երկրորդը՝ 3, երրորդը՝ 3 ուրլի)։

Ամեն 2 ամիսը լոյս է տեսնելու 1 գիրք։

Դիմել՝ Paris. Direction des „Chants Populaires arméniens“, 18. Rue de Douai.

Բաժանորդ գրւել ցանկացողները կարող են դիմել նաև Մուլընի խմբագրութեան, որին լրկւած են բաժանորդական անդորրագրեր հրատարակութեան վարչութեան կողմից։

**ԱՂԲԻՐ** Ղեռահասների ամսաթերթ. բաժանորդագին **3** ռ.:

**ՏԱՐԱԶ** պարկերազարդ շաբաթաթերթ. բաժանորդագին **6** ռ.:

ՂԵԻՐԻ և ՏԱՐԱԶԻ բաժանորդագինը (Պարիզի մոդաներով ամիսը մի անգամ, և Հանդէս XIX դարու պրէմիայով) **10** ռ., արտասահման **18** ռ. (=50 Ֆր.):

Դիմել՝ Тифлисъ. Въ Редакцію „Агбуръ-Таразъ“.  
Tiflis. Red. des Agbur et Taraz.

**ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ**

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ

**ՏԱՐԵԿԱՆ ԵՐԿՈՒ ՍՏԻԱՐ ՀԱՏՈՐ**

Բաժանորդագին **3** ռ.

Դիմել՝ Тифлисъ. Ерванду Лалаянцъ.  
Tiflis. Ervand Lalayantz.

**„Թ Ա Տ Ր Ո Ն“**

Հանդէս, տարին 2 դիրք, բաժնորդավճարը **3** ռ.:

Դիմել՝ Тифлисъ. Александру Тарханянцъ.

## „ТИФЛИССКІЙ ЛИСТОКЪ“,

ЕЖЕДНЕВНАЯ ГАЗЕТА,

1900 года выходить въ увеличенномъ форматѣ


по слѣдующей, утвержденной правительствомъ программѣ: I. Приказы по военному и гражданскому управленіямъ Кавказа и Закавказья. II. статьи по внутреннимъ вопросамъ. III. Обзорніе иностранной политической жизни. IV. Научно-литературный отдѣлъ. V. Общая хроника: внутренняя и иностранная. VI. Библиографія. VII. Мѣстный отдѣлъ и корреспонденціи. VIII. Обширный справочный отдѣлъ.

Иллюстрированныя прибавленія къ газетѣ, посвященныя кавказовѣдѣнію и матеріаламъ исторіи Кавказа въ связи съ постепеннымъ развитіемъ въ краѣ гражданскихъ учрежденій, будутъ выходить попрежнему, не менѣе двѣнадцати номеровъ въ годъ.

По понедѣльникамъ и послѣпраздничнымъ днямъ подписчикамъ будутъ разсылаемы телеграммы.

Подписная цѣна остается безъ измѣненія, а именно: иногороднымъ: на годъ—7 руб., на 6 мѣсяцевъ—3 руб. 50 к., на 3 мѣсяца—2 руб., на 1 мѣсяць—1 руб.

Подписка принимается исключительно въ конторѣ изданія: Тифлисъ, Головинскій, № 3.





ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ,

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1900 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Ս Կ Ս Ի Ա Մ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ տարեկան 10 ուղբլի, կամ 30 ֆուանկի  
ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Սերգիեևսկայա փողոց, տուն № 6: Այլ քաղաքնե-  
րից՝ Тифлисъ. Въ Редацію журнала „МУРЧЪ“.  
Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue  
„MOURTCH“.

---